Աշոտ Ղուկասյան
Արսեն Ղուկասյան
Արմեն Ղուկասյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7

Մեթոդական ուղեցույց

Աշոտ Ղուկասյան, Արսեն Ղուկասյան, Արմեն Ղուկասյան

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7

Մեթոդական ուղեցույց

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

Երևան 2023

ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի՛ ուսուցիչներ

Գիտատեխնիկական վիթխարի թռիչքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հարաճուն ներդրման շորհիվ աճում է կրթության դերը ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում: Այն վերածվում է հասարակության առաջընթացի վճռական գործոնի, փոխվում են հասարակության ներկայացրած սոցիալական պատվերն ու պահանջները: Ուստի ժամանակի և հասարակության պահանջները բավարարելու, համաշարհային գործընթացներին ու զարգացումներին համաքայլ ընթանալու համար ՀՀ կատարվեցին խորքային, արմատական և համակարգային լուրջ բարեփոխումներ:

Այսօր ՀՀ փոխվել է կրթության կազմակերպումը, կառուցվածքը և բովանդակությունը: Անցում է կատարվել 12-ամյա դպրոցին: Փոխվել են հանրակրթական դպրոցի բոլոր երեք օղակների կրթադաստիարակչական խնդիրները, ուսումնական պլանները, չափորոշիչները, ծրագրերը, ուսուցչին և աշակերտներին ներկայացվող պահանջները, գնահատման համակարգը և այլն: Հաստատվել է «հանրենագիտություն» բնագավառում ընդգրկված առարկաների ցանկը: 5-12-րդ դասարաններում ուսումնասիրվում են «Իմ հայրենիքը» (5-րդ դասարան), «Իմ հայրենիքն ու աշխարհը» (6-րդ դասարան), «Հայոց պատմություն» (7-12-դասարանները):

7-րդ դասարանի հայոց պատմության մեթոդական ուղեցույց ստեղծվել է կրթության բնագավառի օրենսդրության և պատմության չափորոշչի հիմնական սկզբունքներին ու պահանջներին համապատասխան: Այն նպատակ ունի օգնելու պատմության ուսուցիչներին կազմակերպելու և անցկացնելու որակյալ կրթություն ապահովող ժամանակակից դաս: Ուղեցույցը բաղկացած է չորս բաժնից:

Առաջին բաժնում ներկայացվում է հանրակրթական պետական ու հանրակրթական հիմնական ծրագրի հայրենագիտական ուսումնական բնագավառի և առարկայական չափորոշչի և ծրագրի ընդհանուր բնութագիրը, խոսվում է կարողունակությունների, վերջնարդյունքների, բովանդակային բաղադրիչների, հիմնական գաղափարների, խաչվող հասկացությունների և այլնի մասին:

Երկրորդ բաժինն ունի տնտեսական բնույթ: Այստեղ ամբողջական և համակարգված պատկերացում է տրվում մանկավարժական ժամանակակից մոտեցումների, դիդակտիկական սկզբունքների, դասավանդման մեթոդիկայի, կառուցվածքի և 7-րդ դասարանի «-Հայոց պատմություն» առարկայի ուսուցման հետ կապված այլ խնդիրների մասին:

Երրորդ բաժինն ունի գործնական բնույթ: Նրանում տրվում են մեթոդական խորհուրդներ, մի շարք ծրագրային թեմաների վերաբերյալ բերվում են դասի պլանի, թեմատիկ պլանավորման նմուշ-օրինակ, տարբեր բնույթի հուշաթերթիկներ ռուբրիկներ, լրացուցիչ նյութեր, ուսումնամեթոդական նյութեր և այլն:

Չորրորդ բաժնում (հավելված) հատվածներ հանրակրթության պետական չափորոշչից և «հանրենագիտություն» բնագավառի առարկաների ուսուցման նպատակներին և վերջնարդյունքներին վերաբերող համապատասխան հատվածներ, առարկայական ծրագիր (հղում), ուսուցչին ուղղված առարկայական և մեթոդական գրականության և էլեկտրոնային գրականության ցանկերն են:

ԲԱԺԻՆ Ի. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ «ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲՆԱԳԱՎԱՌԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

7-րդ դասարանի «Հայոց պատմություն» առարկայի արդյունավետ դասավանդման համար խիստ կարևոր է, որ այն դասավանդող ուսուցիչներն ամբողջական պատկերացում ունենան հանրակրթական պետական չափորոշչի որակական պահանջների, հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնական բնագավառների և դրանց բովանդակության մասին: Այդ նպատակով անհրաժեշտ է համառոտ ներկայացնել դրանց՝ առարկային առնչվող բովանդակային հարցերը:

Հանրակրթական պետական չափորոշչում առանցքային նշանակություն ունեն կարողունակությունները և ակնկալվող վերջնարդյունքները:

Կարողունակությունները սովորողների գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ստեղծված իրավիճակների արդյունավետ արձագանքման ձևեր են: Չափորոշչում սահմանված են ութ կարողունակություններ, որոնք ապահովում են անհատի, հասարակության և աշխարհի միջև կապերը: Կարողունակությունները ձևավորվում են ուսումնառության ընթացքում ուսուցման և դաստիարակության կազմակերպման տարբեր ձևերի և ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով: Կարողունակությունների ձևավորմանն են ուղղված հանրակրթական հիմնական ծրագրերի վերջնարդյունքները: Այս վերջնարդյունքները ներկայացված են ըստ կրթական երեք աստիճանների՝ տարրական, հիմնական և միջնակարգ դպրոցների ու ուսումնական բնագավառների: Հանրակրթական հիմնական ծրագրի ընդհանրական ուսպլանում սահմանված են յոթ ուսումնական բնագավառներ (հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ, ԲՏՃՄ, հասարակագիտություն և այլն), որոնցից մեկը հայրենագիտությունն է: Ուսումնական բոլոր բնագավառների բովանդակությունը կազմված է չորս բաղադրիչներից՝ գիտելիքից, հմտությունից, արժեքներից և վերաբերմունքից:

«Հայրենագիտություն» ուսումնական բնագավառի չափորոշիչը

2023 թ. մարտի վերջին հաստատվեց «Հայրենագիտություն» ուսումնական բնագավառի չափորոշիչը: Այն բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. «Հայագիտություն» բնագավառի ուսուցման նպատակները՝ ըստ կրթական աստիճանների:
2. Հայագիտության բնագավառի ընդհանուր բնութագիրը:
3. Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:
4. «Հայրենագիտություն» բնագավառի բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները:
5. Հիմնական գաղափարները:
6. Խաչվող հասկացություններ:

7. Ուսումնական գործընթացին ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցություն:
8. Օգտագործված գրականության ցանկ:

Ինչպես ցույց են տալիս չափորոշչի բաժինները, ուսուցման ընթացքում խիստ կարևորվում են ուսումնառության հետ կապված գրեթե բոլոր հարցերը: Այս բանագավառի ուսուցիչները լուրջ աշխատանք պետք է կատարեն առարկաների նպատակների, վերջնարդյունքների, հիմնական գաղափարների, խաչվող (փոխանցվող) հասկացությունների ուղղությամբ: Դրանց պետք է ուղղված լինի նրանց ողջ գործունեությունը: Այժմ կփորձենք ուսուցիչներին համառոտակի ներկայացնել նշված բաժինների բովանդակությունը:

«Հայրենագիտություն» ուսումնական բնագավառում ներկայացված են.

ա) նպատակը.

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայրենագիտություն» բնագավառի ուսումնասիրման նպատակը պետականամետ մտածողությամբ օժտված, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարությունը պատմության խորապատկերում գիտակցող, ազգային ու համամարդկային արժեհամակարգ կրող ազնիվ, հայրենասեր և պատասխանատու քաղաքացու ձևավորումն է:

բ) ներառված առարկաները.

«Հայրենագիտություն» ուսումնական բնագավառը ներառում է

1. հանրակրթական դպրոցի 5-12-րդ դասարաններում ուսումնասիրվող հետևյալ առարկաները.

5-րդ դասարան - «Իմ հայրենիքը»,

6-րդ դասարան - «Իմ հայրենիքն ու աշխարհը»,

7-12-րդ դասարաններ - «Հայոց պատմություն»:

Նրանցում նշվում են նաև առարկաների բովանդակությունը կազմող թեմաները:

2. Ակնկալվող վերջնարդյունքները.

Բնագավառի ակնկալվող վերջնարդյունքները տրված են ըստ կրթական աստիճանների և առարկաների (տե՛ս հավելված, միայն «Իմ հայրենիքը» առարկայի վերջնարդյունքները, բաժին 3, 15-22 կետեր):

բ) հիմնական գաղափարը

«Հայրենագիտություն» բնագավառի բովանդակությունը ձևավորված է հետևյալ գաղափարների հենքի վրա.

- Անհատ և պետություն,
- Ինքնորոշում և պայքար,
- Ինքնություն,
- Համակեցություն,

Նշված հիմնական գաղափարները հստակեցվում և կոնկրետացվում են ենթահասկացությունների միջոցով, որոնցից են՝ հայրենիք, մշակույթ, արժեհամակարգ, կրոն, դավանանք, հասարակություն և այլ հասկացություններն, իրենց հերթին Երրորդ մակարդակում 2-րդ ենթահասկացությունները տրոհվում են բովանդակային պարզ ու կոնկրետ բաղադրիչ տարրերի: Այսպես «ինքնություն» հիմնական գաղափարում առանձնացվում են «հայրենիք», «մշակույթ», «արժեհամակարգ», «կրոն և դավանանք» 2-րդ ենթահասկացությունները: Իսկ ասենք օրինակ՝ «Իմ հայրենիքը» թեմայի ուսումնասիրման ժամանակ «հայրենիք» ենթահասկացությունը տրոհվում է բովանդակային պարզ բաղադրիչների և համապատասխանեցվում է փոքր հայրենիքին, մարզին, բնակավայրին, գյուղին, քաղաքին: Պետք է նկատի ունենալ, որ հաճախ հնարավոր չի լինում այդ համապատասխանեցումը, իսկ երբեմն էլ ենթահասկացությունները կարող են վերաբերել մի քանի հիմնական հասկացության:

Հիմնական գաղափարները ուսումնասիրվում են պարուրաձև՝ 5-րդ դասարանում սովորողների արդեն ձևավորված նախնական պատկերացումների վրա, իսկ 7-9-րդ և 10-12-րդ դասարաններում՝ «Հայոց պատմություն» առարկայի շրջանակներում ուսուցանվող ուսումնական նյութի աստիճանական ընդլայնման և խորացման հիման վրա:

դ) Ուսումնառության հիմքում դրված մոտեցումներ

«Հայրենագիտություն» բնագավառում մշակվել են շուրջ մեկ տասնյակ մոտեցումներ, որոնք դրվել են նրանում ներառված «Իմ հայրենիքը», «Իմ հայրենիքն ու աշխարհը», «-Հայոց պատմություն» առարկաների ուսումնառության հիմքում:

Ուսումնառության այդ մոտեցումները հիմնված են.

1. Հասկացությունների վրա:
2. Ուսումնական նախագծերի իրականացման վրա:
3. Տարբերակված ուսուցման և համընդհանուր ներառման վրա:
4. Ինքնուրույն–անհատական աշխատանքի վրա:
5. Խնդրահարույց հարցերի հետազոտության վրա:
6. ՀՊՁ-ով սահմանված առանցքային կարողունակությունների զարգացման վրա:
7. Հաղորդակցական-համագործակցային հմտությունների զարգացման վրա:
8. Քննադատական, վերլուծական, հետազոտական և ստեղծագործական մտածողության զարգացման վրա:
9. Արժեհամակարգի ու դիրքորոշումների ձևավորման վրա:

ե) Խաչվող հասկացություններ

Արագ փոփոխվող աշխարհում խիստ կարևորվում է աշխարհի մասին ընդհանրական, միասնական ու ամբողջական աշխարհայացք ունենալը: Այդ նպատակով հանրակրթական հիմնական ծրագրի բոլոր ուսումնական բնագավառների չափորոշիչներում ներառվել են խաչվող հասկացություններ: Խաչվող հասկացություններն այն ընդհանրական փոխանցվող հասկացություններն են , որոնք սովորողների մեջ ձևավորում են աշխարհի մասին համապարփակ և գիտականորեն հիմնավորված պատկերացումներ: Այդ խաչվող

առանցքային հասկացությունները միաժամանակ տեսակետներ կառուցելու լավագույն միջոցներն են: Առաջարկվում են հետևյալ խաչվող հասկացությունները.

1. Օրինաչափություն
2. Պատճառ – հետևանք
3. Զարգացում
4. Կառուցվածք և գործառույթ
5. Ժամանակ և տարածություն
6. Համակարգ
7. Համաշխարհայնացում
8. Կայունություն և փոփոխություն
9. Անհատներ և հարաբերություններ
10. Անհատական և մշակութային արժեհամակարգ

զ) «Հայրենագիտություն» բնագավառում ներառված առարկայական ծրագրերը

«Հայրենագիտություն» բնագավառի բովանդակությունը կոնկրետացվում է առարկայական ծրագրերով: Ինչպես արդեն ասվել է, «Հայագիտություն» բնագավառի չափորոշչում ներկայացված է առարկայական ծրագրերի ընդհանուր բնութագիրը:

5-րդ դասարանի «Իմ հայրենիքը» առարկայի ծրագիրը ներառում է հայ ժողովրդի ծագումնաբանության, հայրենիքի, ազգային կյանքի, կենցաղի, մշակույթի, ավանդապատումների, հայոց քրիստոնեական արժեհամակարգի, «Սասունցի Դավիթ» էպոսի, հասարակության վրա անհատի դերի և ազդեցության վերաբերյալ և այլ թեմաներ:

6-րդ դասարանի «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկայի ծրագիրը ներառում է քաղաքակրթությունների պատմության հնագույն շրջանը՝ ներառելով քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական պատմությունը:

7-9-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրն ընդգրկում է հայ ժողովրդի ծագումնաբանությունը, հայոց քաղաքակրթության ձևավորման ու զարգացման պատմաաշխարհագրական միջավայրի Ք.ծ.ա. 4-րդ հազարամյակից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածի պատմությունը:

10-12-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագրում ներառված են «պետականություն», «ազատագրական պայքար» և «նորարարություն» բովանդակային բաղադրիչները:

«Իմ հայրենիքը» և «Իմ հայրենիքն ու աշխարհը» առարկաների ծրագրերը կառուցված են բովանդակային (թեմատիկ) հաջորդականությամբ, առասպելներից մինչև իրական պատմական կերպարներ ու բուն պատմություն:

7-9-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում ընկած է ուսումնասիրության գծային մոդելը՝ իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությամբ: Այս մոդելում գործածվում են քաղաքակրթական և ֆորմացիոնային սկզբունքները:

10-12-րդ դասարանների «Հայոց պատմություն» առարկայի ծրագրի կազմման հիմքում դրվել է մի քանի առանցքային բովանդակային բաղադրիչների (պետականություն,

ազատագրական պայքար, նորարարություն) խորությամբ յուրացումը, որն իրականացվում է պատճառահետևանքային կապերի վերհանմամբ և քննադատական վերլուծությամբ:

է) Առարկայական ծրագրերի առանձնահատկությունները

Առարկայական ծրագրերը, որոնք մշակվել են «Հայրենագիտություն» բնագավառի չափորոշչի հիման վրա, համապատասխանում են ժամանակակից դիդակտիկայի սկզբունքներին (մատչելիություն, պարզից դեպի բարդ, տարիքային և անհատական առանձնահատկություններ), գիտության և մշակույթի ժամանակակից նվաճումներին:

Առարկայական ծրագիրը նորմատիվային փաստաթուղթ է, որը ներառում է ուսումնական առարկայի՝

- նպատակը,
- առարկայի ընդհանուր բնութագիրը,
- ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները,
- բովանդակության կառուցման հիմնական սկզբունքները,
- ժամաքանակի բաշխումը,
- թեմաները և դրանց բովանդակությունը,
- թեմաների ուսումնառության ակնկալվող արդյունքները,
- վերջնարդյունքների գնահատումը:

Նկատի ունենալով «հայրենագիտություն» բնագավառի չափորոշիչը, դժվար չէ նկատել, որ, ի տարբերություն նախկին ծրագրերի բովանդակության առարկայակենտրոն մոտեցման, նոր ծրագրերը միտված են դեպի ինտեգրված բովանդակությունը: Այդ են վկայում խաչվող հասկացությունները և միջառարկայական կապերը, որոնք առանցքային տեղ են գրավում առարկայական ծրագրերում:

Խաչվող հասկացությունները, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար, օգնում են սովորողներին միավորելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները՝ վերածելով դրանք ամբողջացման լավագույն միջոցի:

Միջառարկայական կապերը նույնպես հանդես են գալիս որպես ուսումնական առարկաների բովանդակությունը միավորող, ամբողջացնող և ինտեգրումն ապահովող կարևոր միջոց: Միջառարկայական կապերն իրականացվում են ցանկացած թեմայի դասավանդման ժամանակ: Միջառարկայական կապերի միջոցով անցկացվում են զուգահեռներ տարբեր առարկաների բովանդակության մեջ առկա գաղափարների, երևույթների և փաստերի միջև, բացահայտվում են նրանց անխզելի կապերը և փոխկապակցվածությունը:

Նոր ծրագրերի առանձնահատկություններից է նաև այն, որ դրանց մեջ տրված են յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման նպատակները, դրանցից բխող վերջնարդյունքները և ուսումնական գործունեության ձևերը, որոնք մեծապես կարող են օգնել ուսուցչին արդյունավետ կազմակերպելու ուսուցման գործընթացը:

ԲԱԺԻՆ II. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1.Հայոց պատմության դասընթացի տեղն ու դերը

Ճիշտ է ասված, որ պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա պատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացման բարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ: Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը և ոտք է դնում արդեն նոր հազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ, իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելու ու զորեղացնելու անսասան վճռականությամբ: Այսպես, ժամանակների հոլովույթի մեջ է գոյացել մեր ժողովրդի պատմությունը, որը պետք է իմանա յուրաքանչյուր հայ մարդ, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ տարիքից, զբաղմունքից և ապրելու վայրից: Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում, օտարության մեջ թե հայրենիքում, հայոց պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն: Նրանում է անթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության կերպն ու խորհուրդը: Առանց հայոց պատմության իմացության անհնար է ազգի լիիրավ անդամ կոչվել, որովհետև պատմությունը ոչ միայն ժողովրդի անցած ուղին, այլև նրա միսն ու արյունը, հողն ու ջուրը, նրա կերտած-ստեղծածը, նրա ոգին ու հոգեբանությունը, բնավորությունն ու խառնվածքն է: Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին:

Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն:

Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի ու հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին:

2. Հայոց պատմության դասընթացի ժամաքանակը և կառուցվածքը

Հայոց պատմության իմացության հիմքերը դրվում են դպրոցում: Որպես ուսումնական առարկա Հայոց պատմությունն իր պատշաճ տեղն ունի հանրակրթական դպրոցում: Հայոց պատմության ուսումնասիրումը սկսվում է 7-րդ դասարանից և շարունակվում մինչև 12-րդ դասարանը ներառյալ:

Միջնակարգ հանրակրթական դպրոցի 7-րդ դասարաններում «Հայոց պատմություն» առարկային շաբաթական հատկացվում է 3-ական ժամ, տարեկան՝ 102 ժամ: 7-րդ դասարանների Հայոց պատմության դասընթացը կառուցված է թեմատիկ ժամանակագրության սկզբունքով և ընդգրկում է հայ ժողովրդի համակարգված և ամբողջական պատմությունը Ք.ծ.ա III հազարամյակից մինչև XI դ. կեսերը: Հայոց պատմության ուսուցումը պետք է տարվի կենդանի ու գրավիչ, պարզ ու մատչելի ձևով՝ դեպքերի և իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությամբ: Նրանում պետք է լուսաբանվեն մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցած հիմնական դեպքերն ու իրադարձությունները, կարևոր երևույթներն ու գործընթացները, վեր հանվեն նրա կողմից հազարամյակների ընթացքում ստեղծված հոգևոր ու նյութական գանձերն ու հարստությունները:

3. Հայոց պատմության դասընթացի կապը համաշխարհային պատմության հետ

Հայոց պատմությունը կազմում է համաշխարհային պատմության մի օղակը: Ուստի այն պետք է ուսումնասիրվի ընդհանուր պատմության հետ միասնության մեջ: Այդ միասնությունը կարելի է ապահովել.

1. միևնույն դարաշրջանի պատմական դեպքերի ու երևույթների համաժամանակյա ուսուցման միջոցով,

2. ընդհանուր պատմական հասկացությունների ու գաղափարների յուրացման միջոցով, որոնք կկոնկրետացվեն հայոց պատմության փաստական նյութի վրա,

3. համաշխարհային դեպքերի և իրադարձությունների (համաշխարհային պատերազմներ, մշակույթ և այլն) միացյալ ուսումնասիրման միջոցով,

4. ներառարկայական կապերի մշտական իրականացման միջոցով,

5. ներածական դասերի, ընդհանրացնող և ամփոփիչ կրկնությունների միջոցով:

Պատմական երկու դասընթացների կապն ու հիմնական գծերի համեմատումը հնարավորություն է ստեղծում ձևավորելու գիտելիքների ամբողջական համակարգ համաշխարհային պատմության վերաբերյալ, պարզելու մարդկության պատմության ճակատագրի ընդհանուր կողմերը և առանձնահատկությունները, որոշելու մեր երկրի տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ, նրա ավանդը մարդկային քաղաքակրթության ստեղծման ու զարգացման գործում:

4. Հայոց պատմության դասընթացի ուսուցման նպատակը և խնդիրները

Ելնելով առարկայական նոր չափորոշչով ու ծրագրով սահմանված նպատակներից ու խնդիրներից (տես՝ IV բաժին)՝ ուսուցչին օգնելու համար, այստեղ դրանք ավելի պարզաբանվում և կոնկրետացվում են: «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման գլխավոր նպատակը ազգային գիտակցություն ունեցող, ազգային արժեհամակարգով դաստիարակված ազատ, գիտակից անհատի, հայ մարդու ու քաղաքացու ձևավորումն է: Դասընթացը միաժամանակ նպատակ ունի լուծել կրթադաստիարակչական և զարգացման այլ կարևոր խնդիրներ.

1) Սովորողներին զինել Հայոց պատմության հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակներն ընդգրկող ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելի պես պետք է անցնեն ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը և դրանց վերաբերող փաստերը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր և համակողմանի իմացությունը կօգնի մեր հանրապետության ապագա քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2) Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:

3) Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների ու համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, ժողովրդի հանճարով ստեղծված պատմամշակութային կոթողներին կվեհացնի սովորողների ոգին, սեր կառաջացնի գեղեցիկի նկատմամբ, կսովորեցնի կապվել իր նախնիների ստեղծագործական ավանդներին:

4) Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը, վեր հանել շինարարական տաղանդի ու արարումների լավագույն դրսևորումները: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ: Դաստիարակել մարդկային-բարոյական այնպիսի որակներ ու արժանիքներ, ինչպիսիք են բարությունը, ազնվությունը, մաքրությունը, անկեղծությունը, համբերատարությունը, հանդուրժողականությունը և համագործակցությունը:

5) Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են կառուցել, ընտանիք կազմել, սնվել ու հագնվել, ուրախացել ու տխրել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային

արմատներին ու ակունքներին: Ազգային կենարար արմատներից սնվելը կօգնի նրանց ավելի ուժեղ ու ամուր կանգնել հայրենի հողի վրա, զգալ հայրենիքի ուժն ու զորությունը:

6) Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Տալ նրանց համակողմանի բնութագիրը և մարդկային նկարագիրը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումները և իդեալը:

7) Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից, կարծիքների ու տեսակետների, մտքերի ու գաղափարների բախումից:

8) Դաստիարակել ջերմ հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակում ծառայելը պատվի գործ է: Դաստիարակել հայրենիքին անձնազոհ նվիրվելու, այն կյանքի գնով պաշտպանելու կամք ու վճռականություն:

9) Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը: Ցույց տալ հայ ժողովրդի տեղն ու խաղացած դերը քաղաքակիրթ աշխարհում:

10) Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11) Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12) Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն:

13) Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ: Առաջ բերել մարդկության առջև ծառացած հիմնահարցերի լուծման գործում իրենց ավանդն ունենալու ձգտում և ցանկություն:

14) Զարգացնել սովորողների ճանաչողական ընդունակությունները, տրամաբանական և ստեղծագործական մտածողությունը, համագործակցային, հաղորդակցական և ինքնուրույն գործունեության կարողությունները և հմտությունները.

- խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքները ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները,
- մշակել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու և դրանք մշակելու կարողություններ,
- ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու կարողություններ,

- զարգացնել ուսումնառության ընթացքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու, անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողությունները և հմտությունները,
- զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակները և կամային որակները (լսողություն, տեսողություն, ուշադրություն, հիշողություն, կամք, համառություն, հույզեր), մտավոր գործողություններ(համեմատում, համադրում, ընդհանրացում, համակարգում և այլն):

5. Հայոց պատմության նոր դասագիրք

Դասագիրքը սովորողների բարեկամն է ու զրուցակիցը, նրանց հիմնական գիտելիքների աղբյուրը: 7-րդ դասարանի դասագիրքն ընդգրկում է հայոց պատմության հիմնական դեպքերն ու իրադարձությունները Ք.ծ.ա III հազարամյակից մինչև XI դ. կեսերը: Դասագրքին ներկայացվող պահանջները նրանում արտահայտված են միավորված ձևով և հաշվի են առնվել 11–12 տարեկան աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

7-րդ դասարանների հայոց պատմության դասագիրքն ունի պարզ և կայուն կառուցվածք: Դասագիրքը բաղկացած է տեքստային և արտատեքստային բաղադրատարրերից, կողմնորոշման և մեթոդական մասերից: Տեքստային բաղադրիչն ընդգրկում է թեմայի հիմնական բովանդակությունը՝ դեպքերի ու երևույթների շարադրանքը: Արտատեքստային բաղադրիչների շարքին են դասվում փաստաթղթերը, լրացուցիչ նյութերը, նկարները, լուսանկարները, քարտեզները, սխեմաները, աղյուսակները և այլն: Սրանց նպատակն է լրացնել տեքստի բովանդակությունը, նոր տեղեկություններ տալ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ: Մեթոդական ապարատի մեջ մտնում են հարց-առաջադրանքները, թեմաների ամփոփումները: Մեթոդական տեսակետից շատ կարևոր են հարցերն ու առաջադրանքները, որոնք հիմնականում ուղղված են սովորողների կողմից դասագրքի բովանդակության յուրացմանը, սովորել սովորելուն, մտածողության զարգացմանը, կարծիքների ազատ արտահայտման և կողմնորոշմանը: Դասագիրքն ունի հարուստ լրացուցիչ նյութեր, տեսանյութեր, «Գիտե՞ք, որ...» վերնագիրը կրող հետաքրքաշարժ կարճ տեղեկություններ, որոնք դրված են դասագրքի QR ծածկագրերի տակ:

Սովորողների համար չափազանց օգտակար են նաև դասագրքի կողմնորոշման ապարատը, տեքստը կառուցվածքային և բովանդակային միավորների բաժանելը և ցանկը:

6. Հայոց պատմության դասավանդումը և ուսուցիչը

Հայոց պատմության դասընթացի բովանդակության ակտիվ յուրացումը կախված է ուսուցչից, նրա պատրաստվածության աստիճանից, ուսուցման կազմակերպման ձևերից ու մեթոդներից, ինչպես նաև ուսուցման գործընթացում ուսուցչի ու սովորողների ակտիվ

փոխհարաբերություններից: Սկսենք վերջից: Նախկինում ուսուցիչն էր կրթության բովանդակության հիմնական կրողն ու գիտելիքների հաղորդման գլխավոր աղբյուրը: Նա հանդես էր գալիս որպես մանկավարժական ներգործության միակ սուբյեկտ: Սովորողը դիտվում էր որպես ուսուցչի ուսումնական գործունեության օբյեկտ, զուրկ ինքնուրույնությունից: Նա լսում էր ուսուցչի խոսքը, սովորում նրա պատմածը և նույնությամբ վերարտադրում ու վերադարձնում նրան: Սովորողներին պասիվության դատապարտող այս մոտեցումը գրեթե անհնար կդարձնի ժամանակակից ուսուցումը, եթե ուսուցիչն ուսումնական գործընթացում չհրաժարվի իր արտոնյալ վիճակից և սովորողների հետ փոխհարաբերությունները չկարգավորի նոր հիմունքներով:

Սովորողը պետք է հանդես գա որպես ուսումնական գործունեության սուբյեկտ, այսինքն՝ ակտիվ, ինքնուրույն գործող և ճանաչող անձ, որն իր վրա է կրում ոչ միայն ուսուցչի մանկավարժական ներգործությունը, այլև ինքն իր նկատմամբ դառնում է սուբյեկտ: Այս կերպ սովորողը միաժամանակ ներգործում է ուսուցչի վրա՝ մղելով նրան ուսումնական աշխատանքի նոր ձևերի ու հնարների որոնման: Այսպես ուսուցումը դառնում է ուսումնական գործունեության երկու սուբյեկտների (ուսուցչի ու սովորողի) փոխհարաբերության և փոխազդեցության արդյունք: Գիտակցելով իր դերի ու տեղի փոփոխությունն ուսուցման գործընթացում՝ ուսուցիչը պետք է իր բոլոր ջանքերը և մեթոդական զինանոցը նպատակամղի սովորողի ճանաչողական ունակությունների, ստեղծագործական մտածողության զարգացմանը, նրանց ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը: Նրա գլխավոր խնդիրը պետք է լինի ճանաչել սովորողին, տեսնել և բացահայտել նրա ընդունակությունները, հակումներն ու հետաքրքրությունները, կարողանալ դրանք ըստ ամենայնի զարգացնել:

Սովորողի վերածվելն ուսումնական գործունեության սուբյեկտի պահանջում է ուսուցման կենտրոնում դնել ոչ այնքան գիտելիքների ձեռքբերումը, որքան նրա անձի ձևավորումն ու զարգացումը: Սովորողի անձի ձևավորման ու զարգացման, նրա ի վերուստ շնորհների բացահայտման լավագույն ուղին ներքին ազատությունն է, որը դրսևորվում է ինքնուրույնության, ակտիվության, նախաձեռնության ու ազատ գործունեության մեջ: Սովորողն այնքանով է ազատ, որքանով ուսուցչի գործունեությունը չի սահմանափակում գիտելիքների ձեռքբերման ու զարգացման նրա պահանջմունքները և հնարավորությունները:

Այս ամենով հանդերձ հայոց պատմության ուսուցիչը պետք է դառնա ազգային ոգու կրողը, ապահովի սովորողի մեջ ազգային բնավորություն, նպաստի նրա խառնվածքի ու նկարագրի ձևավորմանը:

7. Հայոց պատմության ուսուցման ձևերը

7-րդ դասարաններում Հայոց պատմության դասընթացի ուսուցման կազմակերպման հիմնական ձևը եղել ու մնում է դասը (այն ամրագրված է նաև կրթակարգում): Դասը սովորողների հաստատուն կազմի հետ տարվող և որոշակի ժամաքանակով սահմանափակված ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմնական օղակն է: Սակայն դասը չի բացառում ուսուցման այլ ձևերի՝ դասախոսությունների, սեմինարների,

գործնական պարապմունքների և ուսումնական բանավեճերի, պրակտիկումների, սովորողների կոնֆերանսների, հարցազրույցների, կոնսուլտացիաների և էքսկուրսիաների (ցուցադրումներ) կազմակերպումը:

Պատմության դասը կառուցվում է պրոբլեմային-ժամանակագրական սկզբունքով: Ժամանակի յուրաքանչյուր հատվածի դեպքերն ու երևույթները ներկայացվում են միասնության մեջ, իսկ օրենքների ու օրինաչափությունների միջև եղած փոխադարձ կապերը հաստատվում են դասից դաս՝ ըստ բովանդակության: Այս դեպքում մենք գործ ունենք պատմության դասերի մի շարք համակարգերի հետ, որտեղ առավելապես քննարկվում են.

ա) հասարակության տնտեսական կյանքի հարցերը իրար հաջորդաբար փոխարինող պատմական դարաշրջաններում,

բ) հասարակության սոցիալ-քաղաքական կյանքի հարցերը դարձյալ իրար հաջորդաբար փոխարինող պատմական դարաշրջաններում,

գ) պատմական դարաշրջանների պատմամշակութային բովանդակությունը:

Այս համակարգերից յուրաքանչյուրը բաղկացած է որոշակի քանակությամբ դասերից, որոնք հաճախ իրարից բաժանվում են ժամանակի մեծ տևողությամբ: Դրա համար ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ որոշել յուրաքանչյուր դասի տեղը ոչ միայն տվյալ, այլ նաևմյուս թեմաներում ու ողջ դասընթացում: Այսպես, «Բագրատունյաց թագավորության տնտեսությունը հասարակական-հարաբերությունները, առօրյա կյանքն ու կենցաղը» դասին այդ նյութի ուսուցումից առաջ ուսուցիչը պետք է կազմակերպի ընդհանուր հարցազրույց շատ ավելի վաղ անցած «Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը Հայաստանում» դասի շուրջ, նպատակ ունենալով սովորողների հիշողության մեջ վերականգնել խոշոր հողատիրության, նրա առանձնահատկությունների, տնտեսության ճյուղերի, քաղաքների զարգացման վիճակի մասին գիտելիքները, որոնք հիմք և ելակետ պետք է դառնան IX-XI դարերում տնտեսական կյանքի զարգացման նոր հիմնախնդիրների յուրացման համար: Նույն ձևով պետք է կազմակերպել նաև հասարակական կյանքի մյուս հիմնահարցերին նվիրված դասերի համակարգը:

Ինչ վերաբերում է Հայոց պատմության դասերի տիպավորմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ մեթոդական գրականության մեջ լայն տարածում են գտել դասի հետևյալ տիպերը.

ա) համակցված (կոմբինացված) դաս,

բ) նոր նյութի ուսումնասիրման դաս,

գ) նոր նյութի քննարկման դաս,

դ) գիտելիքների կիրառման և կարողությունների ու հմտությունների ձևավորման դաս,

ե) գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդհանրացման և համակարգման դաս,

զ) գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամփոփիչ կրկնության և ընդհանրացման դաս:

Կան պատմության դասերի դասակարգման նաև այլ տարբերակներ: Դասը բաղկացած է արտաքին կառուցվածքից (մակրոկառուցվածք) և ներքին կառուցվածքից (միկրոկառուցվածք): Մակրոկառուցվածքը պարունակում է.

ա) կառուցման տրամաբանությունը, այսինքն՝ թե ինչ հաջորդականությամբ են դասի փուլերը մտնում ուսուցման գործընթացի մեջ,

բ) կապերը, այսինքն՝ թե ինչպես են դասի փուլերը կապված միմյանց հետ:

Դասի մակրոտարրերից են դասի նպատակի որոշումը, զգայական կենսափորձի և հենակետային գիտելիքների արդիականացումը (հիշողության մեջ վերականգնումը), ուսումնական գործունեության խթանումը, սովորողների դասի նպատակների, խնդիրների հայտնումը, նոր նյութի ուսումնասիրումը, նոր նյութի ամրապնդումը, գնահատումը, անդրադարձը (հետադարձ կապի ապահովումը) ամփոփումը, տնային առաջադրանքը և այլն:

Դասի թվարկված մակրոփուլերը համեմատաբար կայուն են. դասի մակրոփուլերի մյուս մասը՝ գիտելիքների իմաստավորումը, ընդհանրացումը, նոր գիտելիքների յուրացումը, սովորական պայմաններում գիտելիքների կիրառումը, կարողությունների և հմտությունների ստեղծագործական կիրառումը և այլն, կայուն չէ և կարող է փոփոխվել տարբեր դասատիպերի կառուցվածքում:

Դասի միկրոտարրերը դիդակտիկական մասնավոր խնդիրների լուծման եղանակներից են, որոնք նախատեսում են, թե ուսուցման ինչ միջոցներ, մեթոդներ և մեթոդական հնարներ են անհրաժեշտ և դրանք ինչպիսի հաջորդականությամբ պետք է օգտագործվեն դասի յուրաքանչյուր մակրոփուլում: Օրինակ, համակցված դասի 1-ին՝ տնային առաջադրանքի ստուգման մակրոփուլում ուսուցիչը կարող է առաջարկել ծավալուն պատասխաններ պահանջող հարցեր, կարող է դասարանի հետ անցկացնել ընդհանուր զրույց կամ էլ առաջարկել դասագրքի տեքստի պլանի կազմում և այլն:

Պատմության դասի կառուցվածքը քարացած չէ և կարող է փոփոխվել: Դասի կառուցվածքը կախված է.

ա) դասի նպատակից և դիդակտիկական խնդիրներից,

բ) ուսումնասիրվող նյութի բովանդակությունից,

գ) կիրառվող մեթոդներից ու մեթոդական հնարներից,

դ) ուսուցման գործընթացում դասի տեղից,

ե) սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից,

զ) դասարանի և կոնկրետ սովորողների պատրաստվածության աստիճանից,

է) ուսումնական աշխատանքի իրականացման կոնկրետ պայմաններից (կաբինետի առկայություն, ուսուցման միջոցներ և այլն),

ը) ուսուցչի ստեղծագործական աշխատանքից և մանկավարժական վարպետությունից:

7-րդ դասարանում այսօր պատմության ուսուցիչների մեծամասնության շրջանում, ամենատարածված դասատիպը համակցված (կոմբինացված) դասն է (նկատվում է միտում, որ այս դասատիպն աստիճանաբար զիջում է իր դիրքերը): Համակցված դասը նման է նոր նյութի ուսումնասիրման դասին և քիչ է տարբերվում նրանից: Գլխավոր տարբերությունն այն է, որ նոր նյութի ուսումնասիրման դասը գրեթե չունի տնային

առաջադրանքի ստուգման փուլ, իսկ համակցված դասի մեծ մասը նվիրված է տնային առաջադրանքների և գիտելիքների ստուգմանը: Համակցված դասն իր մեջ զուգակցում է ուսուցման գործընթացի գրեթե բոլոր հիմնական օղակները՝ տնային առաջադրանքի ստուգում, ավելի վաղ յուրացրած գիտելիքների ստուգում, նոր նյութի ուսումնասիրում՝ նրա ընկալում և նախնական ըմբռնում, գիտելիքների ամրապնդում, իմաստավորում, ընդհանրացում և համակարգում, դասի ամփոփում և տնային հանձնարարություն:

Համակցված դասի հետ սերտորեն կապված է նոր նյութի ուսումնասիրման դասատիպը: Այս դասատիպն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի ուսումնասիրման ենթակա նյութի կարևորությունը և բովանդակության առանձնահատկությունները, նրա ծավալը և սովորողների տարիքը: Դասի բովանդակությունը դասագրքի տեքստն է, որի ուսումնասիրմանն էլ նվիրվում է գրեթե ամբողջ ժամանակը: Ուսուցիչը հայտնում է դասի թեման, առաջարկում է սովորողներին անհատապես կարդալ համապատասխան տեքստի վերնագիրը դասագրքում: Այնուհետև ուսուցիչը սկսում է զրույց թեմայի շուրջ՝ նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած հենակետային գիտելիքները պարզելու համար: Ամփոփելով զրույցի արդյունքները և սովորողների պատասխանները՝ նա շարունակում է նոր նյութի ուսումնասիրման աշխատանքը փոքր համագործակցային խմբերով: Այս փուլում արդեն կիրառվում են ուսուցման բազմազան մեթոդներ ու մեթոդական հնարներ, զուգակցվում են ուսուցչի պատմելն ու զրույցը, տեքստի տրամաբանական ավարտուն հատվածների (պարբերությունների) բացատրական և մեկնողական ընթերցանությունը, սովորողների ինքնուրույն և խմբային աշխատանքը, դասագրքի տեքստային ու տեղեկատվության դիտողական աղբյուրները:

Այդ դասին սովորողների ձեռք բերած գիտելիքների ամրապնդումը տեղի է ունենում կա՛մ նոր նյութի ուսումնասիրման ընթացքում, կա՛մ էլ դասի վերջում: Ամրապնդումը կատարվում է դասագրքի տեքստով, ուսումնադիտողական պիտույքներով, նկարներով, պատմական քարտեզներով և գիտելիքների այլ աղբյուրներով: Ամրապնդման ընթացքում ուսուցիչը ճշտում, լրացնում և հաստատում է սովորողների նոր ստացած գիտելիքները: Դասի վերջում ձևակերպվում է տնային առաջադրանքը:

7-րդ դասարանում վերջին շրջանում մեծ կիրառություն է գտել նոր նյութի քննարկման դասը: Հերթական դասի վերջում ուսուցիչը դասարանին հայտնում է հաջորդ դասի թեման և տալիս տնային հանձնարարություն՝ ինքնուրույն կարդալ դասագրքի համապատասխան հատվածը և նախապատրաստվել նրա խմբային և համադասարանական քննարկմանը: Միաժամանակ ուսուցիչը հայտնում է այն հիմնական հարցերը, որոնք պետք է քննարկվեն հաջորդ դասին, խորհուրդ է տալիս, թե ինչպես աշխատել շարադրանքի վրա, ինչին ուշադրություն դարձնել, ինչպես առանձնացնել գլխավորը և այլն:

Հաջորդ դասի սկզբին ուսուցիչը կազմակերպում է տանն ուսումնասիրած նյութի նախ խմբային և ապա համադասարանական քննարկում: Խմբերը, պատասխանելով ուսուցչի հարցերին, շարադրում են ուսումնասիրած նյութը, ինչ-որ բան ավելացնում ընկերների ելույթներին, լրացնում և ուղղում միմյանց պատասխանները, համատեղ հանգում եզրակացությունների: Վերջում ուսուցիչը կատարում է ամփոփում ու գնահատում նրանց ելույթները:

Հաջորդ դասատիպը՝ գիտելիքների կիրառման և կարողությունների ու հմտությունների ձևավորման դասը, նպաստավոր պայմաններ է ստեղծում գիտելիքները կիրառելու ուսումնական նյութի բարդության ավելի բարձր աստիճաններում: Այս դասատիպը կարող է ունենալ ծավալով ոչ մեծ և բովանդակությամբ ոչ բարդ ուսումնական նոր նյութ և կարող է կառուցվել անցած նյութի հիման վրա՝ սովորողների համար գիտելիքների բոլորովին նոր աղբյուրների օգտագործմամբ: Դասի մեծագույն մասը սովորողներն աշխատում են ինքնուրույն՝ ըստ ուսուցչի կողմից առաջարկված թեմայի և ուսումնական տեղեկատվության աղբյուրների: Այս դասի ժամանակ ուսուցչի գործունեությունը սահմանափակ է: Նա կատարում է միայն ուղղություն տվող գործառույթ՝ կազմակերպելով սովորողների աշխատանքը: Դասի սկզբում նրանք աշխատում են ուսուցչի հուշած ծանոթ պայմաններում իրենց գիտելիքների ու կարողությունների կիրառման վրա, իսկ այնուհետև դրանք կիրառվում են նրանց կողմից ընտրված ոչ սովորական իրադրության մեջ: Աշխատելով փոքր համագործակցային խմբերով դասագրքի, պատմական փաստաթղթերի, ուսումնադիտողական պիտույքների և մամուլի նյութերի վրա՝ սովորողները բանավոր կամ գրավոր ձևավորում և ամրապնդում են այնպիսի կարողություններ, ինչպիսիք են տեքստը վերլուծելու և գլխավորն առանձնացնելու, համեմատելու, եզրակացություն անելու, դեպքերի և երևույթների միջև փոխադարձ կապեր հաստատելու, գիտելիքների տարբեր աղբյուրներից տեղեկատվություն քաղելու, պլան, թեզիսներ կազմելու և ռեֆերատ գրելու կարողությունները:

Հայոց պատմության դասընթացի ուսումնասիրման գործում կարևոր տեղ են գրավում գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդհանրացման և համակարգման դասերը: Այս դասատիպը շատ գծերով նման է կրկնության և ընդհանրացման դասերին: Ընդհանրացումն ու համակարգումը անց են կացվում դասագրքի կարևորագույն թեմաների ուսումնասիրումից հետո (ասենք, օրինակ, «Հայկական լեռնաշխարհը որպես համաշխարհային քաղաքակրթական բնօրրաններից մեկը: Հայոց հայրենիքը: Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-I հազարամյակներում»): Ընդհանրացման, համակարգման ենթակա ուսումնական նյութերի մեջ ընդգծվում են հիմնական հասկացությունները, առանցքային գաղափարները, տեսությունները, սահմանվում են կարևորագույն փաստերի, երևույթների և պատմական գործընթացների միջև եղած պատճառահետևանքային կապերը: Ընդհանրացման և համակարգման դասերի հիմքում նույնպես ընկած է ուսումնական նյութի կրկնությունը: Կրկնությունը կատարվում է ոչ միայն անցածը հիշելու և ամրապնդելու, այլև գիտելիքներն ընդհանրացնելու և համակարգելու նպատակով: Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընդհանրացման և համակարգման դասերը սովորաբար ունենում են կառուցվածքային հետևյալ փուլերը.

ա) առանձին փաստերի, դեպքերի և երևույթների կրկնություն և ընդհանրացում,

բ) պատմական հասկացությունների կրկնություն և ընդհանրացում և դրանց համապատասխան գիտելիքների համակարգի յուրացում,

գ) պատմագիտության առանցքային գաղափարների, տեսական դրույթների կրկնություն ու համակարգում,

դ) ճանաչողական, ստեղծագործական, հաղորդակցական և համագործակցային կարողությունների և հմտությունների կիրառում սովորական և ոչ սովորական (ոչ ստանդարտ) պայմաններում:

7-րդ դասարանում տարածված դասատիպերից են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամփոփիչ կրկնության և ընդհանրացման դասերը: Այդ դասերը կազմակերպվում են հիմնականում կիսամյակների կամ ուստարվա վերջում, որոնց գլխավոր խնդիրն արդեն անցած ամբողջ նյութի, թեմաների ու բաժինների կամ ամբողջությամբ վերցրած՝ ամբողջ դասընթացի նյութի հիման վրա ձեռք բերած գիտելիքների համակարգի ձևավորումն ու ընդհանրացումն է, օրինակ՝ Հայաստանի մշակութային նվաճումները հին շրջանում և միջնադարում: Նկատի ունենալով այս դասատիպի կարևորությունը, Հայոց պատմության ծրագրում նախատեսված են հատուկ ժամեր դրա անցկացման համար: Կրկնության և ընդհանրացման դասի հաջողության երաշխիքը դասին լավ նախապատրաստվելն է: Կազմվում է դասի պլան, որի մեջ արտացոլում են գտնում ուսումնական նյութի և դիտողական պիտույքների ընտրությունը, հարցերի և առաջադրանքների (հիմնական և լրացուցիչ) քանակը և ծավալը, ուսուցչի խոսքի և սովորողների պատասխանների հարաբերակցությունը, խաղային տարրեր մտցնելու հնարավորությունը: Այս պլանը ուսուցիչը հայտնում է սովորողներին դասի անցկացումից մի քանի օր առաջ: Դասը սկսվում է քննարկումով: Ընդհանուր համադասարանական զրույցի (ֆրոնտալ հարցում) և սովորողների խմբային և անհատական ծավալուն պատասխանների, պրիզմայի և խմբավորման միջոցով կրկնվում են նրանց հենակետային գիտելիքները:

Քննարկման ընթացքում ուսուցիչն առաջարկում է ոչ միայն կրկնության համար դասագրքում եղած հարցերն ու առաջադրանքները, այլև լրացուցիչ հարցեր, անում համառոտ եզրակացություններ: Դիտողական պիտույքների հետ տարվող աշխատանքը նպատակ ունի ոչ թե մանրամասնորեն վերլուծել, այլ որպես դիտողական պատկերային հնարներ դրանք օգտագործել իրադարձությունների մեջ ընդհանուրն ու տարբերը պարզաբանելու, եզրակացություններ կատարելու համար: Հաճախ դասի բովանդակության բանավոր քննարկումը զուգակցվում է գրավոր աշխատանքի կատարման հետ՝ երևույթների համեմատության թեմատիկ աղյուսակի կազմում, գիտելիքների նոր աղբյուրներով սովորողների պատասխանի պլանի կազմում և այլն:

Կրկնության և ընդհանրացման դասին պետք է կարևորել հետևյալ կառուցվածքային փուլերը.

1. հենակետային գիտելիքների (փաստերի, երևույթների) արդիականացում և ամրապնդում,
2. կարողությունների և հմտությունների ամրապնդում,
3. նախկինում մաս-մաս ուսումնասիրած պատմական դեպքերի, երևույթների ամբողջական պատկերի ստեղծում,
4. գիտելիքների ընդհանրացում և համակարգում,
5. մարզողական առաջադրանքների և վարժությունների կատարում և այլն:

Վերը նշված դասերը պետք է բավարարեն մի շարք պահանջների: Դրանք են.

ա) դասի բովանդակության համապատասխանեցում պատմագիտության ժամանակակից մակարդակին: Դասին պետք է հատուկ արտահայտվեն պատմական գիտելիքի դասական, ժամանակակից և հեռանկարային տարրերը.

բ) դասի նպատակի հստակ որոշումը ուսուցման կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրների հետ անխախտ միասնության մեջ,

գ) ուսումնական նյութի գիտական և ստեղծագործական ընտրություն, գլխավորի առանձնացում և յուրացում դասարանի բոլոր սովորողների կողմից, այն հաշվով, որ դրանք հասկանալի լինեն դասարանի բոլոր սովորողներին և յուրացվեն նրանց կողմից անմիջականորեն դասի ժամանակ,

դ) դասի կառուցվածքային յուրաքանչյուր փուլի անցկացման մեթոդների ու հնարների նպատակասլաց ընտրություն,

ե) սովորողների ակտիվ ճանաչողական գործունեության կազմակերպում: Ընդ որում, դասը պետք է առանձնանա իր ամբողջականությամբ, դասի փուլերի ներքին փոխկապվածությամբ, ուսուցչի և սովորողի միասնական տրամաբանական գործունեությամբ,

զ) դասի հումանիտարացում, այսինքն՝ պատմության դասին միջառարկայական կապերի միջոցով այն առարկաներից ստացած գիտելիքների օգտագործում, որոնց հիմքում ընկած են իրականության ճանաչողության և վերափոխության հումանիտար մեթոդները (գրականություն, կերպարվեստ և այլն):

8. Հայոց պատմության դասավանդման մեթոդները

Պատմության դասերը չի կարելի կազմակերպել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակն է, որն ուղղված է կրթության բովանդակության յուրացմանը:

ա. Պատմության ուսուցման մեթոդների դասակարգումը

«Հայոց պատմության» դասընթացի կառուցվածքի և բովանդակության նորացումը, պատմության նոր չափորոշիչները և ծրագրերը առաջ են բերում դասավանդման մեթոդների փոփոխության անհրաժեշտություն: Ուսուցման նախկին ձևերն ու մեթոդները չեն կարող լիովին բավարարել նոր պահանջները: Սակայն «նոր մեթոդներ» արտահայտությունը չպետք է ոչ վախեցնի և ոչ էլ զարմացնի պատմության ուսուցիչներին: Որոշ վերապահությամբ կարելի է ասել՝ հին և նոր մեթոդներ չկան: Կա միայն տասնամյակների փորձով ստեղծված մեթոդական հարուստ զինանոց, որից օգտվում է ուսուցիչը՝ ելնելով ժամանակի պահանջներից և իր առջև դրված խնդիրներից: Հին ասացվածքն ասում է, որ ուսուցման նոր մեթոդները սովորելու լավագույն ճանապարհը հենց մեթոդի միջոցով սովորելն է: Կարծում եմ՝ հնարավոր չէ գտնել մեկ հրաշալի մեթոդ, որը կարողանա լուծել ուսուցման առջև ծառացած բոլոր խնդիրները: Փորձը հուշում է, որ դասավանդման ընթացքում լավագույն արդյունքը կարող է ապահովել ավանդական և ժամանակակից մեթոդների համադրումը: Ավանդական

(այսպես կոչված՝ հին) մեթոդները ժամանակին հաջողությամբ լուծել են պատմության ուսուցման առջև դրված աշակերտի գիտելիքների համակարգի ձևավորման և դաստիարակության

խնդիրները: Այսօր, երբ խնդիր է դրվել սովորեցնել սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Դասարանն այժմ դիտվում է որպես աշակերտների հաստատուն համակազմով ինքնակառավարվող փոխգործուն աշխատանքային խումբ, որն ուսուցչի ղեկավարությամբ իրականացնում է ուսուցման ակտիվ գործընթաց: Դասարանում աշակերտի գործունեության հիմնական ձևն այս դեպքում դառնում է փոքր խմբերով աշխատանքը և դրան համապատասխան նոր մեթոդները: Փաստորեն, այսպես կոչված նոր մեթոդները նոր խնդիրների լուծմանը ծառայող մանկավարժական զինանոցում արդեն եղած մեթոդներն են, որոնք ստանում են նոր իմաստ, երանգ ու շեշտադրում:

Պատմության դասավանդման մեթոդիկայում տարածված են.

- **խոսքային մեթոդները** (պատմելը, զրույցը, շարադասությունը և այլն)
- **զննական մեթոդները** (նկարազարդումները, ցուցադրումները և այլն),
- **գործնական մեթոդները** (վարժությունները, տնային առաջադրանքի կատարումը և այլն),
- **տրամաբանական մեթոդները** (ինդուկտիվ՝ մակածում), դեդուկտիվ՝ արտածում), անալոգիա և այլն),
- **ճանաչողական-ստեղծագործական մեթոդները** (վերարտադրողական, այսինքն՝ բացատրական-ցուցադրական և պրոբլեմային-որոնողական, այսինքն՝ պրոբլեմային շարադրանք, էվրիստիկ զրույց, հետազոտական),
- **հետաքրքրությունների խթանման մեթոդները** (ճանաչողական խաղեր, հուզական խթանում և այլն),
- **ինտերակտիվ-կառուցողական մեթոդները** (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, դեպքի ուսումնասիրություն, աշխատանք սկզբնաղբյուրի հետ և այլն),
- **համագործակցային ուսուցման մեթոդները** (թիմային առաջադիմություն, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն և այլն),
- **քննադատական մտածողության մեթոդները** (տեքստի ուսումնասիրում, քննարկում, փոխգործուն նշանների գրառումների համակարգ և այլն),
- **խմբային աշխատանքի մեթոդները** (մտածիր – զույգ կազմիր – քննարկիր, ձնակույտ, ուսումնական մրցույթ և այլն),
- **ինքնուրույն աշխատանքի մեթոդները** (ինքնուրույն աշխատանք դասագրքով, սկզբնաղբյուրներով, ուսումնազննական պիտույքներով և այլն),
- **վերահսկողության մեթոդները** (գրավոր, բանավոր վերահսկողություն, ծրագրավորված և ոչ ծրագրավորված և այլն):

Բնական է, որ ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների այս հարուստ զինանոցը: Նա պետք է յուրաքանչյուր որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի ընտրություն: Ուսուցման մեթոդների ընտրության հիմքում ընկած են դիդակտիկական այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում: Բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների

ընտրությունը կախված է նաև դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, պատրաստվածության մակարդակից, շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից, ուսումնադիտողական պարագաների առկայությունից, ժամաքանակից, դասարանում աշակերտների թվաքանակից և այլ գործոններից: Այսպես, եթե դասի տվյալ փուլում հիմնական խնդիրը գիտելիքների հաղորդումը և ուսումնական նյութի ընկալումն է սովորողների կողմից, ապա ուսուցիչը կիրառում է խոսքային, զննական մեթոդներ, մեկնաբանում է առանձին փաստերն ու երևույթները, բացատրում է պատմական տերմինները, հասկացությունները և սակավ օգտագործվող ու անծանոթ բառերը: Եթե առանձին սովորողներ լավ չեն ընկալում նյութը, բերվում են լրացուցիչ փաստարկներ, համոզիչ օրինակներ: Եթե դասի տվյալ փուլի հիմնական խնդիրը պատրաստի գիտելիքների յուրացումն է, ապա ուսուցիչը կիրառում է պրոբլեմային շարադրանքի մեթոդը, որի դեպքում ոչ թե պարզապես հաղորդվում են պատրաստի գիտելիքները, այլ ինչ-որ չափով վերարտադրվում են դրանց ստացման եղանակները: Ուսուցիչն ինքն է առաջ քաշում հիմնահարցը և ինքն էլ լուծում է: Նա բացահայտում է դրա լուծման բոլոր ներքին հակասությունների տրամաբանությունը և ապացույցների մատչելի համակարգը: Սովորողները հետևում են ուսուցչի մտքի տրամաբանական ընթացքին, մասնակցում պրոբլեմի լուծմանը: Կամ եթե դասի տվյալ փուլի հիմնական խնդիրը սովորողների ինքնուրույն կամ ստեղծագործական մտածողության զարգացումն է, ապա կարելի է կիրառել էվրիստիկ զրույցի կամ ինտերակտիվ ուսուցման մեթոդը: Էվրիստիկ զրույցի ժամանակ օգտագործվում են այնպիսի հարցեր, որոնք բացահայտում են. պատմական դեպքերի և երևույթների որոշակիորեն չարտահայտված պատճառ-հետևանքային կապերն ու հարաբերությունները, դրանց նմանություններն ու տարբերությունները:

Առաջադրված էվրիստիկ հարցերի շուրջ տեղի է ունենում մտքերի փոխանակություն, հայտնվում են կարծիքներ ու ենթադրություններ, կատարվում դրանց քննարկումներ, որոշվում հնարավոր առարկությունները, ուղղվում են ոչ ճիշտ դատողությունները, ընտրվում է դրանցից մեկը: Դատողությունները, եզրակացությունները հաստատվում են ինքնուրույն համոզիչ օրինակներով: Էվրիստիկ հարցերը պետք է կառուցել այնպես, որ յուրաքանչյու հաջորդը բխի նախորդից, լինի պատճառաբանված: Դասի կոնկրետ փուլում հիմնական դիդակտիկական խնդրի լուծման գործում վճռական դեր խաղացող մեթոդը կոչվում է գլխավոր մեթոդ: Սակայն, դասի տվյալ փուլի հիմնական խնդրից բացի, կան նաև այլ խնդիրներ, որոնք լուծվում են օժանդակ մեթոդների միջոցով: Գլխավոր մեթոդը, որոշակի ձևով կապելով օժանդակ (ուղեկցող) մյուս մեթոդները, դրանք ուղղորդում է հիմնական խնդրի լուծմանը: Օրինակ՝ եթե «Ֆիդայական շարժումը» դասին ուսուցիչը նպատակ է դրել զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը, նա կիրառում է մասնակի որոնողական մեթոդը: Այս գլխավոր մեթոդի օգտագործման հետ միասին ուսուցիչն անպայման պետք է կիրառի խոսքային, զննական մեթոդները:

Միաժամանակ «Ֆիդայական շարժումը» առաջ է թերում հուզական վիճակի դրսևորում:

Փաստորեն, ամեն մի կոնկրետ իրադրության մեջ կատարելով մեթոդների համապատասխան ընտրություն և դրանց փոխկապակցում՝ պատմության ուսուցիչն ինքն է հայտնագործում իր մեթոդը և ազատ ու անկաշկանդ կիրառում այն:

Այժմ փորձենք ներկայացնել ավանդական և ժամանակակից առավել հայտնի այն մեթոդները, որոնք խորհուրդ է տրվում կիրառել պատմության ուսուցման գործընթացում:

բ. Մեթոդներ

1. <u>Աշխատանք սկզբնաղբյուրներով</u>

Պատմության դասավանդման լավագույն մեթոդներից է սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը: Սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար: Սկզբնաղբյուրում մշտապես առկա են տարաձայնություններ, հակասություններ՝ տարբեր իրողությունների ու խնդիրների շուրջ: Այս հանգամանքը սկզբնաղբյուրը դարձնում է ուսուցման գործընթացը խթանող միջոց: Սկզբնաղբյուրով աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղեկանալ հակասություններին ու տարաձայնություններին, այլև մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում կազմել այդ հարցի շուրջ: Սկզբնաղբյուրները կարևոր դեր ունեն աշակերտների գիտելիքների, վերլուծական կարողությունների և հմտությունների զարգացման գործում: Ուղղակիորեն առնչվելով սկզբնաղբյուրի նյութին՝ աշակերտը ունենում է զարմանալու, հարցադրումներ անելու, բացատրելու և մեկնաբանելու հնարավորություն: Սկզբնաղբյուրները հետաքրքիր գաղափարների շտեմարան են, որի նյութերը կաղապարված, ադապտացված չեն: Սկզբնաղբյուրները լրացնում են դասագիրքը: Շատ հաճախ դասագիրքը մատուցում է պատրաստի գիտելիք: Սկզբնաղբյուրով աշխատանքը ինքնուրույն հետազոտական աշխատանքի կարևոր միջոց է դառնում այլընտրանքային կարծիքների, տեսակետների ուսումնասիրման համար: Այս մեթոդը հնարավորություն է ստեղծում նաև միջառարկայական կապերի ապահովման համար, քանի որ պատմիչների գործերը, նկարները, ֆիլմերը, գրական և գիտական ստեղծագործությունները, պատմական և իրավական փաստաթղթերն ու վավերագրերը բովանդակում են տարբեր առարկաների վերաբերյալ ինտեգրող (միասնացնող) գիտելիքներ:

Սկզբնաղբյուրներն ընտրելիս պետք է հաշվի առնել՝

- հետաքրքրության աստիճանը, այսինքն որքանով է սկզբնաղբյուրը հետաքրքիր, կարևոր, օգտակար և ուսումնասիրվող նյութին համապատասխան,
- բարդության աստիճանը, այսինքն՝ որքանով է սկզբնաղբյուրի բարդությունը համապատասխանում աշակերտների մակարդակին, և ինչ օգտակար նյութեր (բառարան, սկզբնաղբյուրի ստեղծման և տեքստի մասին մանրամասն տեղեկություններ) կարելի է տալ սկզբնաղբյուրը հեշտությամբ յուրացնելու համար,
- ծավալը, այսինքն՝ աշակերտներին տրվող սկզբնաղբյուրը կամ նրա մի հատվածը ինչ ծավալ պետք է ունենա, կամ սկզբնաղբյուրի որ հատվածը պետք է ընտրել նրա հիմնական գաղափարն արտահայտելու համար,

- տեսակետների բազմազանությունը, այսինքն՝ սկզբնաղբյուրում ուսուցանվող թեմայի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ, հակասություններ,
- աղբյուրների բազմազանությունը, այսինքն՝ ընդգրկվել են արդյոք տարբեր տեսակի աղբյուրներ,
- հասանելիությունը, աշակերտները կարող են արդյոք գտնել աղբյուրները:

Դասարանում սկզբնաղբյուրով աշխատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել սկզբնաղբյուրի հետ աշխատանքի կազմակերպման ձևը, այսինքն՝ ինչպես օգտագործել սկզբնաղբյուրը (քննարկում կազմակերպել դրա շուրջ, գրավոր աշխատանք հանձնարարել, բանավոր ներկայացնել, դարձնել դերային խաղի թեմա), ինչպես աշխատել՝ անհատական, թե փոքր խմբերով, ինչպես ներկայացնել կատարված աշխատանքը՝ հարցաթերթիկ, ակնարկ, նկար, ցուցապաստառ, բանավոր խոսք և այլն, ինչպես գնահատել աշակերտներին՝ թեստ, ռուբրիկ (սյունակաշար) և այլն:

Սկզբնաղբյուրներով աշխատանքի ձևերը և դրանց ներկայացումը

Ամենատարածված ձևը փաստաթղթի վերաբերյալ հարցեր տալն է: Հարցեր կարելի է տալ երկու ձևով.

1) կարելի է նախնական հարցեր ձևակերպել և առաջարկել այդ հարցերի պատասխանները գտնել սկզբնաղբյուրում,

2) կարելի է աշակերտներին առաջարկել թեստային հարցեր, որոնց նրանք պետք է պատասխանեն սկզբնաղբյուրին ծանոթանալուց հետո:

Սկզբնաղբյուրի վերլուծության հարցաթերթիկի օգտագործումը.

Գրել ակնարկ սկզբնաղբյուրի մասին:

- Աշակերտները կարող են ակնարկներում գրել սկզբնաղբյուրի հիմնական գաղափարի, այդ գաղափարը հիմնավորող փաստարկների համոզիչ լինելու մասին: Աշակերտներն ակնարկում պետք է գրեն նաև այն զգացմունքների ու զգացումների մասին, որ առաջացել են սկզբնաղբյուրը ընթերցելիս (թե ինչ զգացումներ առաջացրեց և ինչ տպավորություն գործեց սկզբնաղբյուրը): Անհրաժեշտ է ակնարկում տալ սկզբնաղբյուրի վերլուծությունը:
- Աշակերտին առաջարկվում է գրել պատասխան սկզբնաղբյուրի հեղինակին՝ իրեն պատկերացնելով որպես տվյալ ժամանակաշրջանի մարդ:
- Սկզբնաղբյուրով աշխատանքը կարելի է կատարել նաև բանավոր: Այս դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել դերային խաղի, բանավեճի մեթոդները: Այս մեթոդներն արդյունավետ են, եթե աշակերտներն աշխատում են մեկից ավելի սկզբնաղբյուրով:
- Կարելի է առաջարկել աշակերտներին սկզբնաղբյուրը ներկայացնել պատկերային ձևով: Նրանք կարող են պատրաստել նկարներ, ծաղրանկարներ, պաստառներ, բեմականացված ներկայացումներ:

2. Դեպքի ուսումնասիրություն

Սա ուսուցման ժամանակակից մեթոդներից է, որը հաջողությամբ կարող է կիրառվել պատմության ուսուցման ընթացքում: Այս մեթոդի նպատակը որոշակի դեպքի, իրադարձության, իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրությունն է, որի արդյունքում գնահատվում և արժևորվում է դեպքը, արվում են եզրահանգումներ: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտներն ստանում են երևակայական կամ իրական խնդրահարույց իրավիճակի (հանգամանքներ, պատահարներ, դիպվածներ) կամ դեպքի նկարագրությունը, որը պարունակում է տվյալ դեպքին վերաբերող հեղինակի դիրքորոշումը, կողմնակի անձի տեսակետը, հիմնական, բացահայտված փաստեր, որտեղ առկա են որոշակի հակասություններ, կարծիքներ: Այնուհետև նա քննարկում, վերլուծում է այդ փաստերն ու տեղեկությունները, պարզաբանում անցյալի ու ներկայի միջև հակասությունները, զուգորդում այն հայտնի նմանատիպ իրավիճակների կամ նախադեպերի հետ, գնահատում խնդրի էությունը, կայացնում որոշում և ներկայացնում իր լուծումը: Դեպքերը կարող է հորինել ինչպես ուսուցիչը, այնպես էլ դասարանը և առանձին աշակերտը: Դեպքերը կարող են լինել.

- ավարտված,
- չավարտված,
- հորինված,
- իրական փաստեր:

Ավարտված դեպքերը հիմնված են փաստերի վրա: Դրանք անհրաժեշտ են միայն վերլուծման համար, քանի որ խնդրի լուծումն արդեն որոշված է, սակայն կարող են առաջարկվել այլընտրանքային լուծումներ:

Չավարտված դեպքերի արդյունքները պարզ չեն: Այսպիսի դեպքն իրական կյանքում դեռ չի ավարտվել (վճռվել), կամ էլ ուսուցիչը բաց է թողել հիմնական փաստերը: Աշակերտը պետք է վերլուծություններ, քննարկումներ, դատողություններ ու ենթադրություններ անի, որոնց հիման վրա հանգելու է որևէ լուծման:

Հորինված դեպքերը գրում է ուսուցիչը: Այդպիսի դեպքերը ևս կարող են լինել ավարտված կամ անավարտ: Սակայն այն այնպես պետք է ներկայացվի, որ իրատեսական լինի:

Իրական փաստերը կարող են ներկայացվել փաստագրական տեսքով՝ փաստաթղթեր, սկզբնաղբյուրներից հատվածներ, լուրեր, հոդվածներ, զեկուցումներ, ասույթներ, հարցազրույցներ, վիճակագրական տվյալներ, հակափաստարկներ և ներկայացվել խոսքային կամ տեսողական միջոցներով (տեսագրություններ, ձայնագրություններ):

Դեպքի նկարագրությունից հետո աշակերտներին ժամանակ է տրվում դեպքին ծանոթանալու համար, որից հետո ներկայացվում են քննարկվող հարցերը և խնդիրը, որը պետք է լուծվի: Ապա դարձյալ տրվում է ժամանակ՝ խնդիրները լուծելու համար: Այնուհետև աշակերտներին հնարավորություն է տրվում ներկայացնելու իրենց լուծումները և պատասխանները, քննարկվում են նաև հնարավոր բոլոր լուծումները և պատասխանները: Դեպքը կամ իրավիճակը քննարկվում է փոքր խմբերով (4-6 աշակերտ): Դեպքը պետք է լինի այնպիսին, որ ապահովի աշակերտների ակտիվ

մասնակցությունը: Ուսուցիչը կազմում է հարցաշարը: Լուրջ ուշադրություն պետք է դարձնել հարցերի հաջորդականությանը: Նախնական հարցերը խմբի անդամներից պահանջելու են կատարել դիտարկումներ դեպքի վերաբերյալ: Հետագա հարցերը կպահանջեն համեմատություններ, հակադրություններ, դիտարկումներ և վարկածների վերլուծություն: Ուսուցչի վերջնական հարցերը կարող են պահանջել աշակերտներից, թե ինչ սովորեցին քննարկվող հարցերի վերաբերյալ, որքանով է դեպքն առնչվում իրենց շրջապատին կամ պարզել նրանց վերաբերմունքը քննարկվող հարցի վերաբերյալ: Չեն ընդունվում՝ այո կամ ոչ պատասխանները:

Վերջում ամփոփվում են արդյունքները՝ համեմատելով խմբերի աշխատանքները:

3. <u>Մոդելավորման մեթոդ</u>

Ինչպես իմացության ցանկացած այլ գործընթաց, այնպես էլ գիտական իմացությունը սկսվում է անմիջական կամ միջնորդավորված զգայական իմացությունից: Որպեսզի իմացությունը գիտական բնույթ կրի, անհրաժեշտ է զգայական իմացության արդյունքների հիման վրա ստեղծել հատուկ օբյեկտ, այսինքն՝ ուսումնասիրվող երևույթի ընդհանրացված և վերացական պատկերը՝ սխեման: Այդ օբյեկտն էլ հենց երևույթի մոդելն է: Օրինակ՝ «Ավարայրի ճակատամարտի» սխեման ճակատամարտ երևույթի մոդելն է: Մոդելներն այսօր լայն կիրառություն են գտել ուսուցման գործընթացում: Մոդելների ստեղծումը կատարվում է մոդելավորման մեթոդի օգնությամբ: Մոդելավորումը հատուկ գործունեություն (գործողություն) է, որն ուղղված է մոդելների պատրաստմանը (ընտրություն կամ նախագծում): Դասերին կարող են օգտագործվել նյութական, պատկերային, նշանային և երևակայական մոդելներ:

- Մոդելավորման կիրառումը ուսուցման ընթացքում ունի երկու հայեցակետ: **Առաջին՝** մոդելավորումը որպես ուսումնական գործողություն և **երկրորդ՝** մոդելավորումը որպես ուսումնական և զննական միջոց
- Մոդելավորումը որպես ուսումնական գործողություն: Որպեսզի աշակերտները տիրապետեն մոդելավորմանը, հարկավոր է , որ նրանք իրենք ստեղծեն մոդելները, մոդելավորման օգնությամբ իրենք ուսումնասիրեն որոշ օբյեկտներ, երևույթներ:

Կատարելով մոդելավորման գործողություն՝ աշակերտները քննարկում և ուսումնասիրում են իրական երևույթը, ստեղծում են նրա գիտական մոդելը, որից հետո այն փոխադրում են քննարկվող երևույթի լեզվին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսուցման գործընթացը մտավոր գործողությունների համակարգի տիրապետման գործընթաց է, որը սկսվում է առարկայական գործողության փուլից, այնուհետև անցնում նյութականացված գործողության փուլ, ապա անցնելով լեզվական գործունեության փուլերով՝ վերջիվերջո վերածվում է ներքին մտավոր գործողության փուլի:

Չքննարկելով այդ բոլոր փուլերը՝ անդրադառնանք միայն նյութականացման փուլին

Որևէ գործողություն յուրացնելու և անսխալ կատարելու համար, աշակերտը պետք է յուրացնի այդ գործողությանը համապատասխան կողմնորոշիչների և ցուցումների

համակարգը, որն աշակերտին կարող է տրվել պատրաստի վիճակում կամ կարող է կազմվել ուսուցչի տված ընդհանուր ցուցումների համաձայն:

Երբ աշակերտին ծանոթացնում են յուրացվելիք գործողության հետ, ծանոթությունը պետք է սկսել համապատասխան կոնկրետ առարկաներով գործողությունը կատարելուց: Յուրացվող գործողության ընդհանուր գծերն ավելի լավ տեսնելու համար պետք է վերանալ տվյալ պահին առարկաների ոչ էական հատկություններից Իսկ դա հենց նշանակում է, որ նյութական առարկաների գործողությունից պետք է անցել նրանց փոխարինողների՝ մոդելների գործողությանը, որոնք ձերբազատված են բոլոր այլ հատկություններից, բացի տվյալ դեպքում անհրաժեշտներից, այսինքն՝ անցնել նյութականացված գործողության փուլին: Դա կարող է լինել որևէ գրաֆիկական սխեմա, պատկերային կամ նշանային մոդել, որի վրա կամ որի օգնությամբ աշակերտը կատարում է յուրացվող գործողությունը

Մոդելավորումը որպես ուսումնական և զննական միջոց Երբ աշակերտները յուրացնում են մոդելավորումը որպես ուսումնական գործողություն, ստեղծում ուսումնասիրվող հասկացությունների տարբեր մոդելներ կամ ծանոթանում են այդ հասկացությունների գիտական մոդելներին, ապա այդքանով իսկ մոդելավորումը հանդես է գալիս որպես ուսումնական միջոց, որի օգնությամբ իրականացվում են ուսուցման նպատակները Ընդ որում այդ միջոցն ակնառու է, քանի որ այն բոլոր մոդելները, որոնց ծանոթանում կամ որոնք ստեղծում են սովորողները, այնպիսին են, որ դպրոցականների մեջ ձևավորում են համապատասխան հասկացությունների կամ գործողությունների որոշակի պատկերներ:

4. <u>Նախագծման մեթոդ</u>

Նախագծերի մեթոդը ծագել է անցած հարյուրամյակի սկզբում ԱՄՆ-ում ու անվանվել նաև հիմնախնդիրների մեթոդ, կապված է փիլիսոփայության և կրթության մեջ հայտնի ամերիկացի փիլիսոփա ու մանկավարժ Ջ.Դյուիի և նրա աշակերտ Ու. Քիլպատրիկի անվան հետ: Ուսումնական նախագիծ ասելով՝ հասկանում են սովորողների ստեղծագործական, հետազոտական խնդրի լուծման ցանկացած գործունեություն նախապես անհայտ արդյունքով: Տարբերում են նախագծերի իրականացման հետևյալ փուլերը՝

Նախապատրաստում

- Աշխատանքի բովանդակությունը. նախագծի թեմայի և նպատակի որոշումը, հիմնախնդրի ներկայացումը
- Սովորողների գործունեությունը. քննարկում են թեման ուսուցչի հետ և անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ ստանում, ապա՝ նպատակներ դնում
- Ուսուցչի գործունեությունը. ծանոթացնում է սովորողներին նախագծային մեթոդի իմաստին ու պատճառաբանում է այդ մեթոդի ընտրությունը, ինչն օգնում է նպատակադրմանը:

Պլանավորում

- Աշխատանքի բովանդակությունը. տեղեկությունների աղբյուրների որոշումը, արդյունքների ներկայացման եղանակները (հաշվետվության ձևերը), արդյունքների և գործընթացի գնահատման չափանիշների հաստատումը, թիմի անդամների միջև խնդիրների (պարտականությունների) բաշխումը:
- Սովորողների գործունեությունը. գործողության ծրագիր են մշակում ու խնդիրներ ձևակերպում:
- Ուսուցչի գործունեությունը. մտքեր է առաջարկում ու ենթադրություններ հայտնում:

Հետազոտություն

- Աշխատանքի բովանդակությունը. տեղեկությունների հավաքում, միջանկյալ խնդիրների լուծում, հետազոտության մեթոդին տիրապետում: Հիմնական միջոցները՝ հարցում, դիտում, փորձ:
- Սովորողների գործունեությունը. կատարում են հետազոտություն՝ միջանկյալ խնդիրներ լուծելով:
- Ուսուցչի գործունեությունը. հետևում է, խորհրդակցում, անուղղակի ղեկավարում գործընթացը:

Այս փուլի ընթացքում սովորողները իրականացնում են տեղեկատվության որոնում ու հավաքում՝ գրականություն, աղբյուրները, զանգվածային լրատվական միջոցները, համացանցի օգտագործում: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների, ինչպիսիք են՝ դիտարկումը, անկետավորումը, սոցիոլոգիական հարցումը, փորձի իրականացումը: Գրականության հետ աշխատելու համար առաջին փուլում ուսուցիչը սովորեցնում է սեղմագրման սկզբունքները: Սովորողները յուրացնում են տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և համադրելու ընդունակությունը:

Բնական է, որ ուսուցիչը միանգամից մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների այս հարուստ զինանոցը: Նա պետք է յուրաքանչյուր կոնկրետ դասի համար կատարի ուսուցման մեթոդների ընտրություն: Ուսուցման մեթոդների ընտրությունը պետք է կատարվի այն դիդակտիկական խնդիրներին համապատասխան, որոնք լուծվում են դասի տվյալ փուլում: Այսպես, եթե «Ավատատիրության հաստատումը Հայաստանում» դասի տվյալ փուլում հիմնական խնդիրը գիտելիքների հաղորդումը և ուսումնական նյութի ընկալումն է սովորողների կողմից, ապա ուսուցիչը կիրառում է խոսքային զննական մեթոդները, մեկնաբանում է առանձին փաստերն ու երևույթները, խոշոր հողատիրության առաջացումը, նոր դասակարգերի հանդես գալը բացատրում է **ավատատիրություն, ազատների և անազատների դասեր, հայրենիք, իշխան, նախարար** պատմական տերմինները, հասկացությունները և սակավ օգտագործվող և անծանոթ բառերը: Եթե առանձին սովորողներ լավ չեն ընկալում նյութը, բերվում են լրացուցիչ փաստարկներ, համոզիչ օրինակներ: Եթե դասի տվյալ փուլի հիմնական խնդիրը պատրաստի գիտելիքների յուրացումն է, ապա ուսուցիչը կիրառում է պրոբլեմային շարադրանքի մեթոդը, որի դեպքում ոչ թե պարզապես հաղորդվում են

պատրաստի գիտելիքները ավատատիրության ձևավորման մասին, այլ ինչ-որ չափով վերարտադրվում են դրանց ստացման եղանակները, խոշոր հողատիրության առաջացման ընթացքը և ուղիները: Ուսուցիչն ինքն է առաջ քաշում հիմնահարցը և ինքն էլ լուծում է: Նա բացահայտում է դրա լուծման բոլոր ներքին հակասությունների տրամաբանությունը և ապացույցների մատչելի համակարգը: Սովորողները հետևում են ուսուցչի մտքի տրամաբանական ընթացքին, մասնակցում պրոբլեմի լուծմանը:

Կամ՝ եթե դասի տվյալ փուլի հիմնական խնդիրը սովորողների ինքնուրույն կամ ստեղծագործական մտածողության զարգացումն է, ապա կարելի է կիրառել էվրիստիկ զրույցի կամ ինտերակտիվ ուսուցման մեթոդը: Էվրիստիկ զրույցի ժամանակ օգտագործվում են այնպիսի հարցեր (օրինակ, ինչպես տոհմիկ ավագանին ու նախկին պետական պաշտոնյաները դարձան հողատեր-ավատատեր,ինչու էին նախարարները պայքարում թագավորական իշխանության դեմ, ազատների և անազատների դասերի նմանությունները և տարբերությունները և այլն), որոնք բացահայտում են պատմական դեպքերի և երևույթների որոշակիորեն չարտահայտված պատճառահետևանքային կապերն ու հարաբերությունները, դրանց նմանություններն ու տարբերությունները: Առաջադրված էվրիստիկ հարցերի շուրջ տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ հայտնվում են կարծիքներ ու ենթադրություններ, կատարվում դրանց խմբային և համադասարանական քննարկումներ, որոշվում հնարավոր առարկությունները, ուղղվում են ոչ ճիշտ դատողությունները՝ ընտրելով դրանցից մեկը: Դատողությունները, եզրակացությունները հաստատվում են ինքնուրույն համոզիչ օրինակներով: Էվրիստիկ հարցերը պետք է կառուցել այնպես, որ յուրաքանչյուր հաջորդը բխի նախորդից, լինի պատճառաբանված:

Դասի կոնկրետ փուլում հիմնական դիդակտիկական խնդրի լուծման գործում վճռական դեր խաղացող մեթոդը կոչվում է գլխավոր մեթոդ: Սակայն, դասի տվյալ փուլի հիմնական խնդրից բացի, կան նաև այլ խնդիրներ, որոնք լուծվում են օժանդակ մեթոդների միջոցով: Գլխավոր մեթոդը, որոշակի ձևով կապելով օժանդակ (ուղեկցող) մյուս բոլոր մեթոդները, դրանք ենթարկում է հիմնական խնդրի լուծմանը: Օրինակ՝ եթե «Արտաշեսյան դինաստիայի անկումը» դասին ուսուցիչը նպատակ է դրել զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը, նա կիրառում է մասնակի որոնողական մեթոդը: Այս գլխավոր մեթոդի օգտագործման հետ միասին ուսուցիչն անպայման պետք է կիրառի խոսքային և զննական մեթոդները:

Միաժամանակ Արտաշեսյանների անկումը առաջ է բերում հուզական վիճակի դրսևորում:

Փաստորեն, ամեն մի կոնկրետ իրադրության մեջ կատարելով մեթոդների համապատասխան ընտրություն և դրանց փոխկապակցում, պատմության ուսուցիչն ինքն է հայտնագործում իր մեթոդը և ազատ ու անկաշկանդ կիրառում այն: Ուսուցչի ընտրած մեթոդների արդյունավետության ընդհանուր չափանիշը սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման գործում այդ մեթոդների կիրառման շնորհիվ ձեռք բերած վերջնական արդյունքներն են և դրանց համապատասխանությունն է այն խնդիրներին, որոնք պետք է լուծել ուսուցման ընթացքում սովորողների ռեալ ուսումնական հնարավորություններին համապատասխան:

9. Մանկավարժական տեխնոլոգիաներ

ա. «Ուսուցման մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը

Տեխնոլոգիան հունարեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի, վարպետության մասին:

Երկար ժամանակ «տեխնոլոգիա» տերմինը մանկավարժության ոլորտից դուրս էր մնում. այն կիրառվում էր միայն տեխնիկական գիտությունների բնագավառում: Սակայն այս տերմինը (եզր) տառացի նշանակությամբ ուսմունք է արվեստի կամ վարպետության մասին և չի հակասում մանկավարժության խնդիրներին՝ մանկավարժական գործընթացների կանխատեսում, ծրագրում, պլանավորում, նկարագրություն, բացատրություն:

Մանկավարժական տեխնոլոգիան դասավանդողի գործողությունների հաջորդական համակարգն է, որի նպատակը մանկավարժական այս կամ այն խնդրի լուծումն է կամ էլ որպես նախօրոք պլանավորված, համակարգված և հաջորդական գործընթացի վերարտադրություն և իրականացում:

Մանկավարժական տեխնոլոգիան գիտականորեն ծրագրված և արդյունավետության երաշխիքներ տվող գործողություններ են: Հարկ է նկատի ունենալ, որ «մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը նշանակում է ուսուցման և դաստիարակության ոլորտում կիրառվող աշխատանքի ձևերի ամբողջությունը:

Գոյություն ունեն մանկավարժական բազմաթիվ տեխնոլոգիաներ, բայց ելնելով պատմության դասավանդման պրակտիկայից, այստեղ ներկայացվում են նրանցից մի քանիսը:

բ. Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են, երբ սովորում են ուրիշից և սովորեցնում ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բելլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության տեսությունները:

Սոցիալական փոխկախվածության տեսության երկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրուների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, որն առաջանում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրուները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Մշակվեց նաև ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության

ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով:

Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

<u>Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են</u>

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

<u>Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը</u>՝

- դրական փոխկախվածություն.
- դեմ առ դեմ փոխազդեցություն.
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ.
- խմբային գործընթաց/ մշակում.

- փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանք:

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

<u>Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝</u>

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում,
- սովորողների խմբերի ձևավորում,
- սովորողների տեղաբաշխում,
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում,
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն,
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում,
- գնահատում:

գ. Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիա

Սա ուսուցչի ղեկավարությամբ սովորողների հետազոտական- ինքնուրույն աշխատանքն է: Այսօրինակ գործունեության ընթացքում մշակվում և ամրապնդվում են սովորողների նոր գիտելիքները, կարողությունները և հմտությունները, զարգանում են ճանաչողական ակտիվությունը, հետաքրքրությունները, ստեղծագործական մտածողությունը և անձնային այլ որակներ:

Պրոբլեմային ուսուցման կիրառման դեպքում ուսուցիչը սովորողին ոչ թե պատրաստի գիտելիք է տալիս, այլ ներկայացնում է այն խնդիրը կամ հարցը, որը պիտի լուծում գտնի: Նա, սովորողին որոշակի հիմնախնդիր առաջարկելով հանդերձ, ձգտում է հետաքրքրել նրան, տվյալ խնդիրը լուծելու նախանձախնդրություն արթնացնել:

Պրոբլեմային ուսուցման հիմնաքարը որոշակի իրավիճակի ստեղծումն է: Այստեղ շատ կարևոր է, որ լուծման համար ներկայացվող առաջադրանքը համապատասխանի սովորողների մտավոր կարողություններին, նրանց ունեցած գիտելիքներին, այլապես աշխատանքը կարող է տապալվել:

Ավագ դպրոցում այս տեխնոլոգիան կիրառելի և արդյունավետ կլինի, եթե ուսուցիչը հանգամանալից աշխատանք տանի վիճելի հիմնախնդիրների հայտնաբերման, դրանք սովորողներին ճիշտ ներկայացման առումով:

դ. Մոդուլային ուսուցման տեխնոլոգիա

Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ սովորողին տրվում է որոշակի թեմայի համար մշակված ուսումնական նյութի փաթեթ՝ մոդուլ, որը սովորողն ինքնուրույն

ուսումնասիրում և յուրացնում է: Մոդուլը մի ամբողջություն է, որի մեջ մտնում են թե՛ ուսումնական նյութի բովանդակությունը, թե՛ դա յուրացնելու տեխնոլոգիան:

Մոդուլը կազմված է՝

- գործողությունների նպատակային պլանից
- տեղեկատվության կամ նյութի շարադրանքից
- ուսուցման գործընթացը կարգավորող մեթոդական ցուցումներից

Այս տեխնոլոգիան կիրառելու դեպքում ուսուցիչը պետք է մշակի յուրաքանչյուր դասարանի ուսումնական նյութին համապատասխան մոդուլային ուսումնական ծրագիր, ընդգծի դրանցից ամեն մեկի նպատակները: Այդ նպատակով պիտի առանձնացվեն ուսուցանվող առարկայի ուսումնական բովանդակության հիմնական գիտական խմբավորումներ: Դրանից հետո ձևավորվում է ընդհանրական դիդակտիկ-ուսումնական նպատակադրումը, որը պիտի բաղկացած լինի երկու աստիճանից՝ ա) ուսումնական նյութի բովանդակության յուրացման աստիճան, բ) նյութի կիրարկման, ուսուցման հետագա ընթացքում կիրառելու կարողության աստիճան:

Մոդուլները երեք տեսակ են լինում.

- ճանաչողական, որոնք կիրառվում են գիտության հիմունքնեռի ուսուցման ընթացքում
- գործառնական, որոնք անհրաժեշտ են գործունեության եղանակների ձևավորման և զարգացման համար
- խառը, որոնք ներառում առաջին երկու տեսակները:

Մոդուլային տեխնոլոգիայի կիրառման դեպքում սովորողը վարժվում և սովորում է ինքնուրույնության, նախաձերնության, կազմակերպվածության, աշխատանքի ծրագրման և պլանավորման, ինքնահսկման և ինքնագնահատման: Սովորողը գիտակցված և իմաստավորված մոտեցում է հանդես բերում ուսումնական գործընթացի հանդեպ, սովորում է տեսնել իր գիտելիքների և կարողությունների ուժեղ և թույլ կողմերը, դրանց ձեռքբերման աստիճանը:

Այս տեխնոլոգիան ուսուցչին հնարավորություն է տալիս կազմակերպելու անհատական աշխատանք ամեն մի սովորողի հետ:

Մոդուլները կարող են կիրառվել ուսուցման կազմակերպման ցանկացած ոլորտում և բարելավել ուսումնառության գործընթացը և ապահովել դրա արդյունավետության բարձրացմանը: Մոդուլային և ավանդական ուսուցման տեխնոլոգիաների համատեղումը խիստ արդյունավետ կարող է լինել:

ե. Նախագծային ուսուցման տեխնոլոգիա

Սա արդյունավետ ուսուցման տեխնոլոգիայի գաղափարների գործնական-կիրառական տարբերակ է, որը որպես ելակետ ունի արդյունավետ գործունեության անհատական փորձը:

Այս տեխնոլոգիայի հիմքում ընկած են Դ. Դյուիի գաղափարները. նա առաջարկում էր ուսումնական գործընթացը կազմակերպել առօրյա կյանքից վերցված գործնական խնդիրների լուծման ճանապարհով: Դ. Դյուին ժխտում է կրթության բովանդակության

կանոնակարգված, չափորոշված բնույթի անհրաժեշտությունը, և ուսուցումը փաստորեն առաջարկում է կառուցել երեխաների գործնական հետաքրքրությունների հիման վրա:

Դ. Դյուիի գաղափարների հիման վրա փորձ է արվել կառուցել և մշակել ուսուցման այնպիսի համակարգ կամ նախագծերի մեթոդը, որի էությունն այն է, որ, ելնելով իրենց հետաքրքրություններից, սովորողներն ուսուցչի հետ նախագծում էին որևէ գործնական խնդրի լուծումը: Ուսումնական տարբեր առարկաների նյութը խմբավորվում էր համակարգ-նախագծի շուրջ:

Չնայած որ ուսուցման կազմակերպման այսպիսի ձևն ապահովում էր գործնական կարողությունների ձևավորումը և զարգացումը, սակայն ուսուցման համակարգվածությունը և աստիճանականությունը խախտվում էին, որի հետևանքով էլ սովորողների կրթական պատրաստվածության մակարդակը բավական ցածր էր:

Արդի ժամանակաշրջանում, ուսուցման հումանիտարացման պահանջից ելնելով, մանկավարժները դարձյալ դիմում են ուսուցման այս տեխնոլոգիային, քանի որ սրա մեջ տեսնում են սովորող-սուբյեկտի և նրա ճանաչողական հնարավորությունների, պահանջմունքների զարգացման ապահովման կարևոր խնդրի լուծումը:

Ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե ուսումնական ծրագրերով նախատեսված յուրացրած գիտելիքի քանակով, այլ դրա միջոցով սովորողի փորձի հարստացման, զարգացման և կիրառության հնարավորության մակարդակով:

Այս տեխնոլոգիան մշակողների խոսքերով յուրաքանչյուր սովորող պետք է հնարավորություն ունենա իրականում այնպիսի գործունեություն ծավալելու (բարձր դասարանցիների համար՝ աշխատելու), որի ընթացքում նա կարող է ոչ միայն դրսևորել իր ինքնատիպությունը, այլև դրա միջոցով հարստանալու:

զ. Հեռավար ուսուցման տեխնոլոգիա

Հեռավար ուսուցման տեխնոլոգիայի դեպքում մարդը կրթություն է ստանում առանց ուսումնական հաստատություն հաճախելու: Սովորողն ուսանում է ժամանակակից հեռահաղորդակցական համակարգերի միջոցով՝ էլեկտրոնային փոստ, հեռուստատեսություն և համացանց:

Այս տեխնոլոգիան սովորելու հնարավորություն է տալիս բոլոր նրանց, ովքեր հնարավորություն չունեն առկա ուսումնառության համար: Ուսուցման այս ձևը հարմար է կիրառել բուհական կրթության, ինչպես նաև որակավորման բարձրացման կամ վերաորակավորում ստանալու համար: Սովորելու հնարավորություն են ձեռք բերում հաշմանդամ մարդիկ:

Ստանալով ուսումնական նյութը էլեկտրոնային կամ տպագիր ձևով՝ սովորողն ինքնուրույն ուսումնասիրում է նյութը, ստանում է գիտելիք իր տանը, աշխատավայրում կամ համակարգչային հատուկ սրահում:

Հեռավար ուսուցման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս հաշվի առնելու սովորողների անհատական կարողությունները, պահանջները, արագությունը, զբաղվածության աստիճանը: Նա կարող է ուսումնական նյութը յուրացնել ցանկացած արագությամբ՝ դանդաղ կամ էլ արագ: Սա այս տեխնոլոգիայի առավելությունն է:

Այս տեխնոլոգիան կիրառում է ուսուցման ավանդական եղանակները՝ դասախոսություն, խորհրդատվություն, լաբորատոր, գործնական և ստուգողական աշխատանքներ, ստուգարքներ և այլն: Սակայն դրանք ունեն տարբերիչ առանձնահատկություններ: Դասախոսությունը բացառում է ակտիվ հաղորդակցումը դասախոսի հետ: Դասախոսության գրանցման համար կիրառվում են դիսկետները: Գերժամանակակից տեխնոլոգիաների կիրառությունն ուսումնական նյութը դարձնում են արտահայտիչ և դիդակտիկ: Դասախոսության ստեղծման համար գործածվում են կինեմատոգրաֆիայի բոլոր հնարավորությունները՝ դիպաշար (սցենար), դերասանական խաղ և այլն: Այսպիսի դասախոսություններ կարելի է լսել ցանկացած ժամանակ և ցանկացած հեռավորությունից: Բացի դրանից՝ ուսումնական նյութը կոնսպեկտավորելու կարիք չկա:

Խորհրդատվությունը հեռավար ուսուցման գլխավոր ձևն է, որի միջոցով սովորողը ստանում է օգնություն ինքնուրույն ուսումնառության գործընթացում: Օգտագործվում են թե՛ հեռախոսը, թե՛ էլեկտրոնային փոստը: Խորհրդատվությունը դասավանդողին հնարավորություն է տալիս գնահատելու սովորողի անհատական որակները՝ ինտելեկտը, ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, մտածողությունը:

Գործնական աշխատանքները նյութի գործնական յուրացման համար են նախատեսված: Հեռավար ուսուցման հնարավորությունները (մուլտիմեդիա և այլն) էապես փոխում են գործնական աշխատանքի կազմակերպման եղանակները: Վիրտուալ իրականացումը կցուցադրի այնպիսի երևույթներ, որոնք իրական կյանքում շատ դժվար կամ էլ հնարավոր չէ տեսանելի դարձնել: Ժամանակակից տեխնիկայի հնարավորությունները գործադրելու դեպքում կարելի է ստուգել նյութի յուրացման տեսական և գործնական համամասնությունը:

10. Համառոտ տեղեկություն գնահատման համակարգի մասին

<u>ա. Միավորային գնահատում</u>

Գնահատումը ուսուցչի գործունեության բաղկացուցիչ մասն է, երբ նա համակարգված ձևով տեղեկատվություն է հավաքում սովորողների ուսումնական առաջընթացի՝ գիտելիքի պաշարների, կարողությունների ու հմտությունների մասին, որպեսզի բարելավվի նրա ուսումնառությունը: Ուսուցման գնահատման տարբեր ձևեր կան, բայց ուսուցչի համար առաջնայինը ընթացիկ գնահատումն է: Ընթացիկ գնահատումը լինում է միավորային և ուսուցանող:

Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատել, գնահատական տալ կամ չափել ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչով ու ծրագրով: Մեր երկրում կիրառության մեջ է եղել հիմնականում գնահատման այդ ձևը, որը չի ապահովվել գնահատականի հավաստիության բարձր աստիճան: Այդ դեպքում մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը: Գնահատման նոր համակարգում միավորի հավաստիության աստիճանն անհամեմատ բարձր է:

Գնահատման երկրորդ ձևը նախատեսում է գնահատումների կամ արժևորումների օգտագործում՝ զուտ սովորելու և սովորեցնելու նպատակով: Այն անվանում են ուսուցանող գնահատում կամ գնահատում՝ սովորելու համար: Գնահատման այս բաղադրիչի նպատակն, ըստ էության, միտված է կրթության որակի բարելավմանը՝ հատկապես թույլ և միջին ունակություններ ցուցաբերող աշակերտների համար:

Գնահատման այդ երկու ձևերը էապես տարբերվում են միմյանցից:

Միավորային գնահատումն ունի կրթության որակը վերահսկող դեր: Այն նախատեսվում է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց և ուսումնասիրելուց հետո՝ կիսամյակի ընթացքում գիտելիքի, կարողությունների և հմտությունների յուրացման մակարդակն ամրագրելու, գործնական աշխատանքների կատարման կամ ուսումնական այլ հմտությունների որակը թվանշանով արտահայտելու համար: Թվանշանային գնահատականի օգնությամբ արձանագրվում է տվյալ նյութին աշակերտի տիրապետման աստիճանը: Միավորային գնահատումն ունի մրցակցային բնույթ: Ստացած միավորների միջոցով աշակերտները համեմատվում են մեկը մյուսի հետ: Ընթացիկ գնահատման նոր համակարգում շեշտադրվում են աշակերտի հետ տարվող կանոնակարգված ուսուցողական աշխատանքները, այսինքն՝ ուսուցանող գնահատումները կամ արժևորումները: Այդ աշխատանքներն ունեն զուտ ուսուցանող բնույթ և կիրառվում են միավորային գնահատումների միջև ընկած ժամանակահատվածներում: Այստեղ աշակերտի ձեռքբերումները համեմատվում են կրթական պահանջների և նրա նախկին ձեռքբերումների հետ միայն և չեն համեմատվում մյուս աշակերտների ձեռքբերումների հետ: Այս դեպքում ուսուցիչը, երբեմն նաև աշակերտը, պարզում է կատարված աշխատանքում տեղ գտած թերություններն ու սխալները և նշում դրանց վերացման ուղիները: Այդ աշխատանքի հիմնական նպատակն է արվածի արժևորման, հետադարձ կապով վերլուծման և քննարկումների միջոցով նպաստել աշակերտի կրթական առաջընթացին: Հասկանալի է, որ նման մոտեցման պարագայում աշակերտի աշխատանքի որևէ թվանշանային կամ պայմանանշանային գնահատում չի ծառայի առաջադրված նպատակին:

Միավորային գնահատումների կիրառման մեկ լրիվ փուլը նախատեսված է մեկ կիսամյակի համար:

Կրթության որակի բարելավման աշխատանքների ներկա փուլում կարևոր են համարվում կատարված ուսումնական աշխատանքների հաշվառումներն ու հաշվետվությունները: Հաշվետվությունները պարունակում են նաև վերլուծություններ, որոնք կնպաստեն կրթության որակի հետագա բարելավմանը, անհրաժեշտության դեպքում, նաև ուսումնական ծրագրերի ու չափորոշիչների վերանայմանը:

Միավորային գնահատման համար կիրառվում է 10 միավորային սանդղակը: 10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար: Գնահատման յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը ցույց է տալիս աշակերտի ուսումնական հաջողությունները: Այն սկսում է 1 միավորից և չունի անբավարար սանդղակ:

Միավորային ամեն մի ստուգման դեպքում, կախված առաջադրանքների տեսակից ու քանակից, ուսուցիչը կարող է օգտագործել նաև գնահատման այլ սանդղակներ:

Պաշտոնական գրանցումների համար, այլ սանդղակով դրված գնահատականները պետք է բերվեն 10 միավորային սանդղակի:

<u>բ 7րդ դասարանում հայոց պատմության միավորային</u> <u>/թվանշանային/ գնահատման տեսակները և դրանց բաղադրիչները</u>

7-րդ դաարանում կիրառվում են միավորային գնահատման հետևյալ ձևերը.

1. **Բանավոր հարցում:** Ստուգման այս տեսակը նպաստում է սովորողների բանավոր խոսքի, տրամաբանական մտածողության, նյութը ինքնուրույն ամփոփելու և վերարտադրելու կարողությունների զարգացմանը:
2. **Թեմատիկ գրավոր աշխատանքներ:** Դրանք հանձնարարվում են ծրագրով նախատեսված թեմայի (թեմաների) յուրացման աստիճանը պարզելու համար:

Թեմատիկ գրավոր աշխատանք կարող են լինել.

<u>Թեստը,</u> որն իր մեջ ներառում է ընտրովի կամ կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ, համապատասխանեցում և դասավորություն պահանջող առաջադրանքներ,

<u>Շարադրանքը</u>, պարունակում է նկարագրական, վերարտադրական տրամաբանական, ստեղծագործական և ինքնուրույն հետազոտական առաջադրանքներ, որոնք կարող են լինել հակիրճ՝ 1 հարցով, և ընդարձակ՝ 2 և ավելի հարցերով:

<u>Հարցաշարը</u>, որն ընդգրկում է թեմայի հիմնական բովանդակությունը:

3. **Գործնական աշխատանք**

Աշխատանք սկզբնաղբյուրների և այլ փաստաթղթերի հետ:

Գծակարգերի կազմում:

ԲԱԺԻՆ III. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ, ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ, ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ա) Պատմագիտական գիտելիքների համակարգը

1. Պատմական գիտելիքի կառուցվածքը

Պատմական գիտելիքները կազմված են՝

ա) Պատմական պատկերացումներից, որոնք ձևավորվում են պատմական փաստերի՝ իրադարձությունների, դրանց կատարման տեղի և ժամանակի (պատմական վայր և տարեթիվ) կոնկրետ պատկերների ստեղծման միջոցով:

բ) Պատմական հասկացություններից

Հասկացությունը գիտելիք է, որի միջոցով ճանաչվում է երևույթների էությունը, ընդհանրացվում են նրանց էական կողմերը և հատկանիշները:

Պատմական փաստերի մասին պատկերացումների ստեղծումից հետո սովորողներն անցնում են փաստերի ներքին էության ճանաչմանը և նրանց միջև փոխկապների հաստատմանը:

Հիմնական դպրոցում պատմական փաստերի միջև հարաբերությունները բացահայտվում են փորձնական մակարդակով: Բարձր դասարաններում գիտելիքները բարձրացվում են ավելի բարձր՝ տեսական մակարդակ:

գ) Պատմական օրենքներից և օրինաչափություններից

Պատմական օրենքները պատմական երևույթների անհրաժեշտ, էական, կայուն և կրկնվող կապն է, իսկ օրինաչափությունները՝ բազմակի անգամ կրկնվող օրենքների գործողության արդյունք: Սա նշանակում է, որ պատմական փաստերի և պատմական գործընթացների էության բացատրությունը իրականացվում է նաև պատմական օրենքների և պատմական գործընթացի օրինաչափությունների ըմբռնման ձևավորման միջոցով:

դ) Պատմական մեթոդաբանությունից (մեթոդոլոգիայից)

Պատմական հասկացությունների և օրինաչափությունների ձևավորումը տեղի է ունենում գիտական մեթոդաբանության հիման վրա: Պատմության մեթոդաբանությունը կոնկրետացվելով վերածվում է պատմական ճանաչողության տեսության:

Պատմության մեթոդաբանությունը մշակում է անցյալի մասին գիտելիքի ձեռքբերման, ստացված փաստերի (տվյալների, տեղեկատվության) համակարգման և մեկնաբանության սկզբունքները և միջոցները՝ պատմական գործընթացի էությունը բացահայտելու և այն իր կոնկրետությամբ և ամբողջությամբ վերականգնելու համար:

ե) Պատմագիտական գիտելիքներից և պատմական աղբյուրներից (աղբյուրագիտական գիտելիքները)

Պատմության ուսումնասիրման ընթացքում աշակերտի մոտ ձևավորվում են գիտելիքներ հենց պատմական գիտության՝ պատմագիտության վերաբերյալ:

Հետևաբար, պատմական գիտելիքի կառուցվածքի մեջ մտնում պատմական գիտության մասին գիտելիքների ձևավորումը (նրա խնդիրների, բովանդակության, տեսական և մեթոդաբանական հիմքերի, պատմական աղբյուրների և հետազոտության հնարների մասին): Գիտական հավաստիությունը, պատմական փաստերի գնահատման նկատմամբ գիտական մոտեցումը հիմնվում է պատմական աղբյուրների իմացության վրա:Պատմական գիտելիքի կառուցվածքում կարևոր տեղ ունի աղբյուրագիտությունը: Առանց պատմական աղբյուրների տեսակների, դրանց նշանակության և դրանց հետ աշխատանքի հնարների մասին գիտելիքների չի կարող լինել գիտական մոտեցում պատմության ճանաչողության նկատմամբ և գիտական հավաստիության մեջ:

զ) Պատմական նյութով գործողության եղանակներից

Սովորողները ուսումնասիրում են պատմական փաստերը, վերարտադրում և սովորում են նախկինում ստացած գիտելիքների կիրառումը: Գործողության եղանակների մասին գիտելիքների հիման վրա, նրանք տիրապետում են որոշակի կարողությունների և հմտությունների, բարձրանում է նրանց ճանաչողական գործունեության մակարդակը:

Այսպիսով, ուսուցչի կողմից պատմական գիտելիքի, նրա դերի, կառուցվածքի և գործառույթների մասին գիտելիքները թույլ են տալիս արդյունավետորեն իրացնել սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման խնդիրները:

2. Փաստերի դերը պատմության ուսուցման մեջ

Այն ամենը, ինչ հավաստի արձանագրված է պատմության մեջ, ճշտված և ստուգված փորձով, կոչվում է փաստ: Փաստը լատիներեն բառ է, որը հայերեն նշանակում է կատարված, իրագործված:

Պատմության ճանաչողության գործընթացը սկսվում է փաստերի յուրացումից: Պատմական փաստի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն անկրկնելի է, որ այն հնարավոր չէ վերարտադրել և դիտել: Դրա համար անցյալի ինչ-որ պատմական փաստերի մասին պատկերացումների ձևավորման նպատակով անհրաժեշտ է զուգորդական կապեր ստեղծել դրանց և ժամանակակից առարկաների և երևույթների մասին ունեցած պատկերացումների միջև: Այսպես, որպեսզի սվորողների մոտ պատկերավոր պատկերացում ստեղծվի

Ալեքսանդրյան փարոսի մասին, որպես աշխարհի յոթ հրաշալիքներից մեկի, պետք է ամենից առաջ պատկերացում ունենալ ժամանակակից փարոսի մասին (նրա չափերը, այն նյութը, ինչից պատրաստվում է, նշանակությունը և այլն): Սակայն առանձին փաստերի իմացությունը դեռևս չի վկայում պատմության յուրացման մասին: Փաստերի հասարակ ամբողջությունը, առանց դրանց միջև կապերի, տանում է պատմական գիտելիքների ձևականացման, խանգարում պատմական նյութի գիտակցված յուրացմանը: Այսպիսով, պատմական փաստերը պատմության ուսուցման գործընթացում պետք են ոչ միայն իրենք իրենց համար (ինքնին), այլ գոյություն ունեցող էական կապերի համադրման և սահմանման համար, դրանց ընդհանրացման և համակարգի մեջ յուրացման համար: Պատմական փաստերը բազմաթիվ են: Որպեսզի հմուտ ձևով

տարվի դասավանդման գործընթացը, պետք է հստակ և ամբողջական պատկերացում ունենալ «պատմական փաստ» հասկացության մասին:

Պատմական փաստերի մեջ մտնում են.

I. Եզակի փաստերը, որոնք արտացոլում են եզակի իրադարձություններ: Դրանք պատմության մեջ տեղի են ունենում մեկ անգամ, որոշակի պայմաններում, պատմական դեմքերի խիստ ընդգծված շրջանակով և խիստ տեղայնացված թե՛ տարածության և թե՛ ժամանակի մեջ: Եզակի փաստերն անկրկնելի են: Օրինակ՝ Ավարայրի ճակատամարտը՝ եզակի պատմական փաստ է: Այն տեղի է ունեցել Ավարայրի դաշտում (հստակ վայր), 451 թ. Մայիսի 26-ին (կոնկրետ ժամանակ): Ճակատամարտին մասնակցել է հայոց զորքը Վ. Մամիկոնյանի և այլոց գլխավորությամբ:

II. Պատմական փաստերի 2-րդը խումբը տիպական փաստերն են, այսինքն՝պատմական երևույթները, որոնք արտացոլում են որոշակի պատմաշրջանի կամ դարաշրջանի բնորոշ գծերը: Օրինակ՝ կուռը և բահրան վկայում են ավատատիրական կարգերում ճորտ գյուղացիների վրա դրված հարկերի մասին: Այդ փաստերի ուսումնասիրման ընթացքում էական չի համարվում, թե այդ հարկերը ովքեր են վճարել՝ հայ, թե անգլիացի գյուղացիները: Այստեղ կարևոր է դրանց էական հատկանիշները, որոնցով տարբերվում են մյուս երևույթներից: Սա նշանակում է, որ պատմական երևույթը չունի կոնկրետ թվական, կոնկրետ վայր և կրկնվող է: Այն կարող է ընդգրկել մի քանի երկրներ և մի քանի դար, բնորոշ լինել մեկ կամ մի քանի, քաղաքակրթությունների համար: Բերենք մեկ ուրիշ օրինակ, «Արդյուաբերական հեղաշրջումը գործընթաց է, որը բնութագրում է ձեռքի աշխատանքի փոխարինումը մեքենայականով, անցումը ֆաբրիկային արտադրությանը և հանգեցրել երկու նոր դասակարգերի առաջացմանը»: Արդյունաբերական հեղաշրջումը բնորոշ և հատուկ է աշխարհի տարբեր երկրների և տարածաշրջանների համար: Դա կատարվել է այնտեղ, որտեղ առաջացել է կապիտալիստական հասարակարգը: Հետևաբար, պատմական այս փաստը դասվում է պատմական երևույթի շարքը: Մեթոդական գրականության մեջ կա պատմական փաստերի մեկ այլ խմբավորում, ըստ որի այն բաժանվում է.

1. Իրադարձությունների՝ դրանք եզակի, անկրկնելի փաստեր են
2. Երևույթների՝ դրանք բազմիցս կրկնվող համանման (անալոգիական) պատմական փաստերն են
3. Գործընթացների՝ դրանք իրավիճակների զարգացման հաջորդական փոփոխությունն է, ժամանակով (նույն ժամանակում տեղի ունեցող) իրար հետ կապված փաստերի պատճառ-հետևանքների կապերի շղթան:

Այս բաժանմամբ գործընթացներն առանձնացել են երևույթներից որպես առանձին փաստեր: Սակայն պետք է նշել, որ երևույթները, որպես տիպական փաստեր, նույնպես կապված են պատճառ-հետևանքային կապերով: Պատմական գործընթաները, վերջին հաշվով նույնպես երևույթներ են, միայն թե ի տարբերություն երևույթի, գտնվում են ընդհանրացման ավելի բարձր աստիճանում:

Պատմական փաստերը իրարից տարբերվում են.

ա. Ծավալով

բ. Բարդությամբ

գ. Կարևորությամբ

Օրինակ՝ «Հայ-հռոմեական պատերազմը» - եզակի, անկրկնելի փաստ է, իրադարձություն: Այն պատմության մեջ կատարվել է միայն մի անգամ, խիստ ընդգրկված ժամանակագրական շրջանակներով: Այս պատերազմին մասնակցել են կոնկրետ երկներ՝ Հայաստան, Հռոմ, Վրաստան, Աղվանք և այլն: Պատերազմը տեղի է ունեցել

որոշակի տարածքում՝ Հայաստանի սահմաններում և նրա սահմաններից դուրս: «Հայ-հռոմեկան պատերազմ» փաստը համարվում է բարդ փաստ և որպեսզի այն հասկացվի և յուրացվի, անհրաժեշտ է բացահայտել ավելի հասարակ և պարզ փաստերի միջոցով: Օրինակ՝ Տիգրանակերտի, Արարծանիի ճակատամարտի, Արտաշատի պայմանագրի և այլնի միջոցով: Նշված այս փաստերը նույնպես պատմական իրադարձություններ են: Այսպիսով, պարզ է դառնում, որ եզակի փաստերը որպես պատմական իրադարձություններ միասեռ չեն: Կան ավելի բարդ փաստեր, ինչպես օրինակ, մեր նշած «Հայ-հռոմեական պատերազմ» փաստը, որն ավելի բարդ է և բացահայտվում է ավելի պարզ փաստերի միջոցով:

Ըստ ծավալի և բարդության աստիճանի փաստերը լինում են.

ա. Առաջին կարգի

բ. Երկրորդ կարգի

գ. Տարրական

Այն պատմական փաստերը, որոնք համարվում են բարդ փաստեր և դրանց բացահայտման համար պահանջվում են լրացուցիչ կոնկրետ տեղեկություններ, մեթոդական գրականության մեջ անվանվում են 1-ին կարգի փաստեր: Ասենք օրինակ՝ «850-855 թթ. համաժողովրդական ապստամբությունն արաբական տիրապետության դեմ» փաստը չի կարող բացահայտվել և հասկացվել առանց երկրորդ կարգի փաստերի իմացության: Երկրորդ կարգի են կոչվում այն փաստերը, որոնք առաջին կարգի փաստերի համեմատությամբ ավելի նվազ բարդություն ունեն և նույնպես կարող են կոնկրետացվել: Առաջին կարգի փաստերը չեն կարող բացահայտվել և հասկացվել առանց երկրորդ կարգի փաստերի իմացության:

Երկրորդ կարգի փաստերը ևս կարող են ավելի կոնկրետացվել: Այսպես Արածանիի ճակատամարտը իր մեջ ներառում է այնպիսի մանրամասներ, ինչպիսին են հռոմեական և հայկական ուժերի դասավորությունը, զորքերի թիվը, զինվածությունը, ճակատամարտի դրվագները: Այս փաստերը որակավորվում են որպես պատմական գիտելիքների սկզբնական տարրեր՝տարրական փաստեր: Տարրական փաստերն արտացոլում են միայն մեկ հասարակ և պարզագույն երևույթ կամ երևույթի ինչ-որ մի հատկություն: Միայն տարբեր կարգի փաստերի զուգակցությամբ կարելի է ստեղծել պատմական իրադարձության կոնկրետ պատկեր: Դա պահանջում է անհրաժեշտ և բավարար նյութի, պատմական փաստերի քանակի հստակ ընտրություն, այսպես կոչված հենակետային կամ հիմնական փաստեր, որոնք սովորողները պետք է յուրացնեն երկար ժամանակի ընթացքում (ամբողջ ուստարվա, դպրոցական տարիների, կամ նույնիսկ ամբողջ կյանքի ընթացքում): Բացի հիմնական փաստերից ուսուցիչները դասին հենվում

են նաև ոչ հիմնական փաստերի վրա, որոնք անհրաժեշտ են ինչպես հիշելու, այնպես էլ դեպքերի և երևույթների կապերի համար:

Փաստերի լուսաբանման աստիճանը կախված է դրանց կարևորությունից: Հիմնական փաստերը, որոնք որոշում են պատմական գործընթացի շարժումն ու զարգացումը և որոնց հիման վրա ձևավորվում են դասընթացի առաջավոր գաղափարները, պետք է բացահայտվեն առավել լրիվ ու ամբողջական, իսկ ոչ հիմնական փաստերը, պետք է լուսաբանվեն ոչ լրիվ կերպով: Այս դեպքում պատմության յուրացումը կլինի իմաստավորված, բավականին լրիվ ու կայուն: Իրադարձությունները և երևույթները սերտորեն կապված են մեկը մյուսի հետ: Մի կարգի փաստերի ուսումնասիրումը օգնում է հասկանալ մյուսները: Իրադարձությունների (դեպքերի) և երևույթների բովանդակությունը լրացնում են մեկը մյուսին, սովորեցնում են տեսնել ոչ միայն անհատական գծերը, այլ նաև բացահայտել տիպականը, որը հատուկ է տվյալ դարաշրջանին, հետևել պատմական զարգացման գործընթացին:

Իրադարձությունների և երևույթների կապերը արտահայտվում նրանում, որ եզակի և անկրկնելի փաստերը կամ իրադարձությունները օգնում են հասկանալու և յուրացնելու տիպական փաստերը, այսինքն՝ երևույթները: Օրինակ՝ ուսումնասիրելով «Հայաստանի պետական կարգը և սոցիալական կառուցվածքը Արշակունիների օրոք» թեման, սովորողները գիտակցում են պետական կարգի և սոցիալական կառուցվածքի կապերն ու փոխհարաբերությունները:

Փաստերը տեսական եզրակացությունների և ընդհանրացումների հիմքն են: Ուստի առաջանում է դրանց հարաբերակցության մեթոդական խնդիրները: Եթե գերակշռում են ուսուցչի հաղորդումը և սովորողների կողմից կոնկրետ պատմական փաստերի յուրացումը առանց դրանց միջև բավարար կապերի ու ընդհանրացման, ապա դասավանդումը վերածվում է փաստագիտության: Եթե ուսուցչի շարադրանքում գերակշռում են եզրակացությունները և ընդհանրացումները առանց բավարար քանակությամբ կոնկրետ փաստերի վրա հենվելու, ապա դասավանդումը վերածվում է սոցոլոգիայի: Ելքը փաստերի և եզրակացությունների ճիշտ և խելացի զուգակցումն է:

Բ) Պատմության ուսուցման միջոցները

1. Ուսուցման միջոցները և նրանց խմբավորումը

Ուսուցման ընթացքում օգտագործվում են ուսուցման տարատեսակ և տարաբնույթ նյութական միջոցներ:

Դրանց մեջ գլխավորը պատմության դասագիրքն է: Ի տարբերությունմ ուսուցման մյուս միջոցների՝ դասագիրքը բովանդակում է որևէ դասարանի պատմության դասընթացի գիտելիքների համակագը, սահմանում է ուսումնական նյութի ծավալը, խորությունը և բացահայտման տրամաբանությունը: Պատմության դասընթացի բովանդակությունը դասագրքում տրվում է հիմնականում բառերի և խոսքի միջոցով: Դասագրքի մյուս բաղադրիչներն աղյուսակները, սխեմաները, նկարազարդումները (պատկերազարդումները) հարցերն ու առաջադրանքներն են: Դասագիրքը ուսուցման

միջոցների հիերարխայի մեջ համարվում է հիմնական միջոցը, որը նախատեսված է պատմական գիտելիքի հաղորդման, իմաստավորման, ամրապնդման, համակարգման համար: Դասագիրքը իր ազդեցությունն է թողնում ուսուցման մյուս միջոցների վրա, որոնք հագեցնում են պատմության դասերը:

Ուսուցման միջոցների զինանոցի հարստացումը ընդլայնում է սովորողների ակտիվ ճանաչողական-ստեղծագործական գործունեության կազմակերպման հնարավորությունները:Ուսուցման տարբեր միջոցները բաժանվում են՝

- ըստ նրանցում օգտագործված նյութի բնույթի՝ փաստագրական կամ գեղարվեստական
- ըստ ընկալման տեսակի՝ տեսողական, լսատեսողական, լսողական
- ըստ նյութի հաղորդման եղանակի՝ դինամիկ և ստատիկ տեխնիկական միջոցների
- ըստ նրանց հետ աշխատանքի կազմակերպման ձևերի՝ համադասարանային, խմբային և անհատական (բաշխիչ, պատկերային նյութերի հիման վրա):

Ուսուցման միջոցները նախատեսված են ընկալման տարբեր տեսակների, պատմական իրականության արտացոլման տարբեր ձևերի, նութի հաղորդման տարբեր եղանակների, նրանց հետ աշխատանքի տարբեր ձևերի համար: Մեծ է ուսուցման միջոցների դերը աշակերտների պատկերացումների ձևավորման, նրանց հիշողության մեջ պատմական գիտելիքների ամրապնդման, նրանց դիտողականության, երևակայության և խոսքի զարգացման գործում:

2. Պատմության ուսուցման միջոցների (ՈւՄ) տեսակները

Ուսուցման նյութական միջոցները բաժանվում են երկու մեծ խմբի՝

- պատմական տեղեկատվության կրող միջոցներ
- պատմական տեղեկատվության հաղորդման միջոցներ

Պատմության ուսուցման տեղեկատվություն կրող միջոցները լինում են 4 տեսակ: **Դրանք են՝**

- Ուսուցման զննական միջոցներ
- Ուսուցման էկրանային միջոցներ
- Ուսուցման ձայնային (լսողական) միջոցներ
- Էկրանա-ձայնային (լսատեսոական) միջոցներ
- Ուսուցման զննական միջոցներն իրենց հերթին բաժանվում են հետևյալ խմբերի՝
- Առարկայական զննական միջոցներ
- Տպագիր զննական միջոցներ

Խորհրդային շրջանի մեթոդիստ-գիտնական Ա. Վագինը առաձնացնում է նաև ուսուցման ներքին միջոցներ, որի տակ հասկացվում է պատրաստի պատկերների վրա հենվելը, որ ընկալում է սովորողը շրջապատող աշխարհի իրական առարկաների և երևույթների ինքնուրույն դիտարկման ճանապարհով, այլ կերպ ասած, ուսուցչի կողմից նյութի ցուցադրումը այն դիտողական պատկերացումների հիման վրա, որն արդեն ունի սովորողը: Սակայն պետք է ասել, որ այդ պատկերացումները սովորողներից

յուրաքանչյուրի մոտ անհատական է և կախված նրա անձնական կենսափորձից և ընդունակություններից: Հաճախ անցյալի պատկերների արտացոլումը սովորողի գիտակցության մեջ պարունակում է արդիականացման տարրեր՝ կախված նրա անհատականությունից: Այդ թերությունների վերացմանը նպաստում են առարկայական և պատկերային զննականությունը:

ա. Առարկայական զննականություն

Առարկայական զննականությունը ունի ճանաչողական արժեք, ենթադրում է անցյալի իսկական իրեղեն հուշարձանների կամ դրանց նյութական հետքերի անմիջական ընկալումը:Առարկայական միջոցների մեջ մտնում են:

- **կոթողային պատմական հուշարձանները** (օրինակ՝ բուրգերը, տաճարները, ճարտարապետական հուշարձաններ, հռոմեական ջրագծերի մնացորդներ), հրապարակները և այլն: Այդպիսի հուշարձաններում անփոփոխ տեսքով մեզ են հասել համեմատաբար ոչ շատ նմուշներ, բայց և այնպես այդ քչերն անգամ չեն կարող սովորողների բացարձակ մեծամասնության համար դառնալ անմիջական ընկալման առարկա,
- **պատմական իրադարձությունների հիշարժան վայրերը** (Մոնմարտրը Փարիզում, Սենատի հրապարակը Պետերբուրգում, Կրասնայա Պրեսնյան Մոսկվայում, Սարդարապատը, Շուշին և այլն),
- **անցյալի իրեղեն հուշարձանները**, որոնց թվին են պատկանում հեռավոր անցյալի և առավել մոտ պատմական ժամանակների աշխատանքի գործիքները, կենցաղի առարկաները, հագուստը, զարդարանքը, փոխադրամիջոցները և այլն:

Դասերին սրանց կիրառման հասանելիությունը ավելի բարձր է: Դրանք ցուցադրվում են թանգարաններում (կենտորանական, տեղական, նույնիսկ դպրոցական թանգարաններում): Պատմության թանգարանները կարևոր ճանաչողական նշանակություն ունեն, մեծ դեր են խաղում սովորողների գաղափարաքաղաքական և աշխատանքային դաստիարակության գործում:

բ. Տպագիր զննական միջոցները

Սրանք այն միջոցներն են, որոնք պատրաստվում են տպագրական տեխնիկայի օգնությամբ: Այս միջոցները գոյություն ունեն թղթի (կարող է թուղթը սոսնձված լինել ստվարաթղթի կամ գործվածքի վրա) վրա:

Տպագիր միջոցները բովանդակում են առարկաների և երևույթների պատկերներ և նկարագրություններ, համակարգված գիտական և կիրառական բնույթի տեղեկություններ, տեղեկատվական տվյալներ և առաջադրանքներ՝ մշակված դասավանդման համար հարմար ձևով:

Տեղեկատվություն կրող «թղթային» միջոցները նյութական են, իրեղեն, դրանք կարելի է շոշափել, կարելի է վերցնել ձեռքը: Պատկերն այստեղ, որպես կանոն, տրվում է խոշոր պլանով, դրա համար էլ այն կարելի է դիտել առանց հատուկ սարքերի օգնության,

սովորական լուսավորության պայմաններում: Տպագիր ձեռնարկները (միջոցները) միշտ անշարժ են՝ ստատիկ: Հնարավոր է տպագիր ձեռնարկները անել տարբեր չափերի, ընդ որում բավականին մեծ չափերի, որը թույլ կտա այնտեղ տեղավորել նկարներ՝ բավականին բարդ բովանդակությամբ: Քանի որ տպագիր միջոցները ստատիկ են, այն կարելի է ուսումնասիրել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է նրանում դրված տեղեկատվության լիարժեք իմաստավորման համար: Ապացուցված է, որ ստատիկ պատկերները օժտված են մարդկային հիշողության մեջ խորը և երկար ժամանակ տպավորման և դրոշման հատկությամբ: Վերջապես իր նյութական լինելու շնորհիվ հեշտ է ցուցադրել ինչպես առանձին, այնպես էլ մեկը մյուսի հետ զուգակցված:

Տպագիր զննական միջոցները իրենց հերթին լինում են.

1. Պատկերային զննական միջոցներ, որոնց մեջ մտնում են.

- ճարտարապետական հուշարձանների վերակառուցվածքները
- աշխատանքի և կենցաղի առարկաների պատճեները, վերակազմությունները
- կոմպոզիցիոն պատկերային միջոցները՝ ուսումնական և գեղարվեստական նկարների վերատպությունները
- փաստագրական (վավերագրական) հարթ միջոցները՝ փաստագրական լուսանկարները, ժամանակակիցների նկարները

2. Պայմանական-գրաֆիկական միջոցներ

ՊԳՄ-ը արտացոլում են պամական երևույթի էությունը, դրանց փոխկապերը և դինամիկան՝ պայմանական նշանների և լեզվի միջոցով:

Սրանք չեն արտացոլում իրական պատկերները, բայց առարկաները և երևույթները հաղորդում են վերացական կերպով՝ տրամաբանական մշակման համապատասխան: Այդ միջոցներին են պատկանում.

Քարտեզը հնարավորություն է տալիս որոշել իրադարձության տեղը և նշանակությունը ինչպես ժամանակի, այնպես էլ տարածության մեջ, որը թույլ է տալիս ակնառու կերպով պատկերել նրանց փոխհարաբերությունները ժամանակի և տարածության մեջ

Սխեման հասկացվում են գծագիրը կամ նկարը, որը աշակերտին ծանոթացնում է պատմական երևույթների որոշ էական հատկանիշների հետ: Սխեմատիկ նկարների մեջ մտնում են ճակատամարտերի, քաղաքական կառուցվածքի, տնտեսական կապերի և այլ սխեմաներ, որոնց օգնությամբ իրականացվում է առարկայի, երևույթի վերլուծությունը և համադրությունը:

Սխեմատիկ գծագրերը օգնում են բացահայտել հասարակական երևույթների միջև բազմազան կապերն ու հարաբերությունները: Սխեմատիկ գծագրերում օգտագործվում են գծեր, սլաքներ, եռանկյունիներ, քառակուսիներ: Սրանց մեջ մտնում են դիագրամները, ապլիկացիաները:

Ապլիկացիան պատմական տարբեր օբյեկտների (աշխատանքի գործիքներ, տեխնիկական հարմարանքներ, տեղաշարժման միջոցներ, ռազմական տեխնիկայի

նմուշներ, կենցաղի տարբեր առարկաներ) առանձին պատկերներն են, ինչպես նաև այս կամ այն շրջանի հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների կերպարներ: Սովորաբար ապլիկացիային բնորոշ է լակոնիզմը, երկրորդական բնույթի մանրամասների բացակայությունը և ընդհանրացվածությունը: Ապլիկացիան համարվում է առավել լայն բովանդակության խորհրդանշան (նիշ), քան այն, որ նրանում անմիջապես պատկերված է: Զինվորի անձը ծառայում է որպես զորքի խորհրդանիշ: Ապլիկացիայի հիմնական տարբերիչ գիծը նրա շարժունությունն է: Մի պատկերը կարելի է հեշտությամբ փոխարինել մյուսով, ցանկացած զուգակցությամբ ամբողջացնել նրա մանկավարժական մտահղացմանը համապատասխան:

Դիագրամը (տրամագիր) ձևավորվում է ստատիկական (անշարժ) նյութի մեջ տեսնել հասարակական երևույթների զարգացումը, որոշել այդ երևույթների միջև եղած ներքին կապերը: Դիագրամը իրենից ներկայացնում է ինքնատիպ գծագիր, որը զննականորեն ցույց է տալիս տարբեր մեծությունների միջև հարաբերակցությունը: Դիագրամում յուրաքանչյուր մեծության մեջ արտացոլված է ինչ որ պատկերի ուղղաձիգ կտրվածք (ուղղանկյուն, շրջան և այլն), ընդ որում ընտրվում է չափման հարմար միավոր: Օրինակ՝ «Արդյունաբերական արտադրանքի դինամիկան 1929-1932թթ.» դիագրամը փատորեն թույլ է տալիս դատել ոչ միայն արտադրության աճի և անկման մասին՝ ըստ առանձին տարիների, այլ տնտեսական ճգնաժամի օրինաչափությունների մասին: Դիագրամը օգտագործվում է ուսումնասիրվող և ժամանակով սահմանափակված երևույթները և գործընթացներ համեմատելու կամ հակադրելու համար: Դիագրամը հնարավորություն է տալիս լակոնիկ ոճով համառոտ արտահայտել հասարակական բարդ գործընթացները:

Աղյուսակներ. սրանց հիմնական տերբերիչ առանձնահատկությունն այն է, որ այն բովանդակում է մի քանի թեմատիկ համակարգված գիտելիքների «ծաղկաքաղ»: Մեթոդիկայում հիմնականում քննարկվում են այն աղյուսակները, որոնք նյութը խմբավորում են ըստ ուղղահայաց, հորիզոնական սյունակների կամ այդ երկու սյունակները միասին: Սակայն աղյուսակում տեղեկությունները հաճախ կարող են արտահայտվել նաև պատկերավորման ձևով: Այս խմբին են պատկանում այն աղյուսակները, որոնք տեղադրված են զննական միջոցների սերիայի մեջ:

Աղյուսակներում, որպես կանոն, կարող են ընդգրկվել տարբեր նյութերը՝ նկարներ, ծաղկանկարներ, նկարների վերատպություններ, փաստագրական լուսանկարներ, սխեմաներ դիագրամներ և այլն: Աղյուսակներում օբյեկտների քանակը, դրանց բնույթը, տեղադրման կարգը (հերթականությունը), բովանդակության բացահայտման տրամաբանությունը, այս ամենը որոշվում է այն խնդիրներով, որոնք դրված են յուրաքանչյուր կոնկրետ աղյուսակի առջև:

Մինչև այժմ խոսվում էր ուսուցման ցուցադրական միջոցների մասին: Սակայն ներկայումս դպրոցներում լայն տարածում է ստանում սովորողների անհատական աշխատանքի միջոցները՝ բաշխիչ պատկերազարդ նյութերը, որոնք կազմված են երկու բաղադրիչից՝ նկար և առաջադրանք: Առանձին քարտերի հարցերը և առաջադրանքները վերաբերում են նկարի բովանդակությանը, բայց հաճախ կարող է դուրս գալ նրա բովանդակության սահմաններից:

Անհատական բաշխիչ քարտեր. սրանք նախատեսված են անհատական աշխատանքի համար: Բաշխիչ քարտերը կազմված են երկու փոխկապակցված բաղադրիչներից՝ նկարից և առաջադրանքից: Առանձին քարտերի հարցերը և առաջադրանքները վերաբերում են առաջին հերթին նկարի (նկարազարդման) բովանդակությանը, բայց շատերը դուրս են գալիս պատկերների շրջանակներից: Եթե խոսենք բաշխիչ քարտերի պատկերավորման կողմի մասին, ապա քարտերի մեջ զետեղված են ամենատարբեր բնույթի նկարներ՝ տեղանքի պլաններ, հատակագծեր, քարտեզ-սխեմաներ, սխեմաներ, աղյուսակներ, նկարներ և այլն: Աղյուսակները, բաշխիչ նյութերը շատ են, որովհետև դրանք ծառայում են ուսումնական նյութի ընդհանրացման բուն նպատակին: Բաշխիչ նյութերը սերտորեն կապված են ցուցադրական տպագիր միջոցների հետ՝ քարտեզ, նկար, աղյուսակ: Օրինակ՝ քարտերի վրա շատ նկարներ մարմնավորում են դասագրքի բովանդակության տեսողական պատկերները: Բաշխիչ նյութերն այնպիսի միջոցներ են, որոնք նպաստում են սովորողների ճանաչողական ինքնուրույնության զարգացմանը: Բաշխիչ նյութերը նախատեսված են սովորողների գիտելիքների ամրապնդմանը, կրկնությանը և ընդհանրացմանը, ինչպես նաև ստուգմանը: Այն հանդես է գալիս որպես միջոց ավելի վաղ ուսումնասիրված նյութի խոր վերլուծության համար, սովորողներին արդեն հայտնի պատմական փաստերի միջև նոր կապերի հայտնաբերմանը ու հաստատմանը: Առանձին դեպքերում այս միջոցը կիրառություն է գտնում նաև նոր նյութի ուսումնասիրման ժամանակ՝ կոնկրետացնելով սովորողների գիտելիքները: Քանի որ բաշխիչ քարտի վրա առաջադրանքն ունի բարդության տարբեր աստիճան, նյութը կարելի է օգտագործել տարբերակված, պատրաստվածության տարբեր մակարդակ ունեցող սովորողների նկատմամբ: Քարտերով աշխատանքը կարող է կրել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ բնույթ (օրինակ, զրույցը համասեռ բովանդակությամբ քարտով, ճակատային ինքնուրույն աշխատանք): Սովորողը կարող է քարտով աշխատել տնային աշխատանքը կատարելիս: Եզակի առանձին քարտերի հետ միասին բաշխիչ նյութերը կարելի է օգտագործել համալիրի մեջ՝ զուգակցելով մեկը մյուսի հետ:

Գ) Պատմության գործնական աշխատանքներ

1. Մեթոդական նյութերի պատրաստում գործնական աշխատանքների համար

Ուսումնական նյութեր

Ուսումնական նյութերը (հարցաթերթիկներ, հուշաթերթիկներ, գծակարգեր, խնդիր-առաջադրանքներ, լրացուցիչ նյութեր, թեստային առաջանքներ և այլն) ապահովում են ուսուցման բարձր որակ և արդյունավետություն: Ստորև բերված նյութերը ծառայելու են ուսուցչին որպես ուղեցույց և օգնելու են նրանց նմանատիպ նյութեր ստեղծելու ու ուսուցման ընթացքում կիրառելու համար:

ա. Հարցաթերթիկներ

Սկզբնաղբյուրների հետ արդյունավետ աշխատելու և դրանք ճիշտ հասկանալու համար շատ կարևոր է աշակերտների ուշադրությունը հրավիրել որոշ կողմնորոշիչ հարցերի վրա: Ստորև ներկայացվում են փաստաթղթերի ուսումնասիրմանն ուղղված հետևյալ հարցերը՝

1. Ի՞նչ փաստաթուղթ է սա (սկզբնաղբյուրի տեսակը): Ե՞րբ է այն ստեղծվել:
2. Ո՞վ (ովքեր) է սկզբնաղբյուրի հեղինակ(ներ)ը և ի՞նչ նպատակով է ստեղծել այն: Ի՞նչ գիտենք նրա մասին
3. Սկզբնաղբյուրի հեղինակ(ներ)ը իրադարձությունների նկարագրության մասնակի՞ց է, թե ստեղծել է ուրիշների տեսածների և լսածների հիման վրա: Ե՞րբ է ստեղծվել սկզբնաղբյուրը:
4. Սկզբնաղբյուրի հեղինակ(ներ)ը չեզոք է, թե ունի որոշակի շահագրգռվածություն, ո՞րն ազդել է նրա ստեղծածի վրա:
5. Սկզբնաղբյուրը ստեղծվել է անձնական օգտագործման, փոքր խմբի, թե մեծ լսարանի համար:
6. Սկզբնաղբյուրը պարզապես տեղեկացնող է, թե ունի նաև համոզելու նպատակ: Սկզբնաղբյուրի ոճի միջոցով պարզեք՛ հեղինակը փորձում է անաչառ լինել, թե համոզող:
7. Սկզբնաղբյուրը գրվել է իրադարձությունների ընթացքում, դրանցից անմիջապես հետո, թե որոշակի ժամանակ անց:
8. Ինչո՞ւ է այս փաստաթուղթը կարևոր:
9. Ո՞ւմ է ուղղված սկզբնաղբյուրը (կամ ու՞մ համար է):
10. Ո՞րն է ամենակարևոր տեղեկատվությունն այս փաստաթղթում: Որքանո՞վ է այն արդիական:
11. Նշեք երեք խնդիր, որոնք կարևորվում են սկզբնաղբյուրում:
12. Ի՞նչ անծանոթ բառեր կան փաստաթղթում: Ի՞նչ են դրանք նշանակում:
13. Փաստաթղթի որևէ մաս արդյոք անհասկանալի է: Ինչո՞ւ:
14. Սկզբնաղբյուրի ո՞ր հատվածներից եք բխեցնում նախորդ կետի ձեր պատասխանները: Մեջբերեք:
15. 1-2 հարց ուղղեք սկզբնաղբյուրի հեղինակներին:
16. Նկարագրե՞ք, թե ինչպես վերլուծեցիք փաստաթուղթը:

բ. Հուշաթերթիկներ

Հուշաթերթիկները կամ տրամաբանական սխեմաները շատ արդյունավետ միջոցներ են աշակերտների կարողությունները և հմտությունները զարգացնելու համար: Դրանք ուղղորդում են աշակերտներին՝ ինչին ավելի ուշադրություն դարձնել, ինչպես վերլուծել, ընդհանրացնել և համակարգել գիտելիքները: Հուշաթերթիկները ցույց են տալիս տրամաբանական մտածողության հաջորդական քայլերը, այսինք՝ ալգորիթմը:

Ապստամբությունների ուսումնասիրման

ա. Ապստամբության պատճառների որոշում:
բ. Ինչպես է սկսվում ապստամբությունը:
- Ինչն է առիթ ծառայել ապստամբության համար:
- Ո՞վ է եղել ապստամբության ղեկավարը:
- Ինչպիսին էր ապստամբության կազմը:

գ. Ապստամբության ընթացքի լուսաբանումը:
- ապստամբների գործողությունները:
- նրանց նպատակը, ծրագիրը, պլանները, պահանջները:

դ. Ինչպես ճնշվեց ապստամբությունը: Բացատրեք պարտության պատճառները:
ե. Ինչ հետևանքներ (արդյունքներ) ունեցավ ապստամբությունը:

Քաղաքական գործչի գնահատման

ա. Ո՞ր դասակարգի շահերն է արտահայտում: Որո՞նք են այդ դասակարգի նպատակները և ձգտումները:
բ. Անձնական ի՞նչ որակների են տիրապետում: Հարմա՞ր են դրանք առաջադրված նպատակների լուծման համար:
գ. Ի՞նչ միջոցներ են օգտագործվում նպատակներին հասնելու համար:
դ. Ի՞նչ արդյունքներ է տվել նրանց գործունեությունը: Գնահատեք նրանց:

Պետական կառուցվածքի ուսումնասիրման

ա. Ո՞ր դասակարգի շահերն է պաշտպանում պետությունը: Ո՞րն է նրա խնդիրը:
բ. Ինչպիսի՞ն է պետությունն իր կառուցվածքով:
- Ո՞ւմ էր պատկանում իշխանությունը կենտրոնում:
- Ո՞ւմ էր պատկանում իշխանությունը տեղերում:
- Ինչպիսի՞ն էր զորքի կազմը:

գ. Ավելի վաղ շրջանի համեմատությամբ ի՞նչ փոփոխություններ են կատարվել պետական կառուցվածքում: Ինչո՞վ է դա պայմանավորված:
դ. Ո՞վ է տնօրինում դատարանը, ճնշում ժողովրդի ելույթները:

Դասակարգերի հարաբերությունների ուսումնասիրման

ա. Իշխող դասակարգի դրությունը.
- ի՞նչ սեփականության է տիրապետում,
- ինչո՞վ է զբաղվում,
- ում և ինչ ձևով է շահագործում:

բ. Հպատակ դասակարգի դրությունը.
- ի՞նչ ունեն կամ ինչի՞ց են օգտվում,

- ում համար են աշխատում:

գ. Շահագործման ի՞նչ ձևեր էին այդ ժամանակ համարվում գլխավոր:

դ. Ինչպե՞ս էին բաշխվում աշխատանքի աղբյուրները:

Պատերազմների ուսումնասիրման

ա. Պատերազմի պատճառը և բնույթը.

- հիմնական հակասություններ, որոնցից ծագում է պատերազմը,
- Պատերազմի նախապատրաստումը, ուժերի հարաբերակցությունը և պատերազմող կողմերի ծրագրերը:

բ. Պատերազմի ընթացքը.

- պատերազմի առիթը և նրա սկիզբը,
- հիմնական փուլերը և գլխավոր ճակատամարտերը,
- պատերազմի ավարտը և հաշտության պայմանները:

գ. Պատերազմի ելքի որոշակի պատճառները.

- հասարակական-քաղաքական կարգերի ազդեցությունը հակառակորդների դրության վրա,
- պատերազմի ազդեցությունը միջազգային հարաբերությունների հետագա ընթացքի վրա:

Ճանաչողական խնդիրների լուծման

ա. Ուշադիր կարդալ խնդրի պայմանը և հիշել դրան վերաբերող հարցերը:

բ. Կշռադատել խնդրի պայմանի տվյալները, որոշել, թե ինչ կարող են տալ այդ պայմանները հարցերին պատասխանելու համար:

գ. Եթե պայմանում չեն բավարարում ինչ-որ տվյալներ, հիշել այդ թեմայից ճեռքբերած գիտելիքները և մտածել, թե դրանցից ինչը կօգնի վճռելու խնդիրը:

դ. Պատասխանները անպայման ապացուցել: Եթե խնդրի պայմանից բխում են մի քանի հետևություններ, պետք է ապացուցել դրանցից յուրաքանչյուրը և հստակ ու համոզիչ շարադրել ապացույցը:

ե. Ստուգել արդյոք ձեր լուծումը համարվում է խնդրի ճիշտ պատասխան: Չկա ոչինչ ավելորդ, որը չի վերաբերում խնդրին:

զ. Ստուգել՝ չկան խնդրի պայմաններում տվյալներ, որոնք հակասում են ձեր պատասխանին: Բոլոր տվյալներն են հաշվի առնվել:

է. Ստուգել միմյանց չեն հակասում խնդրի պայմանի տվյալները, արդյոք չեն օգնում դրանք հասկանալու նույն պայմանի մյուս տվյալների նշանակությունը:

Պատմական անհատների բնութագրման

ա. Պատմական պայմանները, որոնց մեջ ընթացել է անհատի գործունեությունը (ե՞րբ և որտե՞ղ է ապրել պատմական գործիչը):

բ. Խնդիրներ, որ ձգտում է լուծել պատմական գործիչը, դրանց լուծման ուղիները և մեթոդները:
գ. Որևէ դասակարգի պատկանելը և նրա շահերի արտահայտիչ լինելը:
դ. Նրա արտաքին նկարագրությունը և անձնական որակների նշանակությունը:
ե. Պատմական անհատի գործունեության արդյունքների գնահատումը:

Գաղափարական հոսանքի վերլուծության

ա. Գաղափար(ներ)ի առաջացման պատմական նախադրյալները:
թ. Գլխավոր ներկայացուցիչները: Ո՞ւմ շահերն էին արտահայտում:
գ. Ինչո՞ւ էին քննադատության ենթարկում:
դ. Ո՞րն էր նրանց իդեալը, ի՞նչ էին ձգտում հաստատել:
ե. Ի՞նչ միջոցներ էին առաջ քաշում նպատակին հասնելու համար:
զ. Ինչպիսի՞ն էր այդ հոսանքի նշանակությունը հասարակության կյանքում:

Ապացուցման կարողությունների զարգացման

ա. Առանձնացնել փաստարկները, դատողությունները և եզրահանգումները:
բ. Վերլուծել առաջադրանքը և պարզել, թե ինչ է պետք ապացուցել:
գ. Սահմանել այն եզրակացությունը, որ պետք է ապացուցել:
դ. Որոշել այն աղբյուրները, որոնք պետք է օգտագործվեն եզրակացությունները փաստարկելու համար:
ե. Առանձնացնել էական փաստերը, որոնք հաստատում են եզրակացությունները:
զ. Կառուցել տրամաբանական ապացույցներ, դրանք կապել եզրակացությունների հետ:
է. Պարզել, բոլոր փաստարկներն են արդյոք ապահովվել:

Պատմական դեպքերի և երևույթների համեմատության

ա. Վերլուծել դեպքը կամ երևույթը, գտնել համեմատության գիծը:
բ. Գտնել նմանությունը և տարբերիչ գծերը:
գ. Հնարավորության սահմաններում առանձնացնել երևույթի փուլերը, որոշել՝ ինչն է փոխվում փուլերում և ինչն է մնում անփոփոխ:
դ. Անել բոլոր անհրաժեշտ եզրահանգումները՝ կատարված համեմատությունների հիման վրա:

Կարդացած գրքի վերաբերյալ զրույցի կազմակերպման

ա. Գրքի հեղինակը և վերնագիրը:
բ. Գրքում նկարագրվող դարաշրջանը և պատմական իրադարձությունները:
գ. Գրքում գործող հերոսները, ձեր վերաբերմունքը նրանց նկատմամբ:

դ. Ձեր կարծիքը և տպավորությունները կարդացած գրքի մասին:
ե. Ուրիշ էլ ի՞նչ գործեր ունի հեղինակը և ինչի՞ մասին են դրանք:

Կարդացած գրքի քննարկում

ա. Ներածական խոսք գրքի հեղինակի և գիրքը գրելու պատմության մասին:
բ. Ներածական խոսք պատմական այն իրադարձությունների մասին, որում կյանքի է կոչվել այդ գիրքը:
գ. Աշակերտների ելույթները և բանավիճային հարցերի քննարկումը:
դ. Ուսուցչի եզրափակիչ խոսքը, որի ընթացքում ամփոփվում են քննարկման արդյունքները:

Պատմությունից էքսկուրսիաների (ցուցադրումների) անցկացման

ա. Էքսկուրսիայի թեման:
բ. Էքսկուրսիայի նպատակի և խնդիրների հայտնումը:
գ. Էքսկուրսիայի տիպերի և տեսակների բացահայտումը:
դ. Էքսկուրսիայի մեթոդների և հնարների ցուցադրումը,
ե. Էքսկուրսիայի թեմայի ընտրությունը:
զ. Աշակերտներին տրվող ճանաչողական առաջադրանքների մշակումը:

Նկարի վերլուծության

Դիտում

2-3 րոպե ուսումնասիրեք նկարը: Ընդհանուր պատկերացում կազմեք նկարի մասին, ապա նկարը բաժանեք հատվածների և դիտեք մանրամասները:

Ստորև բերվող աղյուսակում թվարկեք նկարում պատկերված մարդկանց, առարկաները և գործողությունները.

Ֆիլմի վերլուծություն

Ֆիլմի վերնագիրը

Մինչև ֆիլմը դիտելը

- Դատելով ֆիլմի վերնագրից՝ ինչի մասին է այն լինելու: Թվեք 1-2 գաղափար, կերպար:

Գաղափար	Կերպար
1.	1.
2.	2.

Ֆիլմի դիտումից հետո.

- Նշեք ֆիլմի տեսակը.

  - մուլտֆիլմ,

- վավերագրական ֆիլմ,
- քարոզչական ֆիլմ,
- կարճ բեմականացամ,
- ուսումնական ֆիլմ,
- գեղարվեստական ֆիլմ,
- անիմացիոն ֆիլմ,
- այլ:

- Նշեք այն գաղափարները, կերպարները, որոնք դուք ակնկալում էիք տեսնել նախօրոք և ֆիլմի դիտումից հետո:
- Ո՞րն է ֆիլմի հիմնական գաղափարը:
- Նշեք, թե որքանով էր ֆիլմը հաջողված՝ իր հիմնական գաղափարն արտահայտող ձևերն ու միջոցներն օգտագործելիս:
- Ֆիլմն ավելի շատ ազդեց ձեր բանականության, թե զգացմունքների վրա: Ի՞նչ զգացիք:
- Նշեք 1-2 բան, որը կարևոր է Հայաստանի համար:
- Ֆիլմի հեղինակին ի՞նչ հարցեր կուղղեք: Հարցերը կարող են լինել անհասկանալի բաների մասին, կարող եք արտահայտել նաև ձեր անհամաձայնությունը:
- Ի՞նչ տվեց այս ֆիլմը, որը չէր կարող տալ գրավոր սկզբնաղբյուրը:

Դ) Պատմության միջոցով դաստիարակության առանձնահատկությունները

Պատմության ուսուցման միջոցով դաստիրակությունը իրականացվում է պատմության դասընթացի բովանդակության յուրացման հիման վրա: Սակայն դաստիարակությունը չի կատարվում մեխանիկորեն: Անհրաժեշտ է, որ սովորողները խոր ու հուզականորեն գիտկացեն ուսումնասիրվող փաստերի էությունը, դրանց սոցիալական բնույթը, դրանց տեղը և դերը պատմական գործընթացում, ըմբռնեն հասարակության զարգացման օրինաչափությունները և մարդկանց գործունեության բարոյական գնահատականը: Ի տարբերություն մյուս առարկաների՝ պատմության բովանդակությունն ունի իր առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված է նրա հսկայական դերը սովորողների դաստիարակության գործում:

Այդ առանձնահատկություններն են՝

- Պատմության բովանդակությունն ունի դաստիարակչական հսկայական ներուժ, որը կարող է ապահովել անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Այդ բովանդակությունը կազմող գիտելիքներին բնորոշ ինքնարժեքությունը, այսինքն՝ պատմական գիտելիքն արդեն իսկ իրենով արժեք է, ինքն իրենով դաստիարակում է: Պատմության բովանդակության մեջ շատ են հերոսականը, ողբերգականը, դրամատիկականը, կատակերգականը: Այսպիսի նյութի ուսուցման ժամանակ դաստիարակության մասին քարոզներ կարդալու փոխարեն ուսուցիչն իր սաներին

պետք է փոխանցի այն հույզերն ու զգացմունքներն, որոնք կան իր մեջ, որոնք, որպես մարդու և քաղաքացու, շարունակ ալեկոծում և փոթորկում են նրան:

- Պատմության բովանդակությունը հնարավորություն է տալիս իրականացնել դաստիարակության համալիր մոտեցում: Այն իր մեջ ընդգրկում է փիլիսոփայական, քաղաքական, բարոյական, գեղագիտական, պատմական և այլ գիտելիքներ, որոնք գործիք են դառնում աշխարհի գիտական, գեղարվեստական ընկալման, ճանաչման ու աշխարհայացքի ձևավորման համար:
- Պատմության բովանդակությունը հնարավորություն է տալիս կերտելու այն իրականությունը, հասարակությունը, որի մեջ ապրում և ապրելու են ապագա քաղաքացիները
- Պատմության բովանդակությունն ունի օրինակի մեծ ուժ: Օրինակի ուժը հնարավորություն է տալիս ձևավորել չարի ու բարու գիտակցություն, խիղճ, պատիվ, արժանապատվություն, սիրո և երջանկության զգացումներ, պարտք ու պատասխանատվություն: Թույլ է տալիս ուսումնասիրել պատմական գործիչների արարքները, դրանց դրդապատճառները, բնավորությունը, խառնվածքը, գնահատել վարքագիծը:
- Պատմության ուսուցումը սովորողների մոտ ձևավորում է հասարակական գործունեության դրդապատճառ, այսինքն՝ այն մտքի գիտակցումը, որ մարդկանց հասարակական ակտիվության բարձր մակարդակը դառնում է հասարակության կատարելագործման և անձի համակողմանի զարգացման պայման:

«Ուսումնական կահավորանք» հասկացությունը

«Ուսումնական կահավորանքը» ուսուցման նյութական միջոցների ամբողջություն է, որն օգտագործվում է ուսումնադաստիարակչական գործընթացում: Ուսումնական կահավորանքի կառուցվածքը որոշվում է առարկայի բովանդակությամբ, գիտական մեթոդաբանությամբ, դաստիարակչական խնդիրներով, ուսուցման մեթոդներով:

Ըստ մեթոդական գրականության մեջ տիրապետող տեսակետի՝ ուսումնական կահավորանքի մեջ մտնում են.

- Ծրագիրը
- Ուսուցչի ձեռնարկը (դիդակտիկական և մեթոդական), գիտական տեղեկատու գրականությունը, գիտության նվաճումների և գիտության պրոբլեմների մասին գրքերը:
- Սովորողների համար գրքերը՝ դասագրքերը, ընթերցարանները, գրական ստեղծագործությունները, գիտահանրամատչելի գրականությունը, տեղեկատուները, խնդիրների և վարժությունների ժողովածուները, տպագիր հիմքով տետրերը և այլն:
- Պատկերավորումները և նկարները, տեսանյութերը, մանրակերտները, մոդելները, մուլյաժները, աղյուսակները, քարտեզները, գծագրերը, սխեմաները, լսատեսողական միջոցները՝ ձայնագրությունները և հեռուստատեսային հաղորդումները:
- Առարկաների և երևույթների վերարտադրության համար բնական օբյեկտները և միջոցները, սարքավորումները, գործիքները և այլն:
- Ուսուցման տեխնիկական միջոցներ՝ տեսասարքերը, պրոյեկտորները, հեռուստացույցները, լինգաֆոնները, համակարգիչները և այլ ուսումնական սարքավորում-

ներ: Ուսումնական կահավորանքի մեջ մտնում է նաև կահույքը և հարմարությունները: Նյութական այս միջոցները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ ուսումնազննական միջոցների պահպանության և օգտագործման համար, որն իր հերթին բարձրացնում է մանկավարժական աշխատանքի կազմակերպման գիտական մակարդակը:

Այսպիսով, իր ամբողջության մեջ պատմության ուսուցման նյութական միջոցները, որոնք կազմում են ուսուցման համադպրոցական համակարգի մասը և պետք է ապահովեն սովորողների լիարժեք գիտելիքների, անհրաժեշտ կարողությունների, հմտությունների և արժեքների:

Ե) Թեմատիկ պլան

Թեմատիկ պլանը կազմված է «Հայոց պատմություն» առարկայի նոր չափորոշչի և ծրագրի հիման վրա և լիովին համապատասխանում է դրանց: Թեմատիկ պլանում հաշվի են առնվել այն կարևորագույն պահանջները, որոնք պետք վերջնարդյունքների միջոցով ապահովեն կարողունակությունների ձևավորումը: Թեմատիկ պլանում տրված են թեմայի ուսուցման նպատակը, վերջնարդյունքները, հիմնական գաղափարները և հասկացությունները, միջառարկայական կապերը: Սրանք կնպաստեն,որ աշակերտներն աշխարհի ամբողջական պատկերացում կազմեն: Թեմատիկ պլանում ժամաբաշխումը կատարվել է ըստ թեմաների և դասերի: Ամեն թեմայից հետո մեկ ժամ հատկացվել է գործնական աշխատանքներին և ամփոփումներին՝ հետադարձ կապի միջոցով: Ուսուցչի տրամադրության տակ է թողնվում 2 պահուստային ժամ: Թեմատիկ պլանն օրինակելի է, և ուսուցիչը կարող է օգտվել այս թեմատիկ պլանից կամ կազմել իրենը:

Դասա-ժամեր	Թեմա, դաս	Նպատակ	Վերջնարդյունք	Առաջարկվող գործունեության ձևեր	Գաղափարներ, հասկացություններ	Միջառարկայական, ներառարկայական կապեր
Թեմա 1. Հայկական լեռնաշխարհը որպես համաշխարհային քաղաքակրթական բնօրրաններից մեկը: Հայոց հայրենիքը: Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-I հազարամյակներում (14 ժամ)						
1	**Դաս 1.** Հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման պատմաաշխարհագրական միջավայրը: Հայոց հայրենիքը	**Ձևավորել՝** 1. Հայոց հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական պայմանների, հայերի տեղա-բնիկ ծագումնաբանության և Ք.ծ.ա. III-I հազ. հայկական քա-ղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ, 2. Ք.ծ.ա. III-I հազ. հայոց քաղաքակրթության առջև ծառացած մարտահրավերները վերլուծելու, ձեռնարկված միջոցառումների և արդյունքների վերաբերյալ կարծիք հայտնելու,	1. Նկարագրի Հայկական լեռնաշխարհի պատմաաշ-խարհագրական պայմանները, առանձնահատկությունները, պատմավարչական բաժանումները: 2. Ներկայացնի Հայկական լեռնաշխարհի նշանավոր հնավայրերը, Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության և հայոց քաղաքակրթության զարգաց-ման հնագույն բնօրրան լինելու փաստեր: **3.** Ներկայացնի Հայաստանի մասին վկայություններ, հայերի տեղաբնիկությունը, ծագում-նաբանությունը վկայող	1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք 2. երևակայական ճանապարհորդություն, 3. տեսանյութի կամ ֆիլմի դիտում, քննարկում, 4. թեստային աշխատանք 5. սահիկաշարի կամ տե-սանյութի պատրաստում 6. քարտեզների հետ աշխատանք, 7. համեմատական աղ-յուսակների, գծապատ-կերների, կազմում, 8. հետազոտական աշխատան, 9. դերային (կերպարային) ներկայացում,	**Ժամանակ և տարածություն** Որտե՞ղ և ե՞րբ: 1. Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: **Համակարգ (պետություն)** Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: 2. Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:	**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի պետական կազմավորումների և ժողովուրդների հետ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ: **Աշխարհագրություն –** քարտեզներ : **Իմ հայրենիքը, Իմ հայրենիքն ու աշխարհը** – առասպելներ, ավանդազրույցներ, հնագույն դիցարաններ, մայրաքաղաք-ներ: **Հայոց լեզու –** լեզու և գիր,
2	**Դաս 2.** Հայաստանի պատմավարչական հիմնական բաժանումները հնագույն շրջանից մինչև այսօր					
3	**Դաս 3.** Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության զարգացման օրրան և հայոց քաղաքակրթության բնօրրան					
4	**Դաս 4.** Հայերի ծագումնաբանությունը					
5	**Դաս 5.** Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-II հազարամյակներում					

6	**Դաս 6.** Վանի թագավորության ձևավորման պատմաաշխար-հագրական միջավայրը, թագավորության հիմնադրումը և վերելքը	եզրահանգումներ անելու հմտություններ 3. Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների և Վանի թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները գնահատելու և արժևորելու հմտություններ:	փաստեր, համեմատի հայերի ծագումնաբանության վերաբերյալ տարբեր տեսություններ, ավանդազրույցներ: **4.** Ներկայացնի Ք.ծ.ա. III-I հազ հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները: **5.** Նկարագրի Վանի թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսու-թյունը, դիցարանը, համեմատի արդի իրողությունների հետ: **6.** Բնութագրի հնագույն պետականությունների և Վանի թագավորության ակնառու գործիչների գործունեությունը, կարծիք հայտնի նրանց գոր-ծունեության վերաբերյալ: **7.** Վերլուծի Ք.ծ.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները, կատարի եզրահանգումներ: **8.** Գնահատի և արժևորի Վանի թագավորության քաղաքակրթական ժառան-գության տեղն ու դերը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում: 9. Հետազոտի իրենց տարածաշրջանում գտնվող պատմաաշխարհագրական որևէ տեղանք կամ Ք.ծ.ա. III-I հազ. հնագիտական հուշարձան, փորձի կապեր գտնել ներկա իրողությունների հետ:	10. դաս-էքսկուրսիա	**Անհատներ և հարաբերություններ** 3. Ո՞վ է պատմական անհատը: Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրություն-ները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:	գրային համակարգեր, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում: **Մայրենի –** առասպելներ, ավանդազրույցներ: **Արվեստ –** պատմաճարտա-րապետական հուշարձաններ, կերպարվեստ, կիրառական արվեստ, քաղաքաշինություն:
7	**Միավորային գնահատում**					
8	**Դաս 7.** Վանի թագավորության հզորացումն ու վերելքը					
9	**Դաս 8.** Պայքար Ասորեստանի դեմ: Ռուսա I					
10	**Դաս 9.** Վանի թագավորության թուլացումը և անկումը					
11	**Դաս 10.** Վանի թագավորության պետական կառուցվածքը, բանակը					
12	**Դաս 11.** Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգությունը					
13	**Միավորային գնահատում**					
14	**Էքսկուրսիա**					

Թեմա 2. Հայկազունի Երվանդյանների թագավորությունը: Հայաստանը Ք.ծ.ա. VII-III դդ. (11 ժամ)						
15	**Դաս 12.** Հայկազունի Երվանդյանների թագավորությունը: Հայաստանը Ք.ծ.ա. VII-III դդ.	Ձևավորել՝ 1. Ք.ծ.ա. VII-III դդ. հայկական քաղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ, 2. Համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները վերլուծելու, դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ փաստարկված կարծիք հայտնելու հմտություններ, 3. Հայկազունի Երվանդյանների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները գնահատելու և արժևորելու հմտություններ:	1. Ներկայացնի Ք.ծ.ա. VII-III դդ. պատմության առանցքային դրվագները: 2. Նկարագրի Երվանդյան Հայաստանի պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի ներկայիս իրողությունների հետ: 3. Բնութագրի և համեմատի Ք.ծ.ա. VII-III դդ. ակնառու գործիչների գործունեությունը: 4. Բնութագրի և մեկնաբանի Ք.ծ.ա. VII-III դդ. ռազմաքաղաքական հարաբերությունները, փաստարկված կարծիք հայտնի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ: 5. Վերլուծի Ք.ծ.ա. VII-III դդ. քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները, քաղաքակրթական փոխազդեցությունները: 6. Գնահատի Հայկազունի Երվանդունիների թագավորության մշակութային ժառանգությունը: 7. Արժևորի պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:	1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք 2. երևակայական ճանապարհորդություն 3. ֆիլմի կամ տեսանյութի դիտում, քննարկում 4. նկարի վերլուծություն 5. թեստային աշխատանք 6. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում 7. համեմատական աղյուսակների գծապատկերների կազմում, 8. դերային (կերպարային) ներկայացում:	**Պատճառ և հետևանք** Ինչո՞ւ տեղի ունեցավ, Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ: 1. պատճառահետևանքային փոխ-ազդեցություններ 2. պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու և բացատրելու համար **Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն** Ի՞նչ է փոխկապակցվածությունը: Որո՞նք են համաշխարհայնացման առավելություններն ու մարտահրավերները: **1.** մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:	**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի պետությունների (Մարաստան, Աքեմենյան տերություն, Մակեդոնական տերություն, Սելևկյան պետություն), և ժողովուրդների հետ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ: **Աշխարհագրություն -** Հայկազունի Երվանդյանների թագավորության, Աքեմենյան տերության, Մակեդոնական տերության, Սելևկյան պետության, պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ: **Իմ հայրենիքը** – հայոց հայրենիք, առասպելներ, ավանդազրույցներ, մայրաքաղաքներ: **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում : **Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերա-բերյալ նյութեր և առասպելներ, ավանդազրույց-
16-17	**Դաս 13-14.** Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում					
18	**Դաս 15.** Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը: Հայկազունի Երվանդյանների միասնական թագավորության վերականգնումը					
19	**Դաս 16.** Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. III դարում: Ներքին և արտաքին մարտահրավերները					
20-21	**Դաս 17-18.** Հայկազունի Երվանդյանների թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, հասարակական կյանքը, առօրյան ու կենցաղը					
22-23	**Դաս 19-20.** Քաղաքակրթական փոխազդեցությունները: Երվանդյան Հայաստանի մշակութային ժառանգությունը					
24	**Միավորային գնահատում**					
25	Աշխատանք քարտեզների հետ **(գործնական աշխատանք)**					

						ներ: **Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ, մշակութային գործիչներ, ստեղծագործություններ, արվեստի գործեր
Թեմա 3. Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. II-I դդ. (15 ժամ)						
26	**Դաս 21.** Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը, հիմնադրումը	**Ձևավորել՝** 1. Ք.ծ.ա. II-I դդ. հայկական քաղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ, 2. Հայկական աշխարհակալության ստեղծման և անկման գործընթացներում ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը վերլուծելու հմտություններ, 3. Արտաշեսյանների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները հայոց և համաշխարհային պատմության հոլովույթում գնահատելու և արժևորելու հմտություններ:	1. Ներկայացնի Ք.ծ.ա. II-I դդ. հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները: 2. Նկարագրի Արտաշեսյան թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի արդի իրողությունների հետ: 3. Բնութագրի և համեմատի Արտաշեսյան արքայատոհմի նշանավոր արքաների ներքին և արտաքին քաղաքականությունը, եզրահանգումներ անի նրանց գործունեության վերաբերյալ: 4. Մեկնաբանի Ք.ծ.ա. II-I դդ. ռազմաքաղաքական հարաբերությունները, փաստարկված կարծիք հայտնի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ: 5. Վերլուծի Արտաշեսյան թագավորության հզորացման, հայոց աշխարհակալության ստեղծման նախադրյալները, կործանման պատճառներն ու հետևանքները, անի	1. սկզբնաղբյուր-ների հետ աշխատանք, 2. էսսեի, ակնարկի պատրաստում, 3. սահիկաշարի կամ պաստառի պատրաստում, 4. ֆիլմի, տեսանյութերի դիտում, քննարկում, 5. նկարի վերլուծություն, 6. թեստային աշխատանք, 7. համեմատական աշխատանք (Երվանդունիների թագավորություն և Արտաշեսյանների թագավորություն) 8. ժամանակագրական ժապավենի պատրաստում 9. դերային (կերպարային) ներկայացում, 10. դաս-էքսկուրսիա	**Համակարգ (պետություն)** Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: 1. Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: **Պատճառ և հետևանք** Ինչո՞ւ տեղի ունեցավ, ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ: 2. պատճառահետևանքային փոխազդեցություններ 3. պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու և բացատրելու համար: **Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ է պատմական անհատը: 4. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:	**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սելևկյան պետություն, Պարթևստան, Պոնտոս, Փյունիկիա, Հրեաստան, Ասորիք, Վիրք, Աղվանք, Հռոմեական կայսրություն, Եգիպտոս և այլն), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ: **Աշխարհագրություն** – Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության պատմաաշխարհագրական տարածքին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Իմ հայրենիքը**-առասպելներ, դիցարաններ,մայրաքաղաքներ **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմաներ: **Հայոց լեզու** – բանավոր և
27-28	**Դաս 22-23.** Արտաշես I-ի պետականակերտ և միավորիչ գործունեությունը					
29	**Դաս 24.** Տիգրան II Մեծը և Հայկական աշխարհակալ տերության ստեղծումը					
30	**Դաս 25**. Հայկական աշխարհակալ տերության սահմանները, տարածքը, բնակչությունը, կառավարման համակարգը և բանակը					
31	**Դաս 26.** Հայոց պետությանը սպառնացող մարտահրավերները. Արտաշատի պայմանագիրը					
32	**Միավորային գնահատում**					
33-34	**Դաս 27-28.** Արտաշեսյան Հայաստանի դիվանագիտական ձեռքբերումները: Արտավազդ II					
35	**Դաս 29.** Հայկական թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե)					
36	**Դաս 30.** Արտաշեսյան թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը,					

	տնտեսությունը, հասարակական կյանքը		եզրահանգումներ: 6. Համեմատի Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները Հայկազունի Երվանդունիների և Արտաշեսյանների օրոք: 7. Գնահատի Մեծ Հայքի Արտաշեսյան պետության դերը հայոց պետականության և համաշխարհային պատմության մեջ: 8. Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու, պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը:			գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր, ավանդազրույցներ **Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմա-ճարտարապետական հուշարձաններ, մշակութային գործիչներ, ստեղծագործություններ արվեստի գործեր:
37	**Դաս 31.** Արտաշեսյան թագավորության թուլացումը և անկումը					
38	**Դաս 32.** Հելլենիստական դարաշրջանը Հայաստանում: Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները Արտաշեսյանների օրոք					
39	**Միավորային գնահատում**					
40	Դերային ներկայացում (**գործնական աշխատանք)**					
Թեմա 4. Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը (23 ժամ)						
41	**Դաս 33.** Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում: Հայկական պետությունը դրածո արքաների օրոք	**Ձևավորել՝** 1. I-IV դդ. հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, Հայաստանի քրիստոնեացման պատմության վերաբերյալ գիտելիքներ, 2. Մեծ Հայքի Արշակունիների թագավորության կայացման, հզորացման և անկման պատճառահետևանքային կապերը վերլուծելու հմտություններ,	1. Ներկայացնի I դարի սկզբի և Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի առանցքային դրվագները, քրիստոնեության ծագումը, քրիստոնեական վարդապետության հիմքերը, Հայաստանում քրիստոնեության տարածման, Հայոց եկեղեցու ձևավորման և կայացման ընթացքը, ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում: 2. Նկարագրի Հայոց եկեղեցու վարչական կառույցը, նվիրապետությունը, խորհուրդ-	1. Սկզբնաղբյուրների հետ աշխատանք, 2. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում, 3. երևակայական ճանապարհորդություն, 4. ֆիլմի, տեսանյութերի դիտում, քննարկում, 5. նկարի վերլուծություն, 6. թեստային աշխատանք, 7. հետազոտական աշխատանք, 8. համեմատական աշխատանք, 9. դերային (կերպարային) ներկայացում,	**Կառուցվածք և գործառույթ** Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները: **Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ է պատմական անհատը: 1. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:	**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ: **Աշխարհագրություն** – Մեծ Հայքի Արշակունիների թագավորության, Պարթևստանի, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն մեր օրերում,
42	**Դաս 34.** Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Արշակունիների արքայատոհմի գահակալումը Հայաստանում					
43	**Դաս 35**. Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը					
44	**Դաս 36.** Հայաստանը և հարևան երկրները III դարում: Հայոց թագավորության վերականգնումը ու հզորացումը: Տրդատ III Մեծ					

45	**Դաս 3**7. Քրիստոնեության առաջացումը և տարածումը: Քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն	3. Արշակունյաց Հայաստանի քաղաքակրթական ձեռքբերումները և քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը հայոց պատմության մեջ գնահատելու և արժևորելու հմտություններ:	ները, եկեղեցիների կառուցվածքը: 3. Նկարագրի Արշակունյաց թագավորության պետական կարգը, բանակը, առօրյա կյանքն ու կենցաղը և համեմատի արդի և նախորդ շրջանների իրողությունների հետ: 4. Մեկնաբանի ավատատիրության առանձնահատկությունները Հայաստանում: 5. Բնութագրի և համեմատի Արշակունյաց արքաների և ժամանակաշրջանի նշանավոր գործիչների գործունեությունը, կարծիք հայտնի նրանց գործունեության վերաբերյալ: 6. Բացատրի պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները, միասնական ձեռնարկումները Արշակունիների թագավորության շրջանում: 7. Վերլուծի արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը հայոց պետության զորեղացման և անկման գործընթացներում, կատարի եզրահանգումներ: 8. Գնահատի Արշակունյաց Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում: 9. Արժևորի Հայաստանն իբրև առաջին քրիստոնյա պետություն, գնահատի քրիստոնեության ընդունման	11. դաս-էքսկուրսիա:	**Օրինաչափություն** Ի՞նչն է օրինաչափ: 2. Պատմական երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառահետևանքային անհրաժեշտ կապեր, փոխադարձ պայմանավորվածություններ: Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:	քարտեզի հետ աշխատանք: **Իմ հայրենիքը** - մայրաքաղաքներ **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ- ճաշակ-մշակույթ» թեմաներ: **Հայոց լեզու** –բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հա-յերեն տեքստերի վեր-լուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում: **Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ **Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, երաժշտություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ, մշակութային գործիչներ, ստեղծագործություններ արվեստի գործեր
46	**Դաս 38.** Քրիստոնեական վարդապետությունը: Աստվածաշունչ					
47	**Դաս 39.** Քրիստոնեության տարածումը Հայաստանում և հայաբնակ շրջաններում I-III դարերում: Աբգար թագավոր, ս. Թադեոս և ս. Բարդուղիմեոս առաքյալներ: Հայ Առաքելական եկեղեցու հիմնադրում					
48	**Միավորային գնահատում**					
46-48 ժամերի միջակայքում կիսամյակի ավարտ						
49	**Դաս 40.** Հայաստանը՝ առաջին քրիստոնյա պետություն. ս. Տրդատ Մեծ և ս. Գրիգոր Լուսավորիչ					
50	**Դաս 41.** Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումն ու ամրապնդումը: Հայոց եկեղեցու դերի և ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում					
51	**Դաս 42**. Հայոց եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը					
52	**Դաս 43.** Ավատատիրական հասարակության ձևավորումը					
53-54	**Դաս 44-45**. Կենտրոնական իշխանության զորեղացման փորձերը					
55-56	**Դաս 46-47**. Արշակունյաց թագավորության թուլացումն ու անկումը					
57	**Դաս 48**. Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների					

	փոխհարաբերությունները IV-V դարերում: Ազգային-եկեղեցական ժողովներ		պատմական նշանակությունը: 10. Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու, պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: 11. Հետազոտի տարածաշրջանի I-IV դդ. որևէ հուշարձան, փորձի կապեր գտնել հուշարձանի և տարածաշրջանի կամ համայնքի միջև:			
58	**Դաս 49**. Արշակունյաց թագավորության պետական կառավարման համակարգը և բանակը					
59	**Դաս 50.** Հասարակական հարաբերությունները: Առօրյա կյանքն ու կենցաղը					
60	**Դաս 51.** Հայկական հելլենիզմի մայրամուտը: Արշակունյաց Հայաստանի մշակութային ժառանգությունը					
61	**Միավորային գնահատում**					
62	Հայոց արքաների պատկերասրահ (**գործնական աշխատանք)**					
63	Այցելություն եկեղեցի՝ մասնակցություն արարողության					
Թեմա 5. Հայկական պետականության նախարարական շրջանը (11 ժամ)						
64	**Դաս 52.** Տարածաշրջանի քաղաքական դրությունը V- VI դարերում: Մարզպանական Հայաստանը և Պարսկաստանը	**Ձևավորել՝** 1. V-IX դդ. հայկական քաղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ, 2. V-IX դդ. ազատագրական պայքարի տարբեր շրջափուլերը հետազոտելու, պայքարի արդյունքները գնահատելու, հմտություններ, 3. դրված նպատակներին հասնելու համար բոլոր կառույցների, ժողովրդի տարբեր խավերի միասնական ու փոխհամաձայնեցված գործելու անհրաժեշտության գիտակցություն:	1. Ներկայացնի V-IX դդ. միջազգային և ներքաղաքական իրավիճակի փոփոխությունները, հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները: 2. Նկարագրի նախարարական կառավարման համակարգը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները, համեմատի նախորդ ժամանակաշրջանների հետ: 3. Բնութագրի և համեմատի V-IX դդ. ազգային-ազատագրա-	1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք, 2. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում, 3. համեմատական աշխատանք 4. էսսեների, ակնարկների պատրաստում 5. նկարի վերլուծություն 6. թեստային աշխատանք 7. բանավեճ, քննարկում, 8. դերային (կերպարային) ներկայացում 9. դաս-էքսկուրսիա	**Ժամանակ և տարածություն** Որտե՞ղ և ե՞րբ: 1. Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները անձի, ազգի և մարդկության տեսանկյունից: **Օրինաչափություն** Ի՞նչն է օրինաչափ: 2. Պատմական երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն	**Համաշխարհային պատմություն** – տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Պարսկաստան, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն, Վրաստան, Աղվանք) հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ **Աշխարհագրություն** - Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմա-աշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն
65	**Դաս 53.** Վարդանանց պատերազմը: Ավարայրի ճակատամարտը					
66	**Դաս 54.** Վահանանց պատերազմը: Նվարսակի պայմանագիրը: Ինքնիշխանության վերականգնումը Արևելյան Հայաստանում					
67	**Դաս 55.** Տիեզերական ժողովները և Հայոց եկեղեցին: Քաղկեդոնի ժողովը և ընդհանրական եկեղեցու պառակտումը: Դվինի եկեղեցական ժողովները					

68	**Դաս 56**. Դրությունը Արևմտյան Հայաստանում VI դարում: Պարսկա-բյուզանդական պատերազմը և Հայաստանը		կան պայքարի ակնառու գործիչների գործունեությունը: 4. Քննարկի V-IX դդ. հայ ժողովրդի միասնականութ-յանը, հոգևոր ինքնուրույնութ-յանը ու ինքնությանը սպառնացող մարտահրավեր-ները և դրանց դիմագրավելու քայլերը, առաջարկի լուծումների սեփական տարբերակը: 5. Համեմատի և մեկնաբանի V-IX դդ. ազգային-ազատագրական պայքարի շրջափուլերը, պայքարի ուղիների վերաբերյալ տարբեր դիրքորոշումները, կարծիք հայտնի դրանց վերաբերյալ: 6. Գնահատի V-IX դդ. ազգային-ազատագրական պայքարի արդյունքները՝ կարևորելով համաժողովրդա-կան միասնական պայքարի նշանակությունը՝ դրված նպա-տակների իրականացման գործում: 7. Արժևորի պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդ-ներին փոխանցման անհրաժեշտությունը:		ունեցող պատճառահետևան-քային անհրաժեշտ կապեր, փոխադարձ պայմանավորվա-ծություններ: Պատճառները, հետևանքները, առանձնա-հատկությունները, ընդհան-րությունները դիտարկել որպես պատմական և հասարակական երևույթների և իրադարձութ-յունների օրինաչափություններ: **Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ է պատմական անհատը: 3. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրութ-յունները և տարբերութ-յունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:	այսօր, քարտեզների հետ աշխատանք: **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք» թեմաներ **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի –** ավանդազրույցներ **Արվեստ** - պատմաճարտարա-պետական հուշարձաններ
69	**Դաս 57**. Արաբական նվաճումները և Հայաստանը: Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում: Հակաարա-բական ապստամբությունները					
70	**Դաս 58**. Հայոց եկեղեցին VII -VIII դարերում					
71	**Դաս 59**. Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները (մծղնեականներ, բորբորիտներ, պավլիկյաններ)					
72	**Դաս 60**. Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները Հայաստանում V-IX դարերում					
73	**Միավորային գնահատում**					
74	Դեբատ: Տիեզերական ժողովներ (**գործնական աշխատանք)**					
Թեմա 6. Ազգային-քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու զարգացումը IV-IX դդ (9 ժամ)						
75	**Դաս 61**. Դրությունը Արևմտյան Հայաստանում VI դարում: Պարսկա-բյուզանդական պատերազմը և Հայաստանը	**Ձևավորել՝** 1. IV-IX դդ. ազգային-քրիս-տոնեական մշակույթի զարգացման ընթացքի, ձեռքբերումների, մշակու-թային նշանավոր գործիչների և ստեղծագործությունների	1. Ներկայացնի IV-IX դդ. ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացման հիմնական առանձնահատ-կությունները, ընթացքը, ուղղությունները, բնագա-վառները, ձեռքբերումները: 2. Ճանաչի IV-IX դդ. ազգային-	1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք, 2. պաստառների ձևա-վորում կամ սահիկաշարի պատրաստում 3. էսսեների, ակնարկների պատրաստում 4. հետազոտական աշխա-	**Անհատական և մշակութային արժեհամակարգ** Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի, ազգի կյանքում: 1. գաղափարների, համոզ-մունքների, արժեքների զգացողությունների, մշակու-թային դրսևորումների	**Համաշխարհային պատմություն** – տվյալ ժամանակա-շրջանի քաղաքական և մշակութային գործիչներ, ստեղծագոր-ծություններ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր
76	**Դաս 62**. Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը					
77	**Դաս 63**. Դպրոց: Թարգմանական գրականություն: Հայ ինքնուրույն					

	գրականություն	վերաբերյալ գիտելիքներ, 2. գրերի գյուտի պատմական նշանակությունը և ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց ու համաշխարհային մշակույթի համատեքստում արժևորելու և գնահատելու հմտություններ, 3. մշակութային ժառանգության պահպանման, զարգացման և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտության գիտակցություն:	մշակութային ակնառու գործիչների ստեղծագործություններ: 3. Արժևորի գրերի գյուտը, կատարի եզրահանգումներ: 4. Գնահատի ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում: 5. Գիտակցի մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը: 6. Հետազոտի իր համայնքի կամ տարածաշրջանի IV-IX դդ. պատմաճարտարապետական որևէ հուշարձան, փորձի կապեր գտնել հուշարձանի և տարածաշրջանի կամ համայնքի միջև:	տանք 5. համեմատական աղյուսակների և գծապատկերների կազմում 6. ինքնաշեն նյութերով ուսումնական ցուցահանդեսի կազմակերպում 7. թեստային աշխատանք 8. տեսաֆիլմերի դիտում և քննարկում 9. դերային (կերպարային) ներկայացում 10. դաս-էքսկուրսիա:	արժևորում 2. միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում: 3. ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտության արժևորում:	**Աշխարհագրություն** - հայ մշակութային գործիչների գործու-նեություն ծավալած քաղաքներին, երկրներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք **Հասարակագիտու-թյուն** - «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմա **Հայոց լեզու** – Լեզու և գիր, բանավոր և գրավոր ճիշտ, գրա-գետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում **Մայրենի –** նշանավոր անհատների, իրադարձու-թյունների վերաբերյալ նյութեր **Գրականություն** – պատմիչներ, թարգմանական գրականություն, աստվածաբաններ **Բնագիտություն**-տիեզերքին, երկիր մոլորակին առնչվող թեմաներ **Արվեստ (ճարտարապետու-թյուն, կերպարվեստ, երաժշ-տություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր
78	**Դաս 64**. Պատմագրություն, փիլիսոփայություն, իրավագիտություն					
79	**Դաս 65**. Բնական գիտություններ					
80	**Դաս 66**. Կերպարվեստ					
81	**Դաս 67**. Երաժշտություն: Կիրառական արվեստ					
82	**Միավորային գնահատում**					

83	Էքսկուրսիա (պատկերասրահ կամ արվեստի թանգարան)					
Թեմա 7. Բագրատունյաց թագավորությունը (17 ժամ)						
84	**Դաս 68**. Պատմաաշխարհագրական միջավայրը: Քաղաքական դրությունը տարածաշրջանում	**Ձևավորել՝** 1. Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ Անկախության վերականգնման, թագավորության զորեղացման, թուլացման և անկման պատճառահետևանքային կապերը հետազոտելու և եզրահանգումներ անելու հմտություններ, 2. Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները գնահատելու և արժևորելու հմտություններ:	1. Ներկայացնի Բագրատունյաց թագավորության պատմության առանցքային դրվագները: 2. Նկարագրի Բագրատունյաց թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի նախորդ և արդի իրողությունների հետ: 3. Բնութագրի Բագրատունի նշանավոր արքաների և աշխարհիկ ու հոգևոր գործիչների՝ պետության անվտանգության ամրապնդման ու հզորացմանն ուղղված ձեռնարկումները, կարծիք հայտնի նրանց գործունեության արդյունքների վերաբերյալ: 4. Վերլուծի համաշխարհային և տեղական պատմական մի շարք գործընթացների ազդեցությունը Անիի Բագրատունյաց թագավորության հիմնադրման, հզորացման և անկման գործընթացներում, անի եզրահանգումներ: 5. Քննարկի X-XI դդ. հայ ժողովրդի միասնականությանը, հոգևոր ինքնուրույնությանը ու ինքնությանը սպառնացող մարտահրավերները և դրանց դիմագրավելու քայլերը, անի	1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք, 2. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում, 3. ֆիլմի կամ տեսանյութի դիտում, քննարկում , 4. նկարի վերլուծություն, 5. համեմատական աշխատանք, 6. հետազոտական աշխատանք, 7. երևակայական ճանապարհորդություն 8. դերային (կերպարային) ներկայացում, 9. դաս-էքսկուրսիա	**Համակարգ (պետություն)** Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: 1. Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ: **Անհատներ և հարաբերություններ** Ո՞վ է պատմական անհատը: 2. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: **Անհատական և մշակութային արժեհամակարգ** Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի կյանքում: 3. Գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում: 4. Միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում: 5. Ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտության արժևորում:	**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ: **Աշխարհագրություն** - Բագրատունյաց թագավորության, Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք: **Իմ հայրենիքը** - մայրաքաղաքներ **Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմաներ: **Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում: **Մայրենի –** նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ:
85	**Դաս 69**. Հայոց պետականության վերականգնումը: Բագրատունիների արքայատոհմի հաստատումը					
86-87	**Դաս 70-71**. Պետական անկախության ամրապնդումը: Ներքին և արտաքին մարտահրավերները					
88-89	**Դաս 72-73**. Բագրատունյաց թագավորության վերելքը և հզորացումը					
90	**Դաս 74**. Ենթակա թագավորությունները					
91	**Միավորային գնահատում**					
92	**Դաս 75**. Անիի թագավորության թուլացումն ու անկումը					
93	**Դաս 76**. Հայոց եկեղեցին Բագրատունյաց ժամանակաշրջանում					
94	**Դաս 77**. Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները: Թոնդրակյան շարժում					
95	**Դաս 78**. Բագրատունյաց թագավորության պետական կարգը և բանակը					
96	**Դաս 79**. Բագրատունյաց թագավորության տնտեսությունը: Առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները					
97-98	**Դաս 80-81**. Բագրատունյաց թագավորության մշակութային ժառանգությունը					

			եզրահանգումներ: 6. Գնահատի և արժևորի Անիի Բագրատունյաց թագավորության քաղաքա-կրթական ձեռքբերումները: 7. Հետազոտի Անի մայրաքաղաքի կամ IX-XI դդ. պատմաճարտարապետական որևէ հուշարձան, առաջարկի տվյալ հուշարձանը աշխարհին հանրաճանաչ դարձնելու լուծումներ:			**ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն: **Արվեստ (ճարտարա-պետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր:
99	**Միավորային գնահատում**					
100	Զբոսանք պատկերասրահում (հայոց մայրաքաղաքներ)					
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ (2 ԺԱՄ)					

Զ) Դասի նմուշ-օրինակ

Այս պլանը մշակվել է հանրակրթության նոր չափորոշչի՝ « Հայոց պատմության» 7-րդ դասարանի չափորոշչի և ծրագրի հիման վրա: Այն արտացոլվում է դասին ներկայացվող ժամանակակից պահանջներին համապատասխան և նպատակ ունի օգնել և աջակցել ուսուցչին իր աշխատանքում: Դասի նմուշ-օրինակը պարտադիր չի ուսուցչի համար, այն պարզապես օրինակ կարող է ծառայել նրա համար դասերի պլանների կազման համար:

Թեմա 5. Հայկական պետականության նախարարական շրջանը

Դասարան ——————— ամսաթիվ ————————
Ուսուցիչ ———————————
Առարկա ———————————

Դաս 53. Վարդանանց պատերազմը: Ավարայրի ճակատամարտը

1. Դասի հիմնական ենթաթեմաներ

- Կրոնափոխություն
- Անգղի և Զարեհավանի միջադեպը
- Ավարայրի ճակատամարտը
- Ճակատամարտի նշանակությունը

2.Դասի նպատակը – յուրացնել ազգային-ազատագրական պայքարի դերն ու նշանակությունն ազգային ինքնության պահպանման և անկախ պետականության վերականգնման գործում:

3. Դասի խնդիրներ

ա) Կրթական (ակադեմիական) – ուսուցանել գիտելիքներ ապստամբության նախադրյալների, կրոնափոխության առաջարկի, Արտաշատի ժողովի, նախարարների կեղծ ուրացության, Ավարայրի ճակատամարտի և դրա նշանակության մասին:

բ) Հմտություններ – շարունակել համեմատելու, համադրելու, վերլուծելու, ընդհանրացումներ կատարելու հմտությունների զարգացումը:

գ) Դաստիարակչական (արժեքային կողմնորոշում)

- Վարդանանց պատերազմի հերոսների օրինակով խորացնել սովորողների հայրենասիրական զգացմունքները: Նրանց մեջ ամրապնդել քաջություն, խիզախություն, հերոսություն, անձնազոհություն, ազատություն, պետականություն, բարոյական և քաղաքական արժեքներ և դրանցով առաջնորդվելու համոզմունքներ:

դ) Զարգացման – տեքստի բովանդակության միջոցով զարգացնել սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հիշողությունը, ուշադրությունը, հույզերն ու կամքը:

4. Վերջնարդյունքներ

Սովորողը

- **կիմանա՝**
  - Հազկերտ II-ի կրոնափոխության առաջարկի, Արտաշատի ժողովի, նախարարների կեղծ ուրացության, Խաղխաղի և Ավարայրի ճակատամարտերի և դրանց նշանակության մասին:

- **կարողանա՝**
  - բնութագրել ազատագրության պայքարի նշանավոր գործիչներին, զորավարներին,
  - նկարագրել պատմական իրադարձությունները, երևույթները և գործընթացները,
  - գնահատել ազատագրական պայքարի արդյունքներն ու նշանակությունը,
  - արժևորել ժողովրդի պատմական փորձի յուրացման և սերնդեսերունդ փոխանցելու անհրաժեշտությունը:

5. **Խաչվող հասկացություններ (բովանդակային բաղադրիչներ)**

Պետություն, նախարարական կառավարման համակարգ, օրինաչափություն (ազգային ազատագրական պայքար), հասարակություն (համագործակցություն, հակամարտություն), Վարդանանք, Վասակյանք:

6. **Ուսուցման միջոցներ (ուսումնադիտողական պարագաներ)**– դասագիրք, տետր, «Հայաստանը V-VI դդ.», քարտեզ աղյուսակներ, սխեմաներ, հատվածներ Եղիշեի «Վասն Վարդանա և Հայոց պատերազմին» աշխատությունից, Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպից, Վ. Սուրենյանցի Վարդան Մամիկոնյանի դիմանկարը, Գ. Խանջյանի «Ավարայրի

ճակատամարտը» գոբելենը, «Ավարայրի ճակատամարտը» սխեման, Վարդանանց պատերազմի վերաբերյալ տեսանյութ և այլն:

7. **Միջառարկայական կապեր** - Համաշխարհային պատմություն (Պարսկաստան, Բյուզանդիա, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ), Աշխարհագրություն (պատմաաշխարհագրական տարածքին համընկնող երկրներ), Մայրենի (ավանդազրույցներ), Արվեստ (պատմաճարտարապետական):

8. **Դաս տիպ** – նոր նյութի հաղորդման դաս:

9. **Ուսուցման մեթոդներ, հնարներ** – համառոտ դասախոսություն, զրույց, վերարտադրողական ցուցադրություն, աշխատանք սկզբնաղբյուրով, փոխներգործուն նշանների համակարգ, հասկացությունների աղյուսակ:

10. Դասի փուլերը և ընթացքը

ա) կազմակերպչական, նախապատրաստական – սովորողների հաշվառում, աշխատատեղերի կահավորում, կրթական միջավայրի և հուզական մթնոլորտի ստեղծում (արտասանություն Ղ. Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմից, որն սկսվում է «...Ոնց դաս իմ լուսնակ, հեզի ու հանդարտ»).

բ) Հենակետային գիտելիքների վերականգնում – դասն սկսվում է նախորդ դասի տնային աշխատանքի ստուգմամբ «Հազկերտ II-ի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ» աղյուսակի շուրջ:
Հանձնարարված էր տանը լրացնել հետևյալ աղյուսակը.

N	Քաղաքականություն	Նպատակներ	Հետևանքներ
1	Տնտեսական		
2	Հարկային		
3	Քաղաքական		
4	Կրոնական		

Ուսուցիչը հանձնարարում է հերթով կարդալ աղյուսակի կետերը, ներկայացնել իրենց պատասխանները և վերլուծել դրանց հետևանքները: Երբ ավարտվում է աղյուսակի հետ աշխատանքը, ուսուցիչն ամփոփում է արդյունքները՝ պատմիչ Եղիշեի երկից հետևյալ հատվածի քննարկմամբ. «Առնում էին ոչ թե ինչպես վայել է արքունի

արժանապատվությանը, այլ, ավազակաբար հափշտակելով այն աստիճան, որ իրենք էլ մեծապես զարմանում էին, թե մի տեղից, որ այդքան գանձ է դուրս գալիս, էլ ինչպես է շեն մնում այդ աշխարհը»: Քննարկումը կատարվում է զույգերով, ապա կազմակերպվում է համադասարանային ամփոփում: Հիմնական հարցը, որ տրվում է սկզբնաղբյուրի վերաբերյալ, պահանջում է նշել այն բոլոր հնարավոր հետևությունները, որ կարելի է անել բերված հատվածը կարդալուց հետո: Եթե սովորողները չեն կարողանում գտնել բոլոր հետևությունները, ուսուցիչն այն թողնում է որպես տնային աշխատանք: Դրանից հետո ուսուցիչը հետաքրքիր առաջադրանքի միջոցով անցում է կատարում նոր նյութին. փորձեք կռահել Հազկերտ II-ի քաղաքականության հաջորդ քայլը Հայաստանի նկատմամբ: Երբ պատասխանների մեջ հնչում է ուսուցչի համար սպասելի՝ «կրոնափոխության առաջարկը» տարբերակը, այդ պահից նա անցում է կատարում նոր նյութի հաղորդմանը:

գ) Նոր նյութի հաղորդում և ընկալում – ուսուցիչը հայտնում է նոր դասագրքի թեման և ենթաթեմաները և առաջարկում գտնել թեմայի համար մի հետաքրքիր բնաբան: Եթե առաջարկությունները շատ են, կազմակերպվում է մրցույթ՝ բնաբանի ընտրության համար: Բնաբաններից ընտրվում է լավագույնը՝ «Չգիտակցված մահը՝ մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»: Ուսուցիչը կարող է մտագրոհի, խմբավորման, պրիզմայի միջոցով պարզել սովորողների նախնական գիտելիքները կամ պարզապես համառոտ դասախոսության միջոցով հաղորդել նոր դասը՝ կրոնափոխության առաջարկի, Աշտիշատի ժողովի, նախարարների՝ Տիզբոնում գտնվելու, ապստամբության բռնկման, Խաղխաղի և Ավարայրի ճակատամարտերի և ապստամբության արդյունքների մասին: Համառոտ դասախոսության ընթացքում ուսուցիչը անընդհատ ապահովում է շփումը և հաղորդակցումը սովորողների հետ հարցերի, ուշադրությունը գրավելու կամ նկարների դիտման միջոցով: Նա կարող է ներկայացնել հատվածներ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպից:

դ) Նոր նյութի ամրապնդում – այդ նպատակով ուսուցիչը կազմակերպում է դասանյութի վերլուծական ընթերցանություն՝ օգտագործելով փոպներգործուն նշանների համակարգը: Դրանք են.

(V) - **գիտեմ,**

(-) - իմ իմացածին հակասում է,

(+) – նոր տեղեկություն է,

(?) – անհասկանալի է, շփոթեցնող,

(!) – հետաքրքիր է, կարելի է քննարկել:

Կարելի է հանձնարարել նաև թեստային աշխատանք:

Օրինակ՝ կատարել համապատասխանեցում.

1. Խաղխաղի ճակատարտը	ա) 451 թ.
2. Կրոնափոխության առաջարկը	բ) 447 թ.

3. Ավարայրի ճակատամրտը գ) 449 թ.
դ) 450թ.

գ) Գիտելիքների կիրառում և յուրացում – այս դասին խիստ կարևոր է գիտելիքների կիրառման և յուրացման փուլը: Այս գիտելիքների կիրառումն օգնում է պարզել սովորողների նոր նյութի յուրացման աստիճանը: Այդ նպատակով առաջին առաջադրանքը կարող է լինել. փորձեք դասագրքի «Կրոնափոխության առաջարկը» ենթաթեման վերաշարադրել սեփական բառերով: Հաջորդ առաջադրանքը վերաբերում է սովորողների գիտելիքների կիրառմանը ծանոթ իրավիճակում: Դրա համար կարելի է սովորողներին առաջարկել. «որպես իրադարձությունների ականատես ի՞նչ երկու հարց կուղղեիք Վարդան Մամիկոնյանին Ավարայրի ճակատամարտից առաջ»: Երրորդ առաջադրանքը պետք է ուղղված լինի անծանոթ իրավիճակում սովորողների գիտելիքների կիրառմանը: Այդ նպատակով ուսուցիչը նրանց առաջարկում է հստորև բերվող **խնդիր-իրավիճակը**.

Խնդիր-իրավիճակ

Ընդունենք, որ հայերը Վարդանանց պատերազմում փայլուն հաղթանակ են տարել պարսիկների նկատմամբ: Վերջիններս ստիպված հաշտություն են խնդրում: Հաշտության պայմանագրի մշակման ժամանակ սուր տարաձայնություններ են առաջանում ապստամբության ղեկավարների միջև: Տարաձայնությունները հարթելու համար ընդունենք, որ նրանք որոշում են դիմել ձեզ՝ որպես ապագայի մարդու, ով ունի իր տեսլականը:

Հարց – Փորձեք կազմել պայմանագրի ձեր նախագիծը, որն ընդունելի կլինի արքունիքի և բոլոր նախարարների համար:

Խնդիր-իրավիճակի մեջ կողմնորոշվելու, լուծումներ գտնելու, աշխատանքներն ավարտելուց և արդյունքներն ամփոփելուց հետո ուսուցիչը կատարում է գնահատում: Գնահատել կարելի է սովորողների ինքնագնահատման և փոխադարձ գնահատման միջոցով: Դասի ավարտին ուսուցիչը պետք է առնվազն 5 րոպե տրամադրի տնային աշխատանքի հանձնարարման և պարզաբանման համար: Խորհուրդ է տրվում հանձնարարել 3 մակարդակի առաջադրանքներ:

Մակարդակ 1–հանձնարարել դասանյութից դուրս գրել տարեթվերը և կազմել ժամանակագրություն:

Մակարդակ 2– առաջարկվում է դասանյութում տեղ գտած Ավարայրի ճակատամարտի նկարագրությունն արտահայտել սխեմայի ձևով:

Մակարդակ 3– լրացնել **«Ձիրավի և Ավարայրի ճակատամարտերի»** համեմատական աղյուսակը.

N	Ճակատամարտեր	Տարեթիվ	Հրամանատարներ	Գործողություններ	Արդյունքներ	Գնահատական
1.	Ավարայր					
2.	Ձիրավ					

Է) Դասի պլան

Այս դասի պլանի կառուցվածքի ընդհանրական նմուշ-օրինակի մշակումը կատարվել է վերապատրաստման ընթացքում ուսուցիչների ձեռք բերած գիտելիքներին ու հմտություններին համապատասխան: Այն կազմված է դասին ներկայացվող ժամանակակից պահանջներին, դիդակտիկական սկզբունքներին, մանկավարժական տեխնոլոգիաներին և մեթոդներին համահունչ: Դասի պլանը ընդհանրական է, իսկ դա նշանակում է, որ նրա կառուցվածքում որոշ փոփոխություններ կատարելով հնարավոր է տեղավորել գրեթե ցանկացած դասատիպ:

Դասարանը ——————— ամսաթիվը ——————————

Ուսուցիչը ——————————————

Առարկան ——————————————

1. Դասի թեման ——————————————

հիմնական հարցերը.

- ——————————————
- ——————————————
- ——————————————

2. Դասի նպատակը

——

——

3. Դասի խնդիրները

ա. Կրթական (ակադեմիական)

- գիտելիք _____

  _____

- հմտություն _____

  _____

բ. Դաստիարակչական

- վերաբերմունք _____

  _____

- արժեքներ _____

  _____

գ. Զարգացման

- մտածողություն _____
- երևակայություն _____
- հիշողություն և ուշադրություն _____
- կամք, կամային որակներ _____
- զգացումներ, հույզեր, ապրումներ _____

4. Վերջնարդյունքներ

- ա) իմանա _____

  _____

- բ) կարողանա _____

  _____

5. Ուսուցման միջոցները (ուսումնադիտողական պարագաներ)

ա. դասագիրք _____

բ. ուսումնական նյութեր _____

գ. զննական _____

- պատկերային-զննական

  _____

  _____

- պայմանական-գրաֆիկական

  _____

  _____

- անհատական-բաշխիչ քարտեր

  _____

  _____

6. Միջառարկայական և ներառարկայական կապեր

_____

_____

7. Դասատիպեր

_____

8. Ուսուցման մեթոդներ, հնարներ

_____

9. Դասի փուլերը և ընթացքը

ա. *Կազմակերպչական աշխատանքներ*

- սովորողների հաշվառում_____
- դասարանի՝ աշխատանքային վիճակի բերում_____
- աշխատատեղերի նախապատրաստում_____
- ուսումնական մթնոլորտի ստեղծում_____

բ. *Մինչև նոր նյութի ուսումնասիրումը (տնային աշխատանքի ստուգում, արդյունքների պարզում)*

- տնային հանձնարարությունների քննարկում հետադարձ կապի միջոցով_____
- հենակետային գիտելիքների արդիականացում (ակտիվացում, հայտորոշում)_____

գ. *Անցում նոր նյութի ուսումնասիրման*

- թեմայի նպատակի և խնդիրների հայտնում———
- թեմայի վերաբերյալ հենակետային արդիականացում (ակտիվացում, վերականգնում)———————————————————————
- նոր նյութի խթանում և մոտիվացիայի (շարժառիթների) ստեղծում———————————————————————————————————
- անցած և նոր նյութերի միջև կապի ապահովում———

դ. *Նոր նյութի ընկալում և ըմբռնում*

- նոր նյութի բովանդակության ամբողջական պատկերի ստեղծում———————————————————————————————
- նոր ուսումնական նյութի ընթերցում (պատմում, հաղորդում, քննարկում և այլն)———————————————————————
- աշխատանք դասագրքի տեքստի և այլ ուսումնական նյութերի վրա———————————————————————————————
- նոր նյութի ըմբռնում և գիտակցում (նյութի մեջ օբյեկտիվ կապերի և հարաբերությունների հայտնաբերում)———————————

ե. *Նոր նյութի ամրապնդում և իմաստավորում*

- տեքստի վերարտադրություն———
- մարզողական և բացատրական վարժություններ———————————————————————————————————————
- նոր նյութի վերլուծություն, համադրություն, համեմատություն, ներառարկայական և միջառարկայական կապերի և հարաբերու-թյունների բացահայտում, ընդհանրացում և այլն———————————————————————————————————————

զ. *Նոր նյութի յուրացում*

- գիտելիքների կիրառում և ընդհանրացում———————————————————————————————————————
- նյութի վերաշարադրում սեփական բառերով———————————————————————————————————————
- գիտելիքների կիրառումը ծանոթ իրավիճակում———————————————————————————————————————
- գիտելիքների կիրառումը անծանոթ իրավիճակներում———————————————————————————————————

Է. *Գնահատում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում*

Ը. *Հետադարձ կապ, ամփոփում*——-

Թ. *Տնային հանձնարարություն (միտված վերջարդյունքներին)*

- տարբերակված առաջադրանքներ——

- վերարտադրական, որոնողական, ստեղծագործական առաջադրանքներ——————————————————————————————

ԲԱԺԻՆ IV. ՀԱՎԵԼՎԱԾ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ

ա) Միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կորողունակություններ

6. Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

7. Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

8. Միջնակարգ կրթության կարողունակություններն են՝

ա. լեզվական գրագիտություն և կարողունակություն. սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական, բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր.

բ. սովորել սովորելու կարողունակություն. սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու

հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն.

գ. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն. սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման: Նրանք ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Նրանք սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտների խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ: Տարբեր մշակույթների, կրոնների, աշխարհայացքների և կյանքի կազմակերպման անհատական պատկերացումների հետ առնչվելու արդյունքում սովորողներն ընդունակ են ճանաչել դրանց տարբերությունները.

դ. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն. սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետահիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն.

ե. թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա: Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշ-

խարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով.

զ. մշակութային կարողունակություն. սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ: Նրանք արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը, ունեն Հայաստանի աշխարհագրության, հասարակական-քաղաքական համակարգի և պատմության հիմնարար իմացություն: Աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում: Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ.

է. մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն. սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի և աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Աշակերտները կարողանում են ընկալել և արդյունավետ կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները և ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները: Նրանք ընկալում են բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Աշակերտներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը.

ը. տնտեսական կարողունակություն. աշակերտները համարժեք վերլուծում և գնահատում են մասնավոր ձեռնարկատիրության, ժողովրդական տնտեսության և համաշխարհային տնտեսական մակարդակներում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և պետության դերը տնտեսության մեջ, ինչպես նաև այդ գործընթացներում ճանաչում, գնահատում և արժևորում են կնոջ և տղամարդու ունեցած դերը: Նրանք հասկանում են հասարակության, տնտեսության և քաղաքականության միջև եղած փոխազդեցությունները: Աշակերտներն ընկալում են տնտեսական և հասարակական կարգերն ու ճանաչում են բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:

բ) Հայրենագիտություն բնագավառի ուսուցման նպատակները միջին դպրոցում

2. Հիմնական (միջին) դպրոցում «Հայրենագիտություն» բնագավառի ուսուցման նպատակն է՝

1) Ձևավորել գիտելիքներ՝

ա. Հայոց հայրենիքի պատմաաշխարհագրական պայմանների, առանձնահատկությունների, սահմանների, պատմավարչական բաժանումների վերաբերյալ:

բ. հայոց քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքի, ձեռքբերումների ու բացթողումների վերաբերյալ:

գ. հայ ժողովրդի ակունքների, մշակութային ժառանգության, պետական ու եկեղեցական տոների, ծեսերի, սովորույթների, ավանդույթների վերաբերյալ:

դ. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հոգևոր-մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ:

2) Ձևավորել և զարգացնել՝

ե. պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը համեմատելու և մեկնաբանելու կարողություններ և հմտություններ:

զ. ազգային մշակույթի ձևավորման և տարբեր շրջափուլերում մշակույթի զարգացման առանձնահատկությունները վերլուծելու, հայ ժողովրդի պատմամշակութային արժեքների տեղն ու նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ գնահատելու կարողություններ և հմտություններ:

է. պատմական մտածողությունը և պատմությունից դասեր քաղելու կարողություններ և հմտություններ:

ը. քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններ ու հմտություններ:

թ. պատմական գործընթացներում անհատի, հասարակության և շրջակա միջավայրի փոխազդեցությունը վերլուծելու կարողություններ և հմտություններ:

3) Նպաստել՝

ժ. ազգային հոգևոր-մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտության գիտակցման ձևավորմանն ու զարգացմանը:

ի. իր և սերունդների միջև կապի ըմբռնմանը:

լ. ազնիվ, հայրենասեր, պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

գ) Հանրակրթական հիմնական ծրագրի «Հայրենագիտություն» բնագավառի՝ «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի վերջնարդյունքները

1) Նկարագրի Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական պայմանները, առանձնահատկությունները, պատմավարչական բաժանումները:
2) Ներկայացնի Հայկական լեռնաշխարհի նշանավոր հնավայրերը, Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության և հայոց քաղաքակրթության զարգացման հնագույն բնօրրան լինելու փաստեր:
3) Ներկայացնի Հայաստանի մասին վկայություններ, հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը վկայող փաստեր, համեմատի հայերի ծագումնաբանության վերաբերյալ տարբեր տեսություններ, ավանդազրույցներ:
4) Ներկայացնի Ք.ծ.ա. III-I հազ հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները:
5) Նկարագրի Վանի թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, դիցարանը, համեմատի արդի իրողությունների հետ:
6) Բնութագրի հնագույն պետականությունների և Վանի թագավորության ակնառու գործիչների գործունեությունը, կարծիք հայտնի նրանց գործունեության վերաբերյալ:
7) Վերլուծի Ք.ծ.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները, կատարի եզրահանգումներ:
8) Գնահատի և արժևորի Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգության տեղն ու դերը հայոց ևհամաշխարհային մշակույթի համատեքստում:
9) Հետազոտի իրենց տարածաշրջանում գտվող պատմաաշխարհագրական որևէ տեղանք կամ Ք.ծ.ա. III-I հազ. հնագիտական հուշարձան, փորձի կապեր գտնել ներկա իրողությունների հետ
10) Ներկայացնի Ք.ծ.ա. VII-III դդ. պատմության առանցքային դրվագները:
11) Նկարագրի Երվանդյան Հայաստանի պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի ներկայիս իրողությունների հետ:
12) Բնութագրի և համեմատի Ք.ծ.ա. VII-III դդ ակնառու գործիչների գործունեությունը:
13) Բնութագրի և մեկնաբանի Ք.ծ.ա. VII-III դդ. ռազմաքաղաքական հարաբերությունները, փաստարկված կարծիք հայտնի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:
14) Վերլուծի Ք.ծ.ա. VII-III դդ. քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները, քաղաքակրթական փոխազդեցությունները:
15) Գնահատի Հայկազունի Երվանդունիների թագավորության մշակութային ժառանգությունը:
16) Արժևորի պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:

17) Ներկայացնի Ք.ծ.ա. II-I դդ. հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները:
18) Նկարագրի Արտաշեսյան թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի արդի իրողությունների հետ:
19) Բնութագրի և համեմատի Արտաշեսյան արքայատոհմի նշանավոր արքաների ներքին և արտաքին քաղաքականությունը, եզրահանգումներ անի նրանց գործունեության վերաբերյալ:
20) Մեկնաբանի Ք.ծ.ա. II-I դդ. ռազմաքաղաքական հարաբերությունները, փաստարկված կարծիք հայտնի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:
21) Վերլուծի Արտաշեսյան թագավորության հզորացման, հայոց աշխարհակալության ստեղծման նախադրյալները, կործանման պատճառներն ու հետևանքները, անի եզրահանգումներ:
22) Համեմատի Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները Հայկազունի Երվանդունիների և Արտաշեսյանների օրոք:
23) Գնահատի Մեծ Հայքի Արտաշեսյան պետության դերը հայոց պետականության և համաշխարհային պատմության մեջ:
24) Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու, պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը
25) Ներկայացնի I դարի սկզբի և Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի առանցքային դրվագները, քրիստոնեության ծագումը, քրիստոնեական վարդապետության հիմքերը, Հայաստանում քրիստոնեության տարածման, Հայոց եկեղեցու ձևավորման և կայացման ընթացքը, ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում:
26) Նկարագրի Հայոց եկեղեցու վարչական կառույցը, նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը:
27) Նկարագրի Արշակունյաց թագավորության պետական կարգը, բանակը, առօրյա կյանքն ու կենցաղը և համեմատի արդի և նախորդ շրջանների իրողությունների հետ:
28) Մեկնաբանի ավատատիրության առանձնահատկությունները Հայաստանում:
29) Բնութագրի և համեմատի Արշակունյաց արքաների և ժամանակաշրջանի նշանավոր գործիչների գործունեությունը, կարծիք հայտնի նրանց գործունեության վերաբերյալ:
30) Բացատրի պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները, միասնական ձեռնարկումները Արշակունիների թագավորության շրջանում:
31) Վերլուծի արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը հայոց պետության զորեղացման և անկման գործընթացներում, կատարի եզրահանգումներ:
32) Գնահատի Արշակունյաց Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:

33) Արժևորի Հայաստանն իբրև առաջին քրիստոնյա պետություն, գնահատի քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:
34) Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու, պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
35) Հետազոտի տարածաշրջանի I-IV դարերի որևէ հուշարձան, փորձի կապեր գտնել հուշարձանի և տարածաշրջանի կամ համայնքի միջև:
36) Ներկայացնի V-IX դդ միջազգային և ներքաղաքական իրավիճակի փոփոխությունները, հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները:
37) Նկարագրի նախարարական կառավարման համակարգը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները, համեմատի նախորդ ժամանակաշրջանների հետ:
38) Բնութագրի և համեմատի V-IX դդ ազգային-ազատագրական պայքարի ակնառու գործիչների գործունեությունը:
39) Քննարկի V-IX դարերում հայ ժողովրդի միասնականությանը, հոգևոր ինքնուրույնությանը ու ինքնությանը սպառնացող մարտահրավերները և դրանց դիմագրավելու քայլերը, առաջարկի լուծումների սեփական տարբերակը:
40) Համեմատի և մեկնաբանի V-IX դդ ազգային-ազատագրական պայքարի շրջափուլերը, պայքարի ուղիների վերաբերյալ տարբեր դիրքորոշումները, կարծիք հայտնի դրանց վերաբերյալ:
41) Գնահատի V-IX դարերի ազգային-ազատագրական պայքարի արդյունքները՝ կարևորելով համաժողովրդական միասնական պայքարի նշանակությունը՝ դրված նպատակների իրականացման գործում:
42) Արժևորի V-IX դարերի պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
43) Ներկայացնի IV-IX դդ. ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացման հիմնական առանձնահատկությունները, ընթացքը, ուղղությունները, բնագավառները, ձեռքբերումները:
44) Ճանաչի IV-IX դդ. ազգային-մշակութային ակնառու գործիչների և ստեղծագործություններ:
45) Արժևորի գրերի գյուտը, կատարի եզրահանգումներ:
46) Գնահատի ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:
47) Գիտակցի մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
48) Հետազոտի իր համայնքի կամ տարածաշրջանի IV-IX դարերի պատմաճարտարապետական որևէ հուշարձան, փորձի կապեր գտնել հուշարձանի և տարածաշրջանի կամ համայնքի միջև:
49) Ներկայացնի Բագրատունյաց թագավորության պատմության առանցքային դրվագները:

50) Նկարագրի Բագրատունյաց թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի նախորդ և արդի իրողությունների հետ:
51) Բնութագրի Բագրատունի նշանավոր արքաների և աշխարհիկ ու հոգևոր գործիչների՝ պետության անվտանգության ամրապնդման ու հզորացմանն ուղղված ձեռնարկումները, կարծիք հայտնի նրանց գործունեության արդյունքների վերաբերյալ:
52) Վերլուծի համաշխարհային և տեղական պատմական մի շարք գործընթացների ազդեցությունը Անիի Բագրատունյաց թագավորության հիմնադրման, հզորացման և անկման գործընթացներում, անի եզրահանգումներ:
53) Քննարկի X-XI դարերում հայ ժողովրդի միասնականությանը, հոգևոր ինքնուրույնությանը ու ինքնությանը սպառնացող մարտահրավերները և դրանց դիմագրավելու քայլերը, անի եզրահանգումներ:
54) Գնահատի և արժևորի Անիի Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները:
55) Հետազոտի Անի մայրաքաղաքի կամ IX-XI դարերի պատմաճարտարապետական որևէ հուշարձան, առաջարկի տվյալ հուշարձանը աշխարհին հանրաճանաչ դարձնելու լուծումներ: հարգալից վերաբերմունք նորարարություն արժեհամակարգի վերաբերյալ:

2. «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրը

«Հայոց պատմություն» առարկայի ծրագրի հղում՝

https://escs.am/files/files/2022-12-08/95bc8c3b2193ab87da47a90c00aba231.pdf

3. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափորոշիչներ

Գնահատման չափորոշիչների հղում՝

https://iravaban.net/418029.html

4. Գրականության ցանկ

ա) Փաստաթղթային

1. Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:

2. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ: http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176088 10/12
3. Հանրակրթության պետական կրթակարգ, միջնական կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004:
4. «Հանրակրթության պետական կրթակարգ», ՀՀ կառավարության նիստի հ. 33 արձանագրային որոշում, 26.08.2004 թ.:
5. Հանրակրթական հիմնական դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր (6-9-րդ դասարաններ) (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թ. հունվարի 23-ի N 49-Ա/Ք հրաման):
6. Հանրակրթական ավագ դպրոցի «Հայոց պատմություն» առարկայի չափորոշիչ-ներ և ծրագրեր (ՀՀ կրթության և գիտության նախարարի 04.05.2009թ. N 381-Ա/Ք հրաման):
7. Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքի գնահատման ուսումնասիրություն, պատրաստ-վել է «Ի-Վի քոնսալթինգ» ՓԲԸ-ի և «Այբ» կրթական հիմնադրամի կողմից, ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» գրասենյակի պատվերով, Երևան, 2016:
8. Չափորոշիչներ՝ ՀՀ, NGSS, Էստոնիա, Սինգապուր, Ֆինլանդիա, Մասաչուսեթս, Կանադա, Cambridge GSE, IGCSE, Միջազգային բակալավրիատ, TIMSS ստուգա-թեստի ծրագիր:

բ) Առարկայական

<u>- սկզբնաղբյուրներ</u>

1. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
2. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987:
3. Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981:
4. Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989:
5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981:
6. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն.թուղթ Վահան Մամիկոնյանին, Երևան, 1982:
7. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Երևան, 1986:
8. Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971:
9. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1991:
10. Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:
11. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986:
12. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Անթիլիաս, 1977 /կամ ցանկացած հրատարակություն/:
13. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., Հայաստան, 1969:
14. Ղևոնդ, Պատմություն, Եր., Սովետական գրող, 1982:

15. Կարապետ Պալաթեցի, Ապաշխարություն, Ս.Էջմիածին, 1996
16. Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության, Երևան Նաիրի, 2002 /կամ ցանկացած հրատարակություն/
17. Ս.Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991:
18. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
19. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Եր., 1964:
20. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:
21. Կանոնագիրք Հայոց, հ.Ա, Եր., 1964, հ.Բ, Եր., 1971:

- **<u>գիտական և գիտահանրամատչելի</u>**

22. Ալիշան Ղ., Հայ հին հավատքը և հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
23. Անտոնյան Գ., Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր, Վանաձոր 2005 :
24. Ավագյան Է., Կորած գաղտնիք, Երևան, 1985:
25. Ավետիսյան Կ., Աշխարհագրական անունների բացատրական բառարան, Երևան, 1983:
26. Ավետիսյան Կ. և Ավետիսյան Ա., Հայրենագիտական էտյուդներ, Երևան, 1979:
27. Բդոյան Վ., Հայ ազգագրություն, Երևան, 1974:
28. Բեդիրյան Պ., Բառերի խորհրդավոր աշխարհում, Երևան, 1985:
29. Գաբրիելյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000:
30. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980:
31. Գրիգորյան Գ., Հին և միջնադարյան Հայաստանի պատմավիպական հերոսները, Երևան, «Լույս», 1990:
32. Գերման Կ., Աստվածներ, գիտնականներ, դամբարաններ, Երևան, 1971:
33. Դավթյան Շ., Սիսիանի բնակավայրի պատմությունը, Երևան 1997.:
34. Դևկանց Ա., Հազար տարվա բառ ու բան, Երևան, 1985:
35. Դիլանյան Ս., Մոռացված գանձերի արձագանքը, Մանկական հանրագիտարան, Երևան, «Արեգ», 2001:
36. Դուրգարյան Կ., Անվանագիրք, Երևան, 1985:
37. Եղիազարյան Հ., Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Երևան 1975:
38. Եղիազարյան Հ., Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան 1955:
39. Լալայան Ե., Երկեր, հ 1, 1983թ., Երկեր, հ 2, 1988:
40. Լիպս Յու., Իրերի ծագումը, մարդկության կուլտուրայի պատմությունից, Երևան 1957:
41. Խաչատրյան Հ., Արքայապատում, Երևան, 2000:
42. Խաչատրյան Հ., Հայագիտակ, Երևան, 1990, 1991:
43. Խաչատրյան Հ., Հայոց թագուհիներ, Երևան, 2001:
44. Խաչատրյան Հ., Հացապատում, Երևան, 1988:
45. Խաչատրյան Հ., Սոսյան անտառ, Երևան, 1988:

46. Խաչատրյան Հ., Վանատուր, Երևան, 1988:
47. Կուն Ն., Հունական լեգենդներ առասպելներ (ցանկացած հրատարակություն):
48. Հակոբյան Թ., Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրեր, Երևան, 1990:
49. Հակոբյան Թ.,Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987:
50. Հակոբյան Թ., Սովետական Հայաստանի քաղաքները, Երևան, 1977:
51. Հարությունյան Ա., Երևանը և շրջակայքը, Երևան, 2012:
52. Հարությունյան Ս., Հայ հին վիպաշխարհը, Երևան, 1987:
53. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
54. Ղուկասյան Ա., Հայրենի ավանդավեպեր, Երևան, 1985:
55. Մարգարյան Գ., Խաչատրյան Ա., Վայոց ձոր, Երևան 1980 :
56. Միրիջանյան Լ., Հայկյաններ, Երևան, 1986:
57. Մնացականյան Ստ., Երևանը և նրա շրջակայքը, Երևան 1971:
58. Մնացականյան Ստ., Վարպետաց Վարպետներ, Երևան 1982:
59. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, (ցանկացած հրատարակություն):
60. Չուգասզյան Բ., Ձեռագրերի աշխարհում, Երևան 1985:
61. Ջահուկյան Գ., Ձրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, «Կանչ», 1992:
62. Սանթրյան Վ., Մաշտոցի որդիները, Երևան, 1985:
63. Սահակյան Ս., Հերոսապատում, Երևան, 1990:
64. Սարգսյան Է., Անդունդների կանչը, Երևան, 1986:
65. Վալեսյան Լ., Նազարյան Խ., Հայաստանի աշխարհագրություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան, 1999:
66. Վասիլյան Վ., Առասպելներից մինչև Բյուրական, Երևան, 1985:
67. Վարդանյան Ս., Հայոց մայրաքաղաքները, Երևան, 1985:
68. Ուլուբաբյան Բ., Ձրուցարան, հ Բ, Երևան, 1988:
69. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Ես իմ անուշ Հայաստանի, «Էդիթ Պրինտ»:
70. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Ծաղկաքաղ հայկական հուշարձանների, «Էդիթ Պրինտ»:
71. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Սասնա տուն, Երևան, 2015:
72. Քյուքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ., Հայրենի պատմություններ, Երևան, 2017:
73. Գյուրջինյան Դ., Մատենիկ, Երևան, 2012:
74. Դիլանյան Ս., Հայոց սրբազան լեռները, Երևան 2012:
75. Դիցաբանական բառարան, Երևան, 1985:
76. Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ հանրագիտարան, հ 1-4, Երևան, 1984-87:
77. Հին Հռոմ, Երևան, 1958:
78. Հին աշխարհի պատմության ընթերցարան, Երևան, 1986:
79. «Ոսկեփորիկ» մանկական հանրագիտարան, Երևան, 1996:
80. Մանկական քրիստոնեական հանրագիտարան, Երևան, 1998:
81. Սասունցի Դավիթ էպոս (ցանկացած հրատարակություն):
82. Նյութեր համացանցից՝
http://armenianhistory.info/glossary3.htm,
https://www.armenica.org/,

https://www.encyclopedia.am/encyclopedia.php,
https://www.qahana.am/,
https://www.facebook.com/rubik.kocharian.7
https://www.facebook.com/groups/creationk?locale=ru_RU

գ) Մանկավարժական, մեթոդական

1. Հանրակրթական պետական չափորոշիչ, Երևան 2021.:
2. Հանրակրթության պետական կրթակարգը, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004թ:
3. Թամամյան Գ., Առաջադրանքներ և խնդիրներ հայ ժողովրդի պատմությունից, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1977:
4. Թամամյան Գ., Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրումը 7-10-րդ դասարաններում, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1986:
5. Թամամյան Գ., Պատմության ուսուցման արդյունավետության մի քանի հարցեր, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1972:
6. Թադևոսյան Պ., Միջառարկայական կապերը պատմության ուսուցման ընթացքում, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1971:
7. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն, 5-6 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, «Լույս» հրատարակչություն, Երևան, 2000:
8. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն, 7-8 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, «Լույս» հրատարակչություն, Երևան, 2000:
9. Ղուկասյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմություն, 6-7 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2013:
10. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն, 8-9 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2014:
11. Ղուկասյան Ա., Հանրակրթական դպրոցների պատմության ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր և ուսումնական նյութեր, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան, 2019:
12. Մանջրիկյան Ա., Երաժշտությունը պատմություն ուսումնասիրելիս, «Լույս» հրատարակչություն Երևան, 1980:
13. Ղուկասյան Ա., Թովմասյան Տ., Մարգարյան Հ., Պատմություն և հասարակագիտություն, ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2009:
14. Գյուլբուդաղյան Ա., Սարգսյան Ա., Գրիգորյան Դ., Գասպարյան Շ., Պատմության ու հասարակագիտության ուսուցիչների վերապատրաստումների պլան և նյութեր, «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2007:
15. Խաչատրյան Ս., Զոհրաբյան Ա., Առնաուդյան Ա., Վալերա Գ., Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցերը, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2005:

16. Առնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2004:
17. Հովհաննիսյան Գ. Զոհրաբյան Ա., Առնաուդյան Ա., Կառուցողական կրթության հիմքունքները և մեթոդները, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2004:
18. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Ալեքսանյան Լ., Պորուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2006:
19. Պորուկուրու Վ., Հմագործակցային ուսուցում, վերապատրաստման ձեռնարկ, երևան, 2006:
20. Վարդումյան Ս., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատում, ուսուցչի ձեռնարկ, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2003:
21. Առնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Սեմինար պարապմունքների ուղեցույց, ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար, «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2002:
22. Աստվածատրյան Մ., Առնաուդյան Ա., Վարդումյան Ս., Օհանովա Դ., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., Ինտեգրացված թեմատիկ միավորներ, «Լուսաբաց» հրատարակչություն, Երևան 2007:
23. Աստվածատրյան Մ., Առնաուդյան Ա., Վարդումյան Ս., Օհանովա Դ., Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, «Լուսաբաց» հրատարակչություն, Երևան 2007:
24. Հովհաննիսյան Գ. Զոհրաբյան Ա. Առնաուդյան Ա., Դավթյան Մ., Օհանովա Ի., Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն, ձեռնարկ ուսուցիչների համար, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2002:
25. Ամիջանյան Յու., Սահակյան Ա., «Մանկավարժություն», ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, «Մանկավարժ» հրատարակչություն, Երևան 2005:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 2

ԲԱԺԻՆ Ի. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ «ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԲՆԱԳԱՎԱՌԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 3

ԲԱԺԻՆ II. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 8

ԲԱԺԻՆ III. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ, ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿ, ԴԱՍԻ ՊԼԱՆ 37

ԲԱԺԻՆ IV. ՀԱՎԵԼՎԱԾ 64

1. Հանրակրթության պետական չափորոշիչ 64
2. «Հայոց պատմություն» առարկայի ծրագիրը 71
3. Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշներ 71
4. Գրականության ցանկ 71